

1904 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904 Թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

1. *Ռուսիոյ Թագաժառանգի ծնունդը.* . . . 733
2. *Փոխանակուած հեռագիրներ.* 735
3. *Քաղուածք ի Կոնդակաց Վեհ. Հայրապետի.* . . 736
4. *Քաղուածք Սինոդի օրագիրներից.* . . . 745

ԿՐՕՆԱԿԱՆ

5. *Աւետարանը և մեր քրիստոնէութիւնը. Ե. Տ. Վ. Մ.* . 751

ՄԱՅՐ ԱԹՈՌ

6. *Վեհափառ Հայրապետի ճանապարհորդութիւնը դէպի Սեւան և Ալէքսանդրապօլ Լևոն աբեղայ.* . . 758

ՏԱՃԿԱՀԱՅՔ

7. *Վանի կեդրոնական վարժարանը.* 761

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

8. *Պրաւօսլաւ եկեղեցի.* 765
9. *Կաթոլիկ եկեղեցի* 769

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

10. *Ժողովրդական խաղեր. Մ. Աբեղեան* . . . 772
11. *Ճանապարհորդ. Շիրակի գիւղերում. Ն. Ք. Նիկողոսեան* 785
12. *Մի քանի խօսք մեր ընթերցողներին. Զաւէն վ.* . 792

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

13. *Դաստիարակութիւն և կրթութիւն.* . . . 800
14. *Կաթի թթուութիւնը և նորա հետազօտելն ու խարդախելը. Գէորգ Ղազարեան.* 807

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1904—ՌՅԾԳ

Տարի ԼԷ.	ՍԵՊՏԵՄԲԵՐ	Համար Թ.

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Дозволено цензурою 21 сентября 1904 г. г. Тифлисъ.

ՌՈՒՍԻԱՅ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԻ ԾՆՈՒՆԴԸ

Յուլիսի 30-ին երկնային Նախախնամութիւնը մի նոր և մեծ ապացոյց տուեց իւր ամենառատ ողորմութեան դէպի Ռուսիան և նորա կայսերական տունը։ Այդ օրը ծնուեց Ռուսաստանի թագաժառանգը, որը ներկայ պատերազմի և անյաջողութեան ժամանակ երևաց իբրև մի ծիածան և մխիթարութեամբ լցրեց կայսերական տան հետ կապուած հաւատարիմ հպատակների սրտերը։

Դարաւոր սովորութեան համաձայն մեծամեծ շնորհներ բաշխուեցան գահոյքի բարձրութիւնից Ռուսաստանի չքաւոր ժողովրդին, զանազան յանցանքների համար դատապարտուածներին և այլն և այլն և որ ամենագլխաւորն է՝ վերացուեց մարմնական պատիժը, որը ճորտերի ազատութիւնից յետոյ ամբողջ 33 տարի մնացել էր Ռուսաստանում, կարծէք անընդհատ յիշեցնելով ռուս խեղճ և խաղաղասէր գիւղացուն այն սև օրերը, երբ նա ազնուականի և կալուածատիրոջ համար ոչ թէ մարդ չէր մարդկային ազատութիւններով և հոգով, երբ նա ոչ միայն ծեծւում և անասունի չափ աշխատում էր այլոց համար, այլ և վաճառքի առարկայ էր, ինչպէս գեղեցիկ կերպով նկարագրել է անմահ Գոգոլը իւր «Мортвыя души» աշխատասիրութեան մէջ, և փոխւում էր բաղէների և որսկան շների հետ։ Թէև ազատարար Աղէքսանդր II մեծ կայսրը դեռևս ազատել էր ռուս գիւղացին ճոր-

տութիւնից, բայց և այնպէս դեռ նրա պատիւն ու ինքնասիրութիւնը հաշուի չէր առնում, անտանից մեծ չէր համարում նրա հոգեկան յատկութիւնները և նրան փոխանակ՝ իբրև բանաւոր արարածի՝ խօսքով հասկացնելու իւր պարտքն ու իրաւունքը, հարկաւոր էր համարում ծեծը, մտրակը գիւղական հրապարակներում և կայլն ծեր ազնուական հրապարակախօսներ (Мещерскій, Комаровъ), որոնք առանց մարմնական պատժի չէին կարողանում ըմբռնել ռուս գիւղացուն, որոնք կարծում էին, որ մտրակն ու մուժիկը միասին են ծնւում և միասին էլ պէտք է մեռնեն։

Թագաւոր Կայսեր ամենաողորմած հրամանով վերջապէս վերացուեց ռուս գիւղացու գլխին կախուած անպատուաբեր մտրակը և նա էլ վերջնականապէս ազատուեց խաւար ժամանակներից և ճորտութիւնից մնացած ժառանգութիւնից։ Նա երբէք չի մոռանայ, որ Նորածին Ժառանգի առաջին մանկական ճիչը առիթ եղաւ մարդասէր և գեղեցիկ քայլի և միշտ կաղօթի, որ նա զօրանայ և զարգանայ և նրա կեանքի ընթացքում յառաջադիմի և ծաղկի Ռուսաստանը մտաւորապէս և բարոյապէս, և հաստատուն քայլեր անի քաղաքացիական հաւասարութեան և ազատութեան ճանապարհի վրայ, և երբէք առիթ չունենայ խախտելու ընդարձակ Ռուսիոյ աշխատող ազգաբնակութեան բարգաւաճման համար այնքան անհրաժեշտ խաղաղութիւնը, և ներկայիս նման սրով և արիւնով պաշտպանելու իւր քաղաքական շահերը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

Թագաժառանգի ուրախառիթ ծննդեան առթիւ Վեհափառ Հայրապետն իւր ուղարկած շնորհաւորական հե-

ռազմի առթիւ բաղդ ունեցայ ստանալու Թագաւոր Կայսրից հետեւեալ պատասխանը օգոստոսի 2-ին.

Մկրտիչ Առաջին Կաթողիկոսի.

Ի սրտէ շնորհակալ եմ Ձեզ եւ հօտին Ձերոյ վասն աղօթից եւ արտայայտեալ զգացմանց:

ՆԻԿՈԼԱՅ

Վեհափառ Հայրապետի շնորհաւորական հեռագիրն էր հետեւեալը.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ.

Երջանկութեամբ սրտի հաւաստի եղէ, զի Ամենակարողն Աստուած պարգեւեալ է կայսերական Մեծութեան Ձերոյ եւ Թագուհի Կայսրուհւոյ Թագաժառանգ՝ Օգոստափառ Կայսերազն Ալէքսէյ Նիկոլաեւիչ: Առթիւ այսօրինակ բաղդաւոր դիպուածոյ վասն համայն Ռուսաստանի միաբանութիւն նախաթոռ վանուց Էջմիածնի ի Միածնաէջ տաճարի վերառաքեաց գոհացողական մաղթանս առ Բարձրեալն:

Համակեալ խոր զգացմամբ մեծի ուրախութեան, եւ՝ լրութեամբ հօտիս աղօթեմք առ Ամենաբարձրեալն, զի շնորհեսցէ Կայսերական Մեծութեան Ձերոյ եւ Նորին Մեծութեան Թագուհւոյ Կայսրուհւոյ եւ Օգոստափառ Կայսերազն Թագաժառանգի կեանս երկարս՝ յերջանկութիւն համայն Ռուսաստանի:

Կայսերական Մեծութեան Ձերոյ մնամ ջերմեռանդն աղօթարար Կաթողիկոս ամենայն Հայոց ՄԿՐՏԻՉ Առաջին:

Ի 1-ն օգոստոսի 1904
Դիլիջան:

Բարձրագոյն հրամայուած է տօնել Նորին Կայսերական Բարձրութեան Ալէքսէյ Թագաժառանգի ծնունդը յուլիսի 30-ին, իսկ անուանակոչութիւնը հոկտեմբերի 5-ին։ Թագաժառանգի ծննդեան առթիւ երկիցս գոհացողական մաղթանք կատարուեց Ս. Էջմիածնայ տաճարում և հայոց բոլոր եկեղեցիներում։

Բ.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք·

Կոնդակ յանուն վարչութեան Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ, որով պատուիրեցաւ տալ Տ. Մամբրէ վարդապետի միանուագ գումար իբր պարգև վասն դասատուութեան ի հաշիւ ճեմարանի։ Թ. 495։

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ տալ անդամոյ նորին Տ. Մակար եպիսկոպոսի եռամսեայ արձակուրդ ի գնալ ի հանքային ջուրս Կովկասու վասն բժշկութեան անձին։ Թ. 501.

— Նորին, ընդ որում յղեցան պատճէնք ի գործոյ Հայրապետական Դիւանի՝ վերաբերելոյ բողոքանաց դժուայողաց վիճ. Կոնսիստ. հայոց Արցախայ։ Թ. 516.

— Յանուն վանահօր մենաստանին Սևանայ Դեր. Տ. Սարգիս եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ գնալ ի Ճամբարակ գիւղն և օծել զնորակառոյց եկեղեցին գեղջն։ Թ. 518։

— Յանուն Հոգ. Կառավար. հայոց Աղէքսանդրապօլու, որով պատուիրեցաւ շարունակել զտուչութիւն քսան և հինգ րուբլի ռոճկի Տ. Արսէն վարդապետի մինչ ցսեպտ. ամիսն տարւոյս։ Թ. 531.

— Յանուն առայն. Տեղապահի թեմին հայոց Ատրպատականի, որով լուծեցաւ պսակ բնակչի Ալատախանա գեղջ Ուրմիոյ անյայտացեալ Նազարայ Մնացականեան ընդ կնոջն Թագուհւոյ և թոյլ տուաւ վերջնոյս մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 536։

— Յանուն Ամէն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ որով պատուիրեցաւ տալ սաստել զխնդիր Խրիմեցի Խոս-տեղի Յակովբեան, եթէ արդարև Պետրոս վարդապետն Գրիգորեան պսակեալ է զկինն Պետրոսի ընդ այլում, յայն դէպս պատժել զվարդապետն և թոյլ տալ առնն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Թ. 538։

— Յանուն վեհ. Կոնսիստ. հայոց Վրաստ. և Իմեր. որով պատուիրեցաւ կարգադրել վասն տեղափոխելոյ զՇմաւոն քահանայն Բոբեան ի Գիտաբէգ գեղջէ ի Դանձակ ի տեղի հանգ. Բայտախտարեան քահանայի ըստ ցանկութեան ծխականաց հանգուցելոյն։ Թ. 551։

— Յանուն եկեղեց. խորհրդոյ հայոց Ս. Պետերբուրգի, որով առաջադրեցաւ տալ Տ. Յուսիկ վարդապետի Զոհրաբեան ճանապարհածախս մի հարիւր յիսուն ռուբլի վասն երթևեկութիւն Նորա յէջմիածին։ Թ. 559։

— Յանուն նորին, որով առաջադրեցաւ տալ յամիսն քսան ռուբլի մինչ ցաւարտումն ուսման ուսանողի համալսարանին Օդեսսայի Տիգրանայ Մելիք Թանգեան։ Թ. 562։

— Յանուն հաստատութեան նորակազմ հոգաբարձութեան աղօթատան հայոց Լոնդոնի։ Թ. 584։

— Յանուն վեհ. Կոնսիստորիային հայոց Վրաստ. և Իմեր., որով արտօնեցաւ Մարտիրոս ա. քահանայի Ամիրխանեանց յետ մահուն թաղիլ ի գաւթի ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց։ Թ. 591։

— Յանուն նորին, որով արտօնեցաւ բնակչուհոյ Վե-

լիոցիխէ գեղջ Նատալիայի Օհաննեանց յետ մահուն Թաղել ի գաւթի եկեղեցւոյ գեղջն առ ընթեր առնն: Թ. 592:

— Յանուն Հոգ. կառավար. հայոց Տաթևու, որով պատուիրեցաւ պահանջել ի Ստեփան աբեղայէ Քօլեան յընթացս հնգից ամաց ի հաշիւ պարտուց նորա, իբրև Նախկին գանձապահի, ի տարին 200 ր. Թ. 593:

— Յանուն վրճ. Ատենին Արցախայ, որով պատուիրեցաւ տալ պաշտօնապէս զհամախօսական վասն սանուց Հոգևոր Ճեմարանի Մ. Աթոռոյ՝ շուշեցի Նիկողայոսի Յովհաննիսեան և յետ առնալոյ զհամաձայնութիւն ծնողաց նորա վասն մտանելոյ որդւոյ իւրեանց ի շարս կուսակրօն հոգևորականութեան, յղել զհամախօսական ի Դիւան Վեհ. Հայրապետի: Թ. 597.

— Յանուն առաջն. տեղապահի Թեմին հայոց Ատրպատականի, որով պատուիրեցաւ կարգադրել հաստատել զնորոգ ձեռնադրեալ Համազասպ քհնյ. Պօղոսեան ի վերայ ժողովրդեան Խանագեան գեղջ վիճակին Ղարադաղու: Թ. 599:

— Յանուն Սինօդի Ս. Էջմիածնի, ընդ որում դարձուցանելով զօրագիր նորին վասն պատժոյ Ներսէս քահանայի Բախտամեանց Դաշուշէն գեղջ Ղարաբաղու, պատուիրեցաւ անապահանջ թողուլ զպարտսն և միայն դադարեցուցանելով զնա ի քահանայագործութենէ՝ յղել յաքսոր: Թ. 604:

— Յանուն Առաջնորդի հայոց Ամերիկայի, որով ընդունեցաւ ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ նախկին միաբան Վենետկոյ Տ. Պօղոս վրդ. Դաֆթանեան: Թ. 605:

— Յանուն Հոգ. կառավարութեան հայոց Գանձակայ, որով կարգեցաւ Անանիա քհնյ. Շիրակունի փոխահայր ուխտատեղւոյն Ս. Սարգսի: Թ. 616:

— Յանուն հայ ժողովրդեան Սուչաւա քաղաքի, ընդ որում յղեցաւ Ս. միւռոն: Թ. 621.

— Յանուն Սինօդի ս. Էջմիածնի յաղագս տալոյ զցուցակս ծառայութեանց Տ. Բարգէն և Տ. Իսահակ վարդապետաց։ Թ. 626.

— Յանուն վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ, որով կարգեցան անդամք Կառավարութեան Տ. Տ. Եղիշէ ծ. վարդապետն Մուրադեան, Բարգէն և Զաւէն վարդապետք, որ և կարգեցաւ վերջինս հիւրընկալ հիւրատան Մայր Աթոռոյ։ Թ. 628.

— Յանուն Հոգ. Կառավար. հայոց Գանձակայ, որով հրամայեցաւ տալ քարտուղարի Կառավարութեան ի տարին 500 ր. և գրագրին 250 ր.։ Թ. 636.

— Յանուն Փոխանորդի վիճակին Ն. Նախիջևանի, որով բեկանելով զպայմանն վանահօր Կարմիր վանուց, կռեալ ընդ Մօնդանի վասն նորոգելոյ զշինութիւնս վանուցն, պատուիրեցաւ կապել զնոր պայման առաւել շահաւէտ վասն վանուցն։ Թ. 638.

— Յանուն Առաջնորդի հայոց Բեսարաբիոյ, որով պատուիրեցաւ կարգադրել, զի եկեղ. խորհուրդն հայոց Ս. Պետերբուրգի տայցէ Իսահակ սարկաւագի յամսեան յիսուն րուբլի մինչ ցաւարտումն ուսման։ Թ. 639.

— Յանուն Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ, որով յանձնարարեցաւ ստանալ ըստ կտակի ի Տէր հանգուցեալ Մելքիսեդեկ Արքեպիսկոպոսի Մուրադեան զգեստս հանգուցելոյն և յղել այսր ի յանձնել վանուցն ս. Թարգմանչաց Գանձակայ։ Թ. 646.

— Յանուն Առաջնորդական խորհրդարանին Պարսկ-Հնդկաստանի, որով լուծեցան ի կարգէ և ի կոչմանէ քահանայութեան Թադէոս քահանայն Բոլորանցի և Գալուստ քահանայն Սանդխլարանցի վասն գայթակղեցուցիչ և եպերելի ընթացից նոցա։ Թ. 647.

— Յանուն Հոգ. Կառավ. հայոց Կարուց, որով պատուիրեցաւ տալ կարնեցի հիւանդ Վահանայ Սարգսեան

զերկու ամսականս միանուագ (30 ր.) և պատուիրել վանահօր Խծկոնից վանուց ընդունել զնա ի վանսն։ Թ. 663։

— Ցանուն գործակալի եկեղեց. հայոց Բագուայ, որով պատուիրեցաւ յղել ուսանող Ներսէս սարկաւագի Տ. Միքայէլեան 200 ր. օժանդակութիւն։ Թ. 668.

— Ցանուն վիճ. Կոնս. հայոց Վրաստ. և Իմերէթի, որով պատուիրեցաւ տալ գանձապահի Ատենին Սարգիս քահանայի Տիլյեան վարձատրութիւն ռուբլիս երեք հարիւր։ Թ. 669.

— Ցանուն վիճ. Կոնսիստ. Բեսսարաբիոյ, որով թոյլատրեցաւ Խարկովաբնակ նախկին կնոջն Սարգսի Խուդավերդեան՝ Բրաքինէի, մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 678.

— Ցանուն վիճ. Կոնսիստ. Արցախայ, որով պատուիրեցաւ վարել զվէճս կալուածոց Խօթայ վանից (և առհասարակ ամենայն եկեղեցական կալուածոց) ի կողմանէ Ատենին։ Թ. 679.

— Ցանուն Հոգ. Կառավար. Կարուց, որով լուծեցաւ պսակ տաճկաստանցի Խաչկայ Յարութիւնեան ընդ կնոջն Լուսիկայ Սարգսեան Խուլթիկ գիւղացւոյ Բաղէշ նահանգի ի պատճառս անյայտ բացակայութեանն առաջնոյն և թոյլ տուաւ կնոջն պսակել ընդ այօրինի կենակցին իւրում։ Թ. 680։

— Ցանուն Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ, որով տուաւ տեղեկութիւն զլուծմանէ յիշեալ պսակին։ Թ. 681.

— Ցանուն գործակալի եկեղեց. հայոց Բագուայ, որով պատուիրեցաւ թոյլ տալ բնակչի Գիւզան գեղջ Գեօքչա գաւառի Թովմասու Թադէոսեան մտանել յերկրորդ ամուսնութիւն։ Թ. 684.

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի, ընդ որում յղեցաւ համախօսական ժողովրդեան Հոռոմ գեղջ վան

ազատելոյ ի հարկատուութենէ զկարգընկեց Սրապիոն քահանայն Ղարաղաղարեան։ Թ. 694.

— Յանուն Հոգ. Կառավար. հայոց Կարուց, որով թոյլ տուաւ Գրիգորի Յարութիւնեան պսակիլ ընդ Լուսիկայ Բակէնդէրեանց։ Թ. 711.

— Յանուն վիճ. Կոնսիստ. հայոց Երեւանայ, որով պատուիրեցաւ տալ պ. Մկրտչի Պալեան յամին 25 ր. կենսաթոշակ և մի հարիւր րուբլի թեմակ. Հոգ. Դպրանոցէ տեղւոյն ի տարին։ Թ. 714.

— Յանուն վիճ. Կոնսիստ. հայոց Աստրախանի, որով պատուիրեցաւ թոյլ տալ ապօրինի կենակցաց՝ Գրիգորի Մահտեսեան և Էլմասի Գարագեօզեան պսակիլ ընդ միմեանս եթէ ունին նոքա զաւակունս։ Թ. 793.

— Յանուն Բարսեղ էֆէնտի Կ. Իսթանպօլլուեան Կ. Պօլսեցւոյ, որով յայտնեցաւ զստացմանէ յղեալ 20 օսմ. լիրայ գանձանակադրամոց Մ. Աթոռոյ։ Թ. 732.

— Յանուն Առաջնորդի հայոց Ամերիկայի, որով բարձաւ կոչումն և աստիճան ի Խադ. վարդապետէ ըստ ցանկութեան և խնդրանաց նորա։ Թ. 738.

— Յանուն առաջնորդական Տեղապահի Ատրպատականի, որով պատուիրեցաւ համոզել զԱննայն Խաչատրեան գնալ առ այրն իւր Մկրտիչն Սուլուխանեան ի համաքնակութիւն։ Թ. 739.

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ առաջադրել թեմակալաց և վիճ. ատենից կատարել յեկեղեցիս հայոց զմաղթանս առթիւ ծննդեան Թագաժառանգ Մեծ Իշխան Ալէքսէի Նիկօլաեւչի։ Թ. 744.

— Յանուն վիճ. Ատենին Երեւանայ, որով պատուիրեցաւ թոյլ տալ Տ. Դաւիթ և Տ. Կոստանդին քահանայից՝ քահանայագործել առ ժամանակ ցնոր տնօրէնութիւն։ Թ. 756։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրե-

ցաւ անպահանջ թողուլ զ299 ր. ի Մեսրոպ քահանայէ Թալանեան Զարնջի գեղջ, յայտնելով եթէ նա արդէն վճարեալ է զայն վանական կառավարութեան Մայր Աթոռոյ։ Թ. 763.

— Ցանուն վիճ. կոնսիստ. հայոց Երեւանայ, որով պատուիրեցաւ տալ փաստաբան պ. Սոկրատայ Մելիք Ադամեան վարձատրութիւն վասն պաշտպանութեան եկեղեց. կրպակաց Ալէքսանդրապոլի և Ղամարլուայ, այլ և յղել ի նահանգ. դատարան տեղւոյն զ100 ր. ի ծախս ճանապարհի քննչի։ Թ. 766.

— Ցանուն Հոգ. կառավար. հայոց Կարուց, որով լուծեցաւ պսակն տաճկաստանցի Սեդրակայ Յակոբեան ընդ կնոջն Ասլանի, կատարեալն յանչափահաս վիճակի, և թոյլատրեցաւ առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում և կնոջն պսակիլ ընդ ապօրինի կենակցին իւրում։ Թ. 768.

— Ցանուն վիճ. կոնսիստ. հայոց Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ տալ նպաստ վանուցն Սանահնայ ի վիճակային արդեանց րուբլի 300։ Թ. 770.

— Ցանուն Առաջնորդի հայոց Ամերիկայի, որով պատուիրեցաւ յանձնել Տ. Մատթէոս վարդապետի Անճէմեան պաշտօն հովուութեան։ Թ. 776.

— Ցանուն հոգաբարձութեան եկեղեց. հայոց Ս. Պետերբուրգի, որով յանձնարարեցաւ նպաստել տ. Մեսրոպ քահանայի Տաւարշեան Իգդիր աւանի ի ծախս բժշկութեան։ Թ. 783.

— Ցանուն վանահօր Սանահնոյ վանուց, որով պատուիրեցաւ տալ Զ-րդ աստիճ. սարկաւագութեան Տփխիսեցի Սարգսի Ալիխանեանց։ Թ. 784.

— Ցանուն վիճ. կոնսիստ. հայոց Երեւանայ, որով լուծեցաւ պսակն բաղիշեցի Մխոյի Կարապետեան ընդ կնոջն Ռալուքայի Աբգարեան վասն դրժելոյ առն զուխտ

պսակին, զրկելով զնա յիրաւանց ամուսնութեան և տալով իրաւունս կնոջն մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Թ. 792.

— Յանուն Առաջնորդին Հայոց Բեսսարաբիոյ, որով պատուիրեցաւ ընդունել զկաթոլիկ Եօրդանն Զիլաշուէլի ի ծոց Հայոց եկեղեցւոյ։ Թ. 794.

— Յանուն վիճ. Կոնսիստ. Վրաստ. և Իմերէթի, որով պատուիրեցաւ թոյլ տալ Պօղոսի Յ. Ղուկասեան Բագուեցւոյ կառուցանել ի գերեզմանատան Խօջիվանից չիրիմ մարմարէ ի վերայ դստեր քեռն իւրոյ։ Թ. 802.

— Յանուն Առաջնորդական Տեղապահին Աստրախանի, որով լուծեցաւ պսակն Աղիղի Մալխասեան ընդ Մարիամու Զիրոյեան վասն դրժելոյ վերջնոյս զուխտ պսակին, թոյլատրելով առն մտանել ի նոր ամուսնութիւն և զրկելով զկինն յիրաւանց պսակին։ Թ. 807.

— Յանուն պ. Տեսչի Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ, ընդ որում յղեցան խնդրագիրք ընդունելութեան աշակերտաց վասն ենթարկելոյ հարցաքննութեան։ Թ. 813.

Գ.

Հայրապետական պարգևք.

Շնորհեցաւ լանջախաչ ականակուռ վարդապետական Տ. Եղիշէ Ծ. վարդապետի Գալֆայեան, Առաջնորդի վիճակին Գաղատիոյ, ըստ միջնորդութեան Ամեն. Պատրիարքին Կ. Պօլսոյ։ Թ. 683.

Շնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան միաբանի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Թանդոյեան Տփխիսեաց տ. Ներսէս Քահանայի Ղամազեան։ Թ. 665.

Շնորհեցան իրաւունք կամիլաւկայից գործակալին Սուրամի Յովսէփ քհնյի. Առիւծեան, Ներսէս աւագ քհնյի. Գիւլնազարեան գործակալին Աշտարակայ, Կորիւն քահա-

նայի Պանջուլաղեան անդամոյ Կոնսիստորիային Երեւանայ եւ Կարապետ քհնյի. Մալխասեան Բաթում քաղաքի։ Թ. 510, 575, 576, 577։

Շնորհեցան իրաւունք քահանայական լանջախաչից՝— Միքայէլ քհնյի. Տ. Մկրտչեան Ոնդամոյ գեղջ Գարաչիչաղայ. Ներսէս քհնյի. Հերթեւցեան Լուգանսկ քղքի. Մեսրոպ քհնյի. Տ. Ոսկանեան եւ Յովհաննէս քհնյի. Տ. Յարութիւնեան Բագու քղքի. Թ. 545, 601, 613, 685։ Ղեւոնդ քահանայի Սաֆրազեան Վան քաղաքի, Յարութիւն քահանայի Միրիմանեան Ախալքալաք գեղջ Գորուսյ, Աբգար քահանայի Բերադեանց Օնի գեղջ, Էմմանուէլ քահանայի Նազարեան Մոսկուայի, Մկրտիչ քահանայի Ադուլեան Ալէքսանդրապօլ քաղաքի, Մկրտիչ քահանայի Տիրացուեան Մծարայ գեղջ Սոխումի։ Թ. Թ. 671, 693, 706, 709, 713, 777.

Դ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք։

Կոնդակ օրհնութեան եւ մխիթարութեան յանուն Կ. Պօլսեցի եղբարց Վահրամայ եւ Գէորգայ Թորգոմեանց յաղագս մահու մօր նոցա։ Թ. 539։

— Յանուն ամուսնոց Գրիգորի եւ Մարիամու Բաղդասարեանց. հիմնադրաց Աստղեան Որբանոցին Պրուսայի առթիւ երեսնամեայ գործունէութեան նոցա։ Թ. 540։

— Յանուն Գ. Պօղոսի Աճէմեան Լուգանսկ քաղաքացւոյ յաղագս ինչ ինչ բարեգործութեանց եւ նուիրաբերութեանց։ Թ. 585։

— Յանուն հայ ժողովրդեան Լուգանսկ քաղաքի, որով նուիրեցաւ աղօթարան տեղւոյն մասն մի ի պատուական նշխարաց Ս. Գէորգայ Զօրավարի։ Թ. 586։

— Յանուն ժողովրդեան Դեր գեղջ Հ. Նախիջեւան գաւառի վասն նուիրաբերելոյ ղինձաուն բուրվառ։ Թ. 705.

— Յանուն Տ. Բաբգէն ծ. վարդապետի Կիւլէսէրեան վասն յղելոյ երից երկասիրութեանց նորին՝ «Քարոզներ», «Ծովք», և «Կոլոտ»։ Թ. 733.

— Յանուն Նախագահի և անդամոց խնամակալութեան Կեդր. վարժարանին Վանայ վասն ստացման նորոգ շինութեան ուսումնարանին։ Թ։ 743։

— Յանուն տիկին Դարիայի Յովհաննիսեան վասն մահուան ամուսնոյ նորա Աբգարու Յովհաննիսեանի։ Թ. 801.

⁂

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունիսի 11 ին Սինոդը մերժեց Գանձակեցի Մարտիրոս Նարաթեանի և Անանիա քհնյ. Շիրակունու պահանջները, որոնք ներկայացնելով Հաղարծնի վանուց վանահայր հանգուցեալ Պօղոս վարդապետի տուած մուրհակների պատճէնները, խնդրում էին բաւականութիւն տալ իրենց պահանջներին՝ առաջինին վճարելով 600, իսկ երկրորդին երկու հարիւր ռուբլի։

Յունիսի 16 ին Սինոդը լսելով կառավարչապետի դիւանի գրութիւնը՝ նոյն տարուայ ապրիլի 15 ից № 4957, որով յայտնում է, որ Ներքին գործոց Նախարարութիւնը թոյլ չի տուել Վլադիկավկազի աղքատախնամ հոգաբարձութեան հիմնարկութիւնը և չի հաստատել Սինոդի միջոցաւ մատուցած թեմակալ առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսի ներկայացրած կանոնադրութիւնը, որոշեց կարճել այդ առթիւ սկսուած գործը և տեղեկագրել այդ մասին Աստրախանի թեմի առաջնորդին։

Նոյն թուին Սինոդը լսեց Ախալցխայի ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխականների խնդիրը և Վեհափառ Հայրապետի մակագրութիւնը Ստեփաննոս Աշըկեանի խնդրագրի վրայ

նրան յիշեալ եկեղեցու վրայ քահանայ ձեռնադրելու մասին և տանելով ընծայացուին արժանի այդ պաշտօնին. որոշեց գրել Թիֆլիզի ու Նահանգապետին օրինական թոյլտուութեան համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց յանդիմանութիւն կարդալ Առաքել գիւղի ծխատէր Մակար քահանայ Գրիգորեանցին Ղարաբաղի Թեմական Կոնսիստորիայի միջոցաւ նոյն այդ Թեմական Ատեանն ի զուր ամբաստանելու համար։

Նոյն թուին Սինոդը լուծեց տփխիսեցի Ռուբէն Մանդակունու պսակը Հայկանուշ Սարգսեանի հետ և իրաւունք տուաւ Ռուբէնին նորից ամուսնանալու։

Յունիսի 18ին Սինոդը թոյլ տուեց Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Ուզուն Օբա գիւղացի Սրապիոն Տէր Յակոբեան Տէր Մաթէոսեանցին և վերադարձրեց ընծայացուի վկայագիրը։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Ախալքալաքի գաւառի Դոմ գիւղացի Պօղոս Յակոբեան Դերջանեանցին և ձեռնադրել քահանայ Կարսի վիճակի Ծպնի գիւղի վրայ, որի մասին և հրաման արձակել յիշեալ Կոնսիստորիային, վերադարձնելով ընծայացուի վկայականները։

Յունիսի 21ին Սինոդը քահանայութեան արժանի համարեց Տիգրան Տէր Եսայեան Տէր Մելքիսեդեկեանցին և որոշեց գրել գլխաւոր շտաբի նորա անունը պահեստի զինուորների ցուցակից հանելու, որպէս զի նրան քահանայ ձեռնադրելու հրաման տայ Ղազախի գաւառի Բաղանիս գիւղի վերայ։

Նոյն թուին Սինոդը լսելով Օտար Դաւանութեանց Դեպարտամենտի № 3098 գրութիւնը յունիսի 5ից Ներսէս քահանայ Ղամազեանին Աննայի չքանշանի երրորդ աստիճանով վարձատրելու մասին, որոշեց ուղարկել չքա-

նշանն ըստ պատկանելոյն և պահանջեց քան բուըլէ շքանշանների կապիտուլին ներկայացնելու։

Որովհետև Գանձակի պ. նահանգապետը համաձայնութիւն չէր տուել Գրիգոր Առաքելեանին հոգևորականութեան մէջ ընդունելու և Հղորդ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, ուստի Սինոդը յունիսի 21 ին որոշեց կարճել նրա մասին սկսուած գործը և վկայականները վերադարձնել ըստ պատկանելոյն։

Յունիսի 21 ին Սինոդը որոշեց հետևեալը. որովհետև Ամրուան գիւղի Յարութիւն քահանան առանց օրինաւորապէս պսակելու՝ արձանագրել է Ծերիկ գիւղացի Վանէս Բաղդասարեանի և Զարուհւոյ պսակը և այդպիսով կատարել կեղծիք, ուստի յանձնել նրան Գանձակի նահանգական դատարանի դատախազի միջոցաւ մարմնաւոր դատաստանի, իսկ յիշեալ անձանց պսակի լուծումն թողնել մինչև դատարանի վճիռը։

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել Նոր-Բայազիդի գաւառի Դդմաշէն գիւղացի Սարիբէկ Մանուկեանի և Եազօ Մատոյեանի ամուսնալուծութեան գործը և հրամայեց Երևանի Կոնսիստորիային յորդոր կարդալ նրանց, որ հաշտուին և համերաշխ ապրեն իրար հետ։

Նոյն թուին Սինոդը մերժեց Շարուր Դարալագեազի գաւառի Փաշալու գիւղի բնակիչ Կարապետ Ստեփանեանի խնդիրը՝ ամուսնալուծութեան մասին և հրամայեց Երևանայ Կոնսիստորեային՝ առաջարկել խնդրատուին՝ ներողամտութեամբ վարուել կնոջ հետ և ընդունել իրեն մօտ, հակառակ դէպքում գործը վերադարձնել Սինոդ։

Յունիսի 23 ին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Նոր-Բայազիդի գաւառի Ալափարս գիւղացի Արիստակէս Գալստեանցին Երևան քաղաքի ս. Զօրավար եկեղեցուն սպասաւորելու համար և հրամայեց վերադարձնել նրա վկայականները։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երեւանի Կոնսիստորիային հոգեւորականութեան մէջ ընդունել Կալեր գիւղացի Պապ Տէր Գրիգորեանցին Մազրա գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար և այս մասին որոշեց հրաման տալ յիշեալ Կոնսիստորիային՝ վերադարձնելով ընծայացուին վկայականները։

Նոյն թուին թոյլատրեց Շամախու Կոնսիստորիային հոգեւորականութեան մէջ ընդունել Շամախու գաւառի Գիւրջահան գիւղացի Յովակիմ Տէր Ներսիսեան Փիրվերդեանցին նոյն գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, որի մասին և որոշեց հրաման տալ թեմական առաջնորդին։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի դատաւ Սուրմալուի գաւառի Իգդիր գիւղացի Ռուբէն Տէր Թովմասեանին և որոշեց հայցել Երեւանի պ. Նահանգապետի հաւանութիւնը։

Նոյն թուին թոյլատրեց Երեւանի Կոնսիստորիային հոգեւորականութեան մէջ ընդունելու Զանգեզուրի գաւառի Մինքեանդ գիւղի բնակիչ Յակովբ Տէր Մինասեանին նոյն գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, որի մասին և հրաման արձակեց յիշեալ Կոնսիստորիայի անուամբ՝ վերադարձնելով ընծայացուի վկայականները։

Թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային ընդունել հոգեւորականութեան մէջ Խնձորիսկ գիւղացի Ներսէս Տէր Իսրայէլեանցին և ձեռնադրել քահանայ յիշեալ գիւղի վերայ։

Նոյն թուին Սինոդը լուծեց Սոֆիա Յովակիմեանի և Ենգիբար Օհանեանի պսակը և իրաւունք տուաւ Սոֆիային նորից ամուսնանալու։

Յունիսի 25 ին Սինոդը որոշեց ընդունել հոգեւորականութեան մէջ Շուշիքէնդ գիւղացի Աղէքսանդր Թարխանեանին և հրամայեց Ղարաբաղի թեմ. Կոնսիստորիային ձեռնադրել նրան քահանայ Շուշի քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխականների վրայ։

Նոյն թուին Սինօդը քահանայութեան արժանի համարեց Կարսի Նահանգի Ղարամահմատ գիւղի բնակիչ Ոսկան Տէր Պետրոսեանին և դիմեց Կարսի զինուորական նահանգապետին՝ օրինական թոյլտուութեան համար։

Նոյն թուին Սինօդը որոշեց թոյլ տալ Զաքարիա քահանայ Յովհաննիսեանին նորէն քահանայագործել, որի մասին և հրաման արձակել Թիֆլիզի Կոնսիստորիայի անունով։

Յունիսի 28 ին Սինօդը մերժեց Իմանշալու գիւղի բնակիչների խնդիրը Խաչատուր Յովսէփեանին և Սողոմոն Շահինեանցին քահանայ ձեռնադրելու մասին նրանց թերուս լինելու պատճառով, իսկ Վաղարշակ Տէր Ղազարեանի համար որոշեց պատուիրել Երևանի Կոնսիստորիային՝ կազմել համախօսական և մատուցանել Սինօդ։

Յունիսի 30 ին Սինօդը հրամայեց Աստրախանի Կոնսիստորիային ընդունել Կարասուբազար քաղաքի բնակիչ Յովհաննէս Աբրահամեանին հոգևորականութեան մէջ՝ որպէս սպասաւոր Արմաւիր աւանի եկեղեցւոյ։

Նոյն թուին Սինօդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային ընդունել Կարսի վիճակի Խափանլի գիւղի բնակիչ քրդուհի Զարէ Ահմէդ զզուն հայ լուսաւորչական եկեղեցու ծոցը։

Յուլիսի 7 ին Սինօդը ոչ մի հիմք չգտնելով Մկրտիչ Սուլխանեանի և Աննա Խաչատրեանի ամուսնութիւնը լուծելու, մերժեց Մկրտիչ Սուլխանեանի խնդիրն այդ մասին. տեղեկագրեց նրան իւր վճիռը Աստրախանի Կոնսիստորիայի միջոցաւ և որոշեց ամենախոնարհաբար դիմել Վեհափառ Հայրապետին, որ պատուիրի Դաւրէժի թեմակալ Առաջնորդին յորդոր կարդալ Աննա կնոջը, որ համաձայնի երթալ և բնակիլ ամուսնու հետ։

Նոյն թուին Սինօդը լուծեց Շամախու թեմի Ղալագեայ գիւղի բնակչուհի Թամամ Ստեփանեանի պսակը

Բաղիշ Ստեփանեանի հետ՝ տաժանակիր աշխատանքների դատապարտուած լինելու պատճառով և իրաւունք տուաւ Թամամին նորից ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի յայտարարութիւնը սոյն տարուայ յունիսի 21 ից № 2439, որոշեց հրամանագրել Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային ենթարկել Կուկիոյ ս. Աստուածածին եկեղեցու ծխատէր Տէր Աղէքսանդր քահանային եկեղ. ապաշխարանաց երեք ամիս ժամանակով և ուղարկել Հաղբատի վանքը, իսկ եթէ քահանան նորից ըմբոստանայ և չուզենայ գնալ, այդ դէպքում ուղարկել նրան մարմնաւոր իշխանութեան միջոցու և հետեւանքի մասին յայտնել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի յայտարարութիւնը, քահանայութեան արժանի գտաւ Դանիէլ Տէր Սարգսեանին և որոշեց գրել Գանձակի Նահանգապետին հարկաւոր թոյլտուութեան համար ընծայացուին Կճօղուտ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար։

Նոյ թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Սուլթանբէկլու գիւղացի Մնացական Բաբայեանցին և ձեռնադրել նրան քահանայ Նախիջևանի գաւառի Նոր-Մաղրա գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Գեօլ գիւղացի Յովհաննէս Տէր Կարապետեանին և որոշեց գրել Երևանի պ. Նահանգապետին՝ հարկաւոր թոյլտուութեան համար։

Յուլիսի 12 ին Սինոդը որոշեց թոյլ տալ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Կոնսիստորիային ընդունել Օդեսայի բնակչուհի հրէուհի Սարրա-Այիդա Զայնբերգին Հայաստանեայց եկեղեցու ծոցը՝ ճշտիւ պահպանելով հրէից մկրտութեան համար սահմանած կարգադրութիւնը։

Նոյն թուին Սինոդը որոշեց մատուցանել Վեհափառ Հայրապետին Իսահակ Տէր Միքայէլեան և Բաբգէն Աղաւելեան վարդապետների ծառայութեանց ցուցակները Նորին Սրբութեան առաջադրութեան համաձայն։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ծէրէլըա գիւղացի Ծերովբ Սիմէօնեան Զիփինեանցի և Մաքրուհի Գրիգորեան Սիմէօնեանի պսակը խնամութեան չորրորդ աստիճանում, որի մասին և հրաման տուաւ Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային։

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԸ ԵՒ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

> *Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ը՛դ ձեզ՝ հոգի է և կեանք։ Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւատան, քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ. ով են այնոքիկ, որ ոչն հաւատան, և ով այն է՝ որ մատնելոցն է զնա։*
>
> Յովհ. Աւ. Զ. 4—66.

Մօտաւորապէս 1874 տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ հնչուեց Աւետարանի քարոզը Հրէաստանում, երբ Աստուածորդին՝ հակառակ յունական և հռոմէական հաւատոյ և գիտաբանութեան, որոնք ի դէմս աստուածների ընդունում էին և պաշտում Օլիմպոսի մարդաբնոյթ բնակիչներին, գոչեց.—Հոգի է Աստուած և Նրան պէտք է պաշտել հոգով և ճշմարտութեամբ։ Պաշ-

տամունքի ձևը որոշելով անձամբ և իւր երկրային կեանքն հէնց այդ պաշտամունքով անցկացնելով. շատ գեղեցիկ կերպով ցոյց տուաւ, որ Աստուած պաշտել՝—նշանակում է սիրել ընկերոջը, վաճառել ամբողջ ունեցածը և տալ չունևորներին, չարութիւնը հատուցանել բարութեամբ և վերստին ծնուելով սուրբ հոգով, աստուածային կատարելութեան ձգտել։

Բայց սոյն յօդուածում մենք նպատակ չունինք քրիստոնէական վարդապետութեան պահանջների մասին խօսելու, որովհետև նրանք նիւթ կլինեն մեր յետագայ յօդուածների. այլ ուզում ենք կանգ առնել և մի հայեացք ձգել, թէ քսաներորդ դարում ինչումն է կայանում մեր քրիստոնէութիւնը. գիտութեան և գրքի այս հսկայական յառաջադիմութեան ժամանակ որքան ենք հետաքրքրւում մեր պարծանաց գերագոյն առարկայով և ինչ չափով ենք հետևում, ինչպէս ենք հասկանում այն երկնային վարդապետութիւնը, որով հպարտանում ենք, հիմք համարելով մեր քաղաքակրթութեան՝—օրէնսդրութեան և ամենօրեայ կենցաղավարութեան։ Քսաներորդ դարու շէմքում որքան համապատասխան է մեր կեանքը մեր դաւանած վարդապետութեան՝ քրիստոնէութեան պահանջներին։

Ո՞վ չը գիտէ, որ մարդիկ երբէք այնպիսի հակասութեան մէջ չեն եղել Աւետարանի և խղճի պահանջների դէմ, որպիսի հակասութեան մէջ գտնւում են այժմ։

Ո՞վ չը գիտէ, որ երբէք մարդիկ այնքան անհաւատար չեն եղել, ինչպէս մեր օրերում, այնքան պակասաւոր արդարադատութիւն չեն ունեցել՝ ինչպէս այժմ մեր կեանքի և յանցանքների բարդութեան, տեսակների բազմութեան և ընտրած ճարպիկ միջոցների շնորհիւ։ Մի՞թէ երբ և իցէ այնչափ սուտ է խօսուել յանուն ճշմարտութեան, որչափ խօսւում է մեր օրերում. մի՞թէ երբ և իցէ այնքան կեղծիք է կատարուել յանուն շիտակութեան, ինչպէս այժմ, մի՞թէ երբ և իցէ այնպիսի անհաւատութիւն է սերմանուել յանուն հաւատոյ, ինչպէս մեր օրե-

բում և այնչափ բարոյական քայքայումն է տիրել քրիստոնէից մէջ, ինչպէս որ այժմս է. ինչ է այս բոլորի պատճառը և ուր պէտք է որոնել այն։

Չէ՞ որ մենք ուսում ենք առնում, կրթւում ենք հազարաւոր գրքեր ենք կարդում, ուսումնասիրում տասնեակ առարկաներ և այս բոլորը նրա համար, որ կարողանանք ստեղծել կրօնական բարոյական հասարակութիւն։ Չէ՞ որ այս բանին է ծառայում կրթական գործի համար ծախսուող միլիօնների գումարը, դիրքն ու մամուլը, օրէնքն ու դատարանը, դպրոցն ու եկեղեցին։ Այս ինչպէս է, որ փոխանակ իրական և զգալի հետևանքների հասնելու կամ կրիայի քայլերով ենք շարժւում, կամ շատ անգամ յետադիմում ենք։ Վերցրէք յանցանքների բազմացած տեսակները, մեր օրէնքների բարդութիւնն ու միևնոյն ժամանակ անբաւարարութիւնը, վերցրէք յանցաւորներին, նրանց ծագումը, մտաւոր պաշարը, գործած յանցանքների մեծութիւնն ու շարժառիթները և դուք շատ էլ մխիթարական եզրակացութեան չէք գալ։ Եթէ համեմատենք քաղցած և անկիրթ մարդկանց գործած յանցանքների թիւն ու տեսակը կրթուած և ապահով շատ անգամ հազարներ ստացող համալսարանական և այլ մասնագիտական դպրոցների նշաններով կրծքները զարդարած մարդկանց գործած յանցանքների հետ, հաւատացած եղէք, որ առաջինների անպայման կը չքանան, շատ խղճուկ տեղ կը բռնեն։ Եւ այս բոլորը տեղի ունի քրիստոնեայ հասարակութեան մէջ, այնտեղ, ուր պարծենում են քրիստոնէական քաղաքակրթութեամբ, ուր հաւակնաբար իրենց կոչում են տգէտ ժողովրդների մէջ քրիստոնէական ուսումն ու քաղաքակրթութիւն տարածող և լուսաւորութեան առաքեալ։ Եւ իրաւ շատ անգամ տարածում են, բայց ոչ լոյս, ոչ քաղաքակրթութիւն, ոչ քրիստոնէական մարդասիրութեան պահանջած կեանքն ու կենցաղավարութիւն, այլ քայքայումն, բարոյական անկումն, նիւթական կեղեքումն ու խաբէբայութիւն, հալածանք և ստրկութիւն։

Ի՞նչ է պատճառը, ինչու արդեօք տեղի ունեն այսպիսի հակառակ երեւոյթներ, ինչու երբեմն նոյն իսկ Աւետարանի պաշտօնեաները հակամարդկային գաղափարներով լցուն, մի միայն հալածանք և ատելութիւն, սուր ու տառապանք են քարոզում այս կամ այն ազգի այս կամ այն ժողովրդի դէմ։ Նորերս մի կաթոլիկ քահանայ Իռլանդիայում կոչ էր արել հրէաներին անխնայ հալածելու ու ոչնչացնելու։ Աւելի լաւ վիճակի մէջ չէ քրիստոնէից յարաբերութիւնը քրիստոնեայ ժողովրդների հետ և այնտեղ, ուր որ պէտք է թագաւորէր սէր և հաւասարութիւն, աշխատանք և խաղաղութիւն, մենք տեսնում ենք թշնամութիւն, անհաւասարութիւն, ծուլութիւն, խռովութիւն և զրկանք, ինչու համար է այս այսպէս, ինչու են տեղի ունենում այսպիսի հակառակ երեւոյթներ մեր կեանքի մէջ։

Որովհետև դեռ եւս սուրբ գիրքը, Աւետարանը չի նուաճել, չի գրաւել իր արժանաւոր տեղը մեր տանն ու դպրոցում, հասարակական, ընտանեկան և անհատական կեանքում։ Նրան մեր կրթութեան ու կենցաղավարութեան ժամանակ աւելի պակաս նշանակութիւն է տրւում քան մի որ և է աշխարհային հեղինակի, քան որ և է առակախօսի՝ Եզովպոսի, Լաֆոնտէնի կամ Կրիլովի առակներին։ Մինչդեռ մեր ուսանող սերունդը բերանացի գիտէ յիշեալ հեղինակների առակները, մինչդեռ նա ամօթալի և տգիտութեան ապացոյց է համարում, եթէ մէկը չի յիշում խաչակրաց արշաւանքների թուականը, Սեզոստրիսի թագաւորութիւնը, Փիւնիկեցւոց գիւտերը, Սցեւոլայի քաջագործութիւնը կամ Օսգոթների և Վեսգոթների արշաւանքը, վերածնութեան, ֆրանսիական յեղափոխութեան, արիւնռուշտ Նապոլէոնի և կամ նրա կատարած արիւնոտ գործերի շարքն ու ժամանակը, մինչդեռ նա տգէտ է համարւում և ամօթից կարմրում է Ռուսսօին, Մոլիէրին, Հիւգօին, Մոպասանին, Զօլային, Շէքսպիրին, Նիցշէին, Գարտմանին, Դարւինին չը ճանաչելը, նրանց երկերից որ և է գլխաւորի հետ ծանօթ չը

մնելը, մինչդեռ մեզանում ոգէտ է համարւում և կը համարուի Սրբովեանին, Գամառ Քաթիպային, Նազարեանին, Նալբանդեանին, Րաֆֆուն և այլ ժամանակակից սովորական միջակ գրողներին անծանօթ հայ քրիստոնեան, մէկ հարցրէք նրանից, արդեօք նրա գրադարանում կայ Աւետարանը, նա երբ և իցէ աշխատել է ուշադրութեամբ կարդալ այն, երբ և իցէ իրեն նեղութիւն տուել է փոքր ինչ ծանօթանալու Աւետարանի վարդապետած սկզբունքների հետ, երբ և իցէ նեղութիւն տուել է իրեն հասկանալու թէ ինչ ահագին սարեր կան իւր կեանքի և Աւետարանի պահանջների մէջ և դուք պատասխան կըստանաք, որ ձեր խօսակիցը զարգացած, եւրոպական հեղինակներից ճառող և իրեն եւրոպական Լուսակիր համարող ինտելիգենտը՝ ոչ թէ ծանօթ չէ Աւետարանին, ոչ թէ չի կարդացել և կարիք էլ չի զգացել կարդալու կեանքի այդ ամենամեծ գիրքը, այլ ուղղակի աւելորդ է համարում, գուցէ նոյն իսկ ստորացուցիչ եւ խաւարամտութեան ապացոյց, բայց հարկ եղած միջոցին պարծենում է քրիստոնէութեամբ և միևնոյն ժամանակ դողանում է, կեղեքում, ստում, դաւաճանում, չնանում և հէնց այդ է ընդունում և այդպէս է հասկանում կեանքը, կեանքի վարդապետութիւնը։

Դրանից լաւ և հաստատուն տեղ չունի Աւետարանը նաև դպրոցներում, նոյն իսկ հոգևոր վարժարաններում և հոգևորականներից շատերի համար։

Դպրոցներում դուք կը հանդիպէք կրօնական բազմաթիւ առարկաների, այս կամ այն եկեղեցու Աստուածաբանութեան, այս կամ այն եկեղեցու այս կամ այն ծէսն ու խորհուրդը հաստատող վկայաբանութեանց անթիւ շարքերի և նրանց ուսումնասիրութեան։ Այնտեղ սովորում են սաղմոսն ու շարականը, ծէսն ու մաշտոցը, Աստուածաբանութիւնն ու համաբանութիւնը, իսկ Աւետարանը միայն այն չափով՝ ինչ չափով որ հարկաւոր է արդարացնելու շատ անգամ եկեղեցական հայրերի այս կամ այն սխալ հասկացողութիւնը, իսկ որ Աւետաւ ուսնարն

ուսումնասիրում իբրև ամենավճիտ աղբիւր բարոյականութեան և խաղաղ ու հաւասար կենցաղավարութեան, իբրև հակակշիռ եսական կեանքի պաշտպանների վարդապետութեան և ցոյց տալու նրա գերազանցութիւնը, այդպիսի բան չէք տեսնիլ, Աւետարանն այդ ձևով ոչ մի տեղ չի ուսումնասիրւում։ Մէկը պատրաստում է Աւետարանի զինուորութեան, եկեղեցու սպասաւորութեան, ինչ են պահանջում և ինչպէս են հասկանում նրա պարտականութիւնը։ Նրանից պահանջում են, որ գիտենայ շարականներ, գիտենայ սաղմոսն ու մաշտոցը, գիտենայ գրաբար բառերի աշխարհաբար թարգմանութիւնը, իսկ հասկանալ Աւետարանի իդէալը, նրա գծած շաւիղը, սովոր լինել այդ շաւղով ապրելու և գործելու, այդ ոչ ոք չի պահանջում, ոչ ոք այդ բանի վրայ ուշադրութիւն չի դարձնում և մենք մնում ենք ծիծաղելի քրիստոնեաներ՝ հակաքրիստոնէական այնպիսի արատներով, որոնց մասին գուցէ նոյն իսկ հասկացողութիւն չունէր կռապաշտն ու մովսիսականը, յոյնն ու ասորին։ Աւետարանի ներկայացուցիչները կարծէք երկիւղ են կրում ժողովրդին, ուսանող սերնդին տալու Աւետարանը ճշտութեամբ և ճշմարտութեամբ. հասկացնելու նրա պահանջները, պարզելու նրա գծած շաւիղը և այդ՝ ըստ իս մի միայն նրա համար, որ իրենց սրտի խորքում զգում են այն սոսկալի հակասութիւնը, որը գոյութիւն ունի այդ վարդապետութեան, նրանց կենցաղավարութեան, իրենց պաշտօնի ու գործի մէջ և այս է ահա գլխաւոր պատճառը, որ ճշմարտութիւնը մնում է ծածկուած, սիրոյ վարդապետութիւնը չը ճանաչուած և մեր շուրջը շարունակւում է թագաւորել արիւնն ու սուրը, ատելութիւնն ու թշնամանքը, գողութիւն, յափշտակութիւնն ու զրկանքը և այդ բոլորն արդարացնելու համար թոյլ և մոլորուած մարդկութիւնն իր ընդունակ, բայց հիւանդոտ ներկայացուցիչների շնորհիւ ստեղծում է առանձին վարդապետութիւն, յայտարարում է գոյութեան պատերազմ և կոչում է ոչ թէ ընդհանուր բարօրութեան համար բնութեան յարուցած

արգելքների դէմ, այլ իրար դէմ, իւր եղբօր դէմ և չընայած արտաքին զարդ ու զարդարանքի, շորի և փայլի, մարդիկ մնում են նոյն վայրենի հակումներով, ինչպէս որ եղել են դարեր առաջ։

Մենք գիտենք, որ քրիստոնէական առաջին դարերում հռովմայեցւոց կայսրութեան մէջ այդպիսի եսական կեանքին առաջն առնել կարողացաւ մի միայն Աւետարանի քարոզը, նրա պարզ մեկնած՝ պարզագոյն ճշմարտութիւնը և չափ ու սահման դրաւ Հռովմի պատրիցիաների դարերի ընթացքում մշակուած և պաշտամունք դարձած գայլի ախորժակին։

Եւ ահա այժմ էլ մի միայն նոյն Աւետարանը ճըշմարտութեամբ մեկնած և պարզ բացատրած կարող է և ընդունակ է վերջ դնելու մեր կեանքի ցաւոտ կողմերին, բժշկելու մեր հասարակական կեանքի սոսկալի վէրքերը և մի հանուր եղբայրութիւն ստեղծելու երկրիս վրայ։ Ուրեմն տանք ժողովրդին Աւետարանը, գրկենք այն, ջանանք ըմբռնել նրա պահանջներն և իրագործել կեանքի մէջ. որքան կարևորութիւն ենք տալիս մաթեմատիկայի, աշխարհագրութեան, տիեզերագրութեան, պատմութեան և քերականութեան, որքան կարևոր ենք համարում աշխարհական այս կամ հեղինակի հետ ծանօթութիւնը և չը գիտցած դէպքում կարմրում ենք խօսակիցների առաջ, նոյն չափով կարմրենք Աւետարանի այս կամ այն ճշմարտութիւնը չը գիտցած դէպքում, այդ կեանքի գրքի պահանջների և մեր կենցաղավարութեան հակասութեան ժամանակ և մենք՝ հաւատացած եղէք, որ աւելի մեծ մխիթարութիւն, հանգիստ և խաղաղութիւն կը գտնենք, քան աշխարհիս ամբաւ հարստութեան տուածը, որ միայն մարմնին է պարարում, իսկ հոգին խեղդում ու սպանում, նրա հանգիստն ու անդորրութիւնն յափշտակում։

Բայց այս մասին հետևեալ անգամ։

Ե. Ծ. Վ. Մ.

ՄԱՅՐԱԹՈՌ

Յուլիսի 26-ին առաւօտեան $6^{1}/_{2}$ ժամին Նորին Վեհափառութիւնը դուրս ելաւ Ս. Էջմիածնից տողերիս գրողի և Խորէն Էֆէնդու ուղեկցութեամբ փոքրիկ ճանապարհորդութիւն կատարելու համար։ Ժամը 9-ն էր երբ Նորին Սրբութիւնը հասաւ Երևան, ուր առաջնորդարանում հանգստանալուց և ճաշելուց յետոյ ուղևորուեց Դարաչիչագ։ Մինչև քաղաքի ծայրը Նորին Վեհափառութեան ուղեկցեց առաջնորդական փոխանորդ բարձր. տէր Կարապետ վարդապետը Վաչեան և Պանջուլազեան քահանաների հետ։

Գիշերուայ ժամը 10-ին Նորին Վեհափառութիւնը հասաւ Դարաչիչագ և իջևանեց երևանցի Գէորգ աղա Գէորգեանի տանը, որը ամբողջապէս ծաղկազարդել էին տեղս ամարանոց եկող և բնիկ հայերը։ Հետևեալ օրը Նորին Վեհափառութիւնը երեկոյեան դէմ գնաց եկեղեցի, Երևանի պ. Նահանգապետի հետ այցելութիւններ փոխանակեց։ 28 և 29-ի գիշերները պատշգամբում խմբուած երկսեռ երիտասարդութիւնը երգում էր։

30-ին առաւօտեան ժամը 8-ին Նորին Վեհափառութիւնը ուղևորուեց Ռանդամալ հայաբնակ գիւղը, ուր հանգստանալուց յետոյ դիմեց Սևան։ Դարաչիչագից մինչև Սևան Նորին Վեհափառութեան ուղեկցում էր և Գէորգեան ընտանիքն՝ հետն ունենալով Վեհափառութեան համար հարկաւոր պատրաստութիւններ։ Նորին Վեհափառութիւնը Սևանում միայն մի գիշեր մնաց, հետևեալ օրը ամսի 31-ին ուղևորուեց Դիլիջան. ճանապարհին սկսուող և արդէն կամաց կամաց սաստկացող անձրևներից հարկադրուած՝ Նորին Վեհափառութիւնը որոշեց մնալ Սեմէօնովկա կայարանում, ուր հարկաւոր պատրաստութիւնները իսկոյն և եթ տեսնուեցան։ Դիլիջանից Սեմէօնովկա էր շտապել երեք հոգուց բաղկացած մի պատ-

դամաւորութիւն, որը և խնդրեց Վեհին շնորհ տանել և Դիլիջան։

Օգոստոսի 1-ին առաւօտեան ժամը 8-ին Նորին Վեհափառութիւնը դուրս եկաւ Սեմէօնովկայից և 11-ին հասաւ Դիլիջան, ուրտեղից արդէն շտապել էին դիմաւորողները։ Սեւանից դուրս գալու միջոցին Նորին Վեհափառութիւնը Ս. Էջմիածնից ստացաւ մի հեռագիր, որով Տ. Ղեւոնդ եպիսկոպոսը յայտնում էր Կայսերազն Թագաժառանգ Ալէքսէյի ծննդեան մասին։ Դիլիջանից Նորին Վեհափառութիւնը Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր շնորհաւորական հեռագիր տուեց։

Վեհափառը Դիլիջանում իջել էր ինժեներ Եարալեանի տանը. այստեղ Նորին Վեհափառութեան ներկայացան տեղիս հասարակութեան առաջաւոր անդամները և շրջակայքից եկած քահանաները։

Գիշերը մնաց այստեղ. միւս օրն ամսի 2-ին Նորին Վեհափառութիւնը ուղևորուեց Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժամին։ Վեհափառութեան մինչև 7 վերստ ուղեկցում էին քահանաներ և ուրիշներ։ Ղարաքիլիսային 6—7 վերստ մնացած երևացին ընդառաջ եկողների կառքերը և ձիաւորների խմբեր, որոնք, քանի գնացքը մօտենում էր քաղաքին՝ աւելի և աւելի ստուարանում էին։ Մինչև 18 կառքեր էին դիմաւորել։ Ղարաքիլիսայի ծայրը հաւաքուած ժողովուրդը, որը կազմուած էր ամարանոց եկողներից և բնիկներից, ցնծագին կեցցէներով ընդունեց Նորին Վեհափառութեան և աղ ու հաց մատոյց։

Վեհափառի համար պատրաստել էին եղբայրներ Եգիզարեանցների տունը։ Այստեղ Նորին Մեծութիւնից ստացաւ Նորին Վեհափառութիւնը իր տուած հեռագրի պատասխանը ցերեկուայ ժամը 2-ին։ Ամսի 3-ին ժամը $7\frac{1}{2}$-ին Ղարաքիլիսայի կայարանում հաւաքուած էր մեծ բազմութիւն, որ եկել էր Նորին Վեհափառութեան բարի երթ մաղթելու։ Ժամը 8-ին Թիֆլիզից եկած գնացքը կեցցէներով ճանապարհ ձգեց այդ բազմութիւնը դէպի Ալէքսանդրապոլ։ Ժամը $11\frac{1}{2}$-ին գնացքը հասաւ Ալէք-

սանդրապօլ. այստեղ վագօնում Նորին Վեհափառութեան ներկայացան Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունին Գաւառապետի օգնականը և քաղաքագլուխ պ. Տ. Աստուածատրեանը և ուրիշները. Դիմաւորելու համար հաւաքուած բազմութեան միջից անցնելով՝ Նորին Վեհափառութիւնը կառատօրմի առաջնորդութեամբ և ուղեկցութեամբ գնաց յաջորդարան։ Ղարաքլիսայից Նորին Վեհափառութեան ուղեկցում էր Սանահինի վանքի վանահայր Գեր. Գարեգին եպիսկոպոս Սաթունեանը։ Համամլու կայարանում Նորին Վեհափառութեան դիմաւորեց Բարձր Տ. Կարապետ վարդապետը, որ իւր թեմն էր շրջագայում։ Սոքա երկուսն էլ ուղեկցեցին մինչև Աղէքսանդրապօլ։ Ամսի 5-ին Նորին Վեհափառութիւնը 12-ի գնացքով, որի հետ կար Նորին Վեհափառութեան համար պատրաստուած սալօն-վագօն, մեկնեց Ս. Էջմիածին, ուր հասաւ ժամը 7-ին։

Կարսում կայարան էին եկել Նորին Ս. Օծութեան դիմաւորելու համար Գերապատիւ Ղևոնդ եպիսկոպոսը, Բարձր. Տ. Մխիթար, Տ. Բաբգէն և Տ. Զաւէն վարդապետները։

Աղէքսանդրապօլում Նորին Ս. Օծութեան բարի երթ մաղթելու համար կայարան էին եկել Գաւառապետի օգնականը, քաղաքագլուխը և մեծ բազմութիւն. իսկ հոգևորականութիւնից Գեր. Յովհաննէս եպիսկոպոսը, Բարձր. Տ. Կարապետ և Տ. Արսէն վարդապետները։ Մինչև գընացքի դուրս գալը՝ բոլոր հարկաւոր կարգադրութիւնները՝ Նորին Վեհափառութեան յարմարութիւն տալու համար՝ գաւառապետը անձամբ էր անում։ Գեր. Սարգիս եպիսկոպոս Փիլոյեանը, որ Սևանայ վանքից միացել էր շքախմբին, Նորին Վեհափառութեան ուղեկցեց մինչև Ս. Էջմիածին։

Լեւոն աբեղայ.

Անցեալ օգոստոսի 19-ին Թագաւոր Կայսրը բարեհաճել է հաստատել Թիֆլիզի Թեմի առաջնորդական պաշտօնում Սանահնի վանքի վանահայր Գերապատիւ Գարեգին եպիսկոպոս Սաթունեանցին։

Թագաւոր Կայսրն ամենաողորմածաբար բարեհաճել է արձակել Սինօդի անդամութեան պաշտօնից Մակար եպիսկոպոս Բարխուդարեանին և Մխիթար վարդապետ Տէր Մկրտչեանին և հաստատել Սինօդի անդամ Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունուն և արժ. Յուսիկ, Մատթէոս և Բաբգէն վարդապետներին։

Մայր Աթոռս մերադարձան Գեր. Մակար և Յուսիկ եպիսկոպոսները և Տ. Եղիա, Եղիշէ, Մեսրոպ, Մամբրէ և Արտակ վարդապետները, որոնք գնացել էին ամարանոց։

Մայր Աթոռից իրեն պաշտօնատեղին վերադարձաւ Նուխուայ Փոխանորդ Սիօն վարդապետը։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

ՎԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Երկու տարին բոլորեց Կեդրոնական վարժարանը Վանի մէջ։ Սոյն կարևոր հաստատութեան կազմին առթիւ աչքի ընկնող էն մխիթարական երևոյթն է վանեցու հոգւով ու սրտով կապուած լինելը ամենէն աւելի դէպի իւր ուսումնարանները և կրթարանները, որով նա կարողացաւ առանց մի կոպէկ ի ձեռին ունենալու բանալ վարժարանը և անոր յարատեւութիւնը ապահովելու համար տարի մ' առաջ ձեռնարկեց սեպհական շէնքին կառուցման գործին։ Սոյն բազմածախս շէնքը կահաւոր-

մամբ միասին 1200 Օսմն. ոսկիով ի գլուխ ելաւ: Ցայտնի է թէ նիւթապէս խիստ աննպաստ վիճակի մէջ եղող վանեցին ինքը իրմով չէր կրնար ի կատար հանել Կեդրոնական վարժարանին շինութիւնը, հոգալով միանգամայն վարժարանի տարեկան 150 ոսկւոյ ուսումնական բաժնի ծախսն ալ. և իրօք ցարդ սոյն վարժարանին համար ծախսուած 1500 ոսկւոյ 1/3ը հեռաւորնակ ազգայնոց նպաստներն են, ղրկուած կովկասահայ եղբայրներէ, Ամերիկայի ազգայիններէն և Կ. Պոլսոյ քանի մը հայրենակիցներէ:

Այսպէս ոչնչից կազմուած սոյն կարևոր հաստատութիւնը այսօր բարեբախտաբար ի վիճակի է յառաջիկայ ուսումնական տարեշրջանի սկզբից (սեպտ. 1) այլ ևս իւր սեպհական շէնքին մէջ հաւաքել աշակերտները, ազատուելով ամեն տարի կարևոր գումար մը վարձք տալու անպատեհութիւնից: Սակայն խնդիրը հոս է թէ Կեդրոնական վարժարանի յառաջիկայ տարուայ պիւտճէն ուսկից հոգացուելու է, երբ իւր միակ ապաւէնը եղող հանգուցեալ բարերար Գրիգոր Անտոնեան Սերեպրենիքովի կտակած 12000 րուբլի տոկոսիքը, (որ Նորին Ս. Օծութիւն ազգիս Վեհափառ Հայրապետ յատկացուց սոյն հաստատութեան), գանձելու յայտնի դժուարութիւն կայ: Ի՞նչ ընէ վարժարանին խնամակալութիւնը, երբ ամենամեծ դժուարութիւններով և զոհաբերութեամբ գործը այս վիճակին հասցնելէ վերջը, կը պարտաւորի կասել և մտածել ելք մը գտնելու ամեն հայ սրտին սիրելի եղող Կեդրոնականը շարունակել կարենալու համար:

Բաց աստի սոյն վարժարանը, որ կոչուած է բարձրագոյն նախակրթութիւն և միջնակարգ կրթութիւն տալ Վասպուրականի պէս բազմահայ մի կեդրոնի ուսանող սերնդին, իւր նոր գործ՝ բազմապիսի պէտք և կարիք ունի փափագուած վիճակին հասնելու համար: Ամենէն առաջ հարկաւոր է բաւական ճոխ մատենադարան մը, նորագոյն ձեռնարկներ, բնագիտական գէթ պարզ գործիքներ, բնապատմական նկարներ, աշխարհագրական քարտէզներ և այլն և բայց դեռ ասոնցմէ և ոչ մին ունի. և այդ պատճառաւ խնամակալութեան գործը շատ ծանր է և պահանջն ընդհանուր:

Գալով սոյն հաստատութեան դասընթացքի և ուսումնական շրջանի մասին, կասենք որ, Վանայ ծխական բոլոր վարժարանները, յատկապէս պատրաստուած կազմական ծրագրի մը տրամադրութեան համաձայն կը պահեն միայն տարրական նախնակրթութեան վեց տարիները: Բոլոր վարժարանաց 6-րդ կարգերը յատուկ քննութեամբ կընդունէն Ա. շրջանի ուսման

վկայագիրը, ուզողները գործի կամ արհեստի կերթան և առաւելապէս անոնք՝ որ ապագայ չեն խոստանար Կեդրոնական մտնելով: Այսպիսիք կը լինին ուրաքանչիւր կարգից 2—3 հոգի: Իսկ լաւագոյն տարրերը և ուսանելու տենչ ունեցողները կանցնեն Կեդրոնականը՝ կազմելով բարձրագոյն նախակրթութեան Ա. տարին: Երեք տարի ըլլալով սոյն շրջանը, աւարտողները կստանան վկայագրեր, որից յետոյ կանցնին միջնակարգ կրթութեան եռամեակը բոլորելու՝ ուսուցիչ կամ ասպարիզի մարդ դառնալու համար:

Կեդրոնական ուսուցչական խումբը՝ երթալով կը զօրանայ, բայց տեղւոյն քանի մը բաւական փորձառու ուսուցիչներէ՝ կը դասախօսեն Պօլսոյ Կեդր. վարժարանի ընթացաւարտներէն պ. Ղեւոնդ Սրուանձտեան՝ տնօրէն և լեզուի ուսուցիչ, պ. Արտակ Դարբինեան դաստիարակ ուսուցիչ. պ. Ղեւոնդ Մելոյեան գիտութեանց և մաթեմաթիքայի ուսուցիչ. վերջին երկուք. ս. Էջմիածնի ճեմարանի 6-րդ տարին աւարտողներն են, իսկ պ. Համազասպ Մանուկեան, որ գրեթէ աւարտած է լսարանի ընթացքն ևս, պիտի վարձուի յառաջիկայ նոր շրջանի համար իւր սիրած առարկաներով պարապելու և օգտակար լինելու համար:

Վարժարանի ընդհանուր վարչութիւնը յանձնուած է խընամակալ մարմնոյ մը ձեռքին, որոյ անդամներն են նախկին քաղաքական ժողովոյ երկու անդամներ, չորս եկեղեցեաց թաղական խորհրդոյ կողմէ մէկ մէկ լիազօր ներկայացուցիչ, և չորս թաղային վարժարանաց տեսուչները: Ի սոցանէ ամենէն աւելի գովութեան և շնորհակալութեան արժանի է Դալուստ էֆ. Ծխտէչեան՝ մի հայրասէր և բարեսիրտ անձնաւորութիւն, որ իւր բարձր ազդեցութեամբ միշտ օգտակար և բարերար ներգործութիւն մ' ունեցած է վարժարանին ընդհանուր կացութեան վրայ:—Իսկ Վանայ Առաջնորդական տեղապահ և խնամակալութեան նախագահ Գեր. Տ. Սահակ ոբքաղան ամենէն աւելի կը դուրգուրայ սոյն հաստատութեան վրայ իբր իւր օրով և իւր նախաձեռնութեամբ տասնեակ տարիներէ ի վեր երազուած և հազիւ ի գլուխ հանուած օրուան հացին չափ կարևոր մի վարժարանի:—

Իրաց այս վիճակին մէջ խոնարհաբար կոչում կընենք ամեն ազգայնոց կրթասիրական զգացմանց, խնդրելով որ բարեհաճեն իրենց լումաները չը խնայել յիշեալ վարժարանին դէթ մի տարուայ ապահով շարունակութեան, որմէ յետոյ Տէրոջ յաջողութեամբ և Վեհափառ Հայրիկի հայրագութ հոգածութեամբ,

կարելի պիտի լինի Սերեբրենիքովի կտակին յետնեալ տոկոսները գանձել և նոյն իսկ նորանոր կտակներով իւր բարձր հովանաւորութեան ներքև եղող ու համակրանաց արժանացող Կեդրոնականին էութիւնն ու գոյութիւնը միանգամ ընդ միշտ ապահովել:

Գ. Աճէմեան (Վանեցի).

1904 յուլիս 20

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Այս տարի օգոստոսի 30 ին Բազէլ քաղաքում բացուեց կրօնների պատմութեան միջազգային կոնգրէսը, որը պէտք է շարունակուէր մինչև սեպտեմբերի 2 ը: Կոնգրէսի զբաղմունքները մասնադրուած էին ընդհանուր ժողովների, որտեղ և տեղի պէտք է ունենային ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող զեկուցումներ՝ առանց քննադատութեան, և առանձին մասնախմբերի (սէկցիաների), որտեղ յատուկ նիւթերի մասին զեկուցումներ պէտք է կարդացուէին և ապա այդ զեկուցումները ենթարկուէին քննադատութեան:

Կոնգրէսում ենթադրուում էին հետևեալ 8 մասնախմբեր:

1. (Նախապատմական) Նահապետական ազգերի կրօնները. Պերուանցիների և Մեկսիկացիների կրօնը. 2. Չինացւոց և Ճապոնացւոց կրօնը. 3. Եգիպտացւոց կրօնը. 4. Սեմականների կրօնը. 5. Հնդկաստանի և Իրանի կրօնները. 6. Յունաց և Հռոմէացոց կրօնը. 7. Գերմանացիների, կելտերի, սլաւոնների և ուգրո-ալթայինների կրօնները. 8. Քրիստոնէական կրօնը: Կոնգրէսի պաշտօնական լեզուներ էին Գերմաներէնը. Անգլերէնը, Ֆրանսերէնը և Իտալերէնը:

Ընդհանուր ժողովներում արդէն նախաորոշուած էին հետևեալ զեկուցումները:

Պրոֆէսսոր Գերման Ուզեների (Բոնն) «Կրօնն ու բարոյականութիւնը» Պրոֆ. Կոնրատ Ֆուրրէրի (ցիւրիխից) «Կրօնների պատմութեան նշանակութիւնը քրիստոնէական աստուածա-

քանների համար», Պրոֆ. Կոլբախի—գեղարուեստի ազդեցութիւնը կրօնի վրայ Եգիպտոսում, Ասորաբաբելոնում և Էլլադայում (Յունաստանում,) Պրոֆ. Սամուէլ Այվէսկեուիս (Չիկագօ քաղաքից) «Survivole of Ancient Semitic Religion Sirian Centres of Moslom and Christian Influence». անզարգացած ազգերի կրօնական հասկացողութիւնները:

Առաջին սեկցիայում պրոֆ. Զեյլէր (Բերլինից) պէտք է զեկուցանէր «Մեքսիքական կրօնի հիմնական գծերի մասին»:

Վենչեսլաւ Սերօշևսկին (Վարշաւայից) պէտք է կարդար.—Այնոսների կրօնը Եսօ կղզու վրայ»: Երկրորդ սեկցիայում դօքտոր Լաուֆէր (Չինաստանից)—«Չինաստանի հրէաների պատմութիւնից՝ հիմնուած նրանց թողած արձանագրութիւնների վրայ: Այնուհետև Մարտին Մայերը՝—քարոզիչ (Բեռնից)—Արդեօք չինացիք իրօք կրօնապէս անտարբեր են, և այլն: Այլ սեկցիաներում արդէն նշանակուած էին հետևեալ զեկուցումները.—

Գիւար (արևելեան կենդանի լեզուների ուսուցչապետ Փարիզի համալսարանում) պէտք է կարդար՝—«Մահմէդական ռացիօնալիզմը X դարում»:

Տենդլեր՝—Հրէից կացութիւնը մարդկութեան զարգացման պատմութեան ընթացքում:

Առաքելեան՝ խմբագիր «Մշակ» լրագրի (Թիֆլիզում)—«Հայոց հին կրօնը»:

Ուսուցչապետ Կոլբախը՝—Ունգարիայի Պոլիթէյիզմի մասին»:

Սամուէլ Ֆրիս—(Ստոկհոլմից) «Ինչ կնշանակի Աստուածաշնչի մէջ յիշուած «իշխան աշխարհիս այսմիկ» դարձուածքը». և այլն:

Յիշեալ համաժողովն արդէն կայացած է և հետևանքի մասին կաշխատենք տեղեկութիւն տալ ընթերցողներին, որքան մեզ հնարաւորութիւն կըտան լրագրական տեղեկութիւնները:

ՊՐԱՒՕՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Յունիս և յուլիս ամիսներին եկեղեցական հասարակական կեանքում տեղի ունեցաւ զգալի փոփոխութիւն՝— 1) հրատարակուեց կառավարիչ Սենատի մեկնութիւնը տօնական հանգստութեան վերաբերութեամբ և 2) շնացող ամուսիններին, որոնք ամուսնալուծութեամբ զրկուում էին ամուսնանալու իրաւունքից, թոյլ տրուեց եկեղեցական որոշ ապաշխարութիւնից յետոյ, կրկին ամուսնանալ: Տօնական աշխատանքի և հանգստութեան վերաբերութեամբ եղած վէճը շատ և շատ

հին է, նոր կտակարանից առաջ էլ նա գոյութիւն ունէր և մենք այդ մասին ունինք Փրկչի հրաշալի պատասխանը Աւետարանի էջերում.— (Աւետ. Մատթէոսի գլուխ ԺԲ. 1—12) բայց ի՞նչ կանէք, երբ նոյն Աւետարանի քարոզիչները ամենից քիչ են հետաքրքրւում Աւետարանի ճշմարիտ բովանդակութեամբ։ Դեռ մօտիկ անցեալում Ռուսաստանի կրօնական և աշխարհական մամուլը ամենայն ճիգ էր թափում բանի անգործութիւն հրատարակելու և այդ հիմնում էր ի պաշտպանութիւն աշխատաւորների, բանւոր դասակարգի՝—մարդասիրաբար. Եռանդոտ հոգևորականներն ու ոստիկանները առիթից օգտուելով և ոչ մի հանգամանքի վրայ ուշադրութիւն չդարձնելով, արձանագրութիւններ էր, որ կազմել էին տալիս կիրակին սուրբ չը պահող և աշխատող գիւղացիների դէմ և շինական և շրջանական դատարանները լցւում էին հազարաւոր բողոքներով, որոնց հետևանքը լինում էր գիւղացիների բանտարկութիւնն ու տուգանելը։ Իսկ քաղաքներում բանի անգործութեան դատապարտուած մարդկանց ահագին խմբերը, հնարաւորութիւն և միջոց չունենալով տօն օրերն արդիւնաւոր կերպով անցկացնելու, անձնատուր էին լինում հարբեցութեան և շնութեան։ Կառավարիչ Սենատի մեկնութիւնը վերջ դրեց բանի անգործութեան և ի նկատի ունենալով երկարատև ձմռան և բազմաթիւ տօների շնորհիւ առաջ եկած գիւղական տնտեսութեան քայքայուած դրութիւնը, թոյլատրեց կիրակնօրեայ ազատ աշխատանքը՝ որոշ հսկողութիւն և պայմաններ սահմանելով դրամատէրերի և բանւորների համար գործարաններում։

Ինչպէս վերև յիշեցինք երկրորդ նշանաւոր կարգադրութիւնը ամուսնալուծութեամբ ամուսնանալու իրաւունքից զրկուածներին՝ որոշ ապաշխարանքից յետոյ ամուսնանալու իրաւունք տալն է։ «Церковиый Вѣстникъ» շաբաթաթերթը մարդասիրական մի ակտ է համարում այդ՝ պատժուած ամուսինների համար։ Հակառակ լինելով ամուսնալուծութեան՝ բացի որոշ դէպքերից, երբ ամուսնացողներից մինը անյայտացած է, ցմահ աքսորուած կամ միանգամայն անբուժելի՝ հոգեպէս և ֆիզիքապէս, մենք չենք կարող մեր ուրախութիւնը չը յայտնել այդ նոր օրէնքի հրատարակութեան վերաբերութեամբ և այդ այն պատճառով, որ ամուսնաթող շնացողներին վերադարձնելով վերստին ամուսնանալու իրաւունքը, որոշ չափով պաշտպանւում են այն անմեղ բազմաթիւ անձինք, որոնք անշուշտ զոհ պէտք է դառնային անզուսպ—անամուսին շնացողներին։ Անշուշտ այդ օրէնքը, որը տասը տարուց ի վեր գործադրւում է

Հայաստանեայց եկեղեցում, ահագին նշանակութիւն կունենայ պրաւօսլաւ եկեղեցու զաւակների համար և որոշ չափով վերջ կդնի շնութեան և ապօրինի կենակցութեան: Որչափ մեծ դիւրութիւններ և ազատութիւն տրուի ամուսնանալու գործում և որքան քչանայ անուանական ամուսինների թիւն, այնքան աւելի կը վատատկի եւկնծը և կը բարձրանայ հասարակական բարոյականութիւնը:

Յունիսի վերջերին Կազան քաղաքում տեղի ունեցաւ մի շատ յանդուգն գողութիւն — Կազանի մայր եկեղեցուց ուրիշ թանկագին պատկերների և եկեղեցական սպասների թւում գողացուեց Կազանի Աստուածածնայ թանկագին սկանակուռ պատկերը, որն իբրև հրաշագործ, մեծ հռչակ էր վայելում ամբողջ Ռուսաստանում, ունէր առանձին սահմանուած տօն և այդ պատկերների պատճէնների անունով շինուած կան բազմաթիւ տաճարներ: Ոստիկանութեանը թէև յաջողուեց գտնել յանցաւորների յետքը, բայց բուն յանցաւորները կարողացան փախուստ տալ և յայտնուեց, որ պատկերի ակունքներն ու ոսկեայ զարդերը կողոպտելուց յետոյ, պատկերը պատառոտել և վառել են:

Մի քանի օրից յետոյ, այն է յուլիսի 13ին Սարատով քաղաքի «Գոր» արուարձանում, ինչպէս այդ մասին գրում են Ս. Պետերբուրգում հրատարակուող «Ռուս» թերթին (յուլիս 19 № 216) վաղ առաւօտեան լուր է տարածուել, որ «Սօկոլով» կոչուած սարի գլխին յայտնուել է Կազանի Ս. Աստուածածնայ պատկերը: «Ոմանք ասում էին, որ այդ այն պատկերն է որը գողացուեց, իսկ միւսները պնդում էին, որ նոր յայտնուած պատկերը Կուրսկ քաղաքինն է: «Ռուսկօէ սլովօ» թերթի թղթակցի ասելով Սարատովի բնակիչներն ահագին խմբերով սկսան հաւաքուել «Սօկոլով սարի գլուխը», որը շուտով ծածկուեց հազարաւոր մարդկանցով: Եւ իրաւ լերան գագաթին կար երկաթեայ սովորական մի խաչ փայտադոյն ներկուած, ինչպէս սովորաբար լինում են գերեզմանատների խաչերը, որի մէջ տեղում կար փոքրիկ խորան և դրանում Կազանի ս. Աստուածածնայ պատկերը, որի երկարութիւնը հազիւ մի քառորդ արշին էր, նկարուած խնկենու տախտակի վերայ: Պատկերի առաջ վառւում էր կանթեղ: Հաւաքուած ժողովուրդը երկրպագութիւն էր տալիս պատկերին. կանայք քաշ էին տալիս ծծկեր երեխաներին և զառամեալ ծերերին:

Պատկերի տակ թափում էին դրամներ և շատ շուտով արծաթեայ և պղնձեայ փողերի բլուր կազմուեց. իսկ խաչից կախուած էին քաթանի և չթի կտորներ և ժապաւէններ, որ բերում էին շրջականերից: Այստեղ իսկոյն դիրքեր գրաւեցին փոքրիկ խաչեր, կրօնական բովանդակութիւն ունեցող գրքոյկներ և պատկերներ ծախողները, իսկ կարգ պահպանելու համար կանչուեց ոստիկանութիւն:

Ո՞վ և արդեօք ի՞նչ նպատակով է դրել խաչն ու պատկերը, դեռ պարզուած չէ: Առ այժմ յայտնի է միայն այն, որ խաչը գնուել է նախընթաց երեկոյին երկաթավաճառի խանութներից մինում, որ գնողը եղել է մի ինչ որ պարոն՝ մաքսատան պաշտօնէի համազգեստով:

Ահա այդ պարոնը մի բանուորական զգեստ ունեցող ընկերի հետ միասին կառքով բերել են խաչն ու պատկերը յիշեալ սարի գլուխը, տնկել այնտեղ և գնացել: Անյայտ պարոնին այժմս որոնում է ոստիկանութիւնը: Այդ պատկերի յայտնուելը ժողովրդի մէջ առաջ է բերել զանազան պատմութիւններ: Յուլիսի 13ին տեղական իշխանութեան կարգադրութեամբ պատկերը վերցրել են իրեն տեղից:

Դոյնպիսի մի յանդուգն գողութիւն կատարուեց նաև մեզ մօտ՝ Կովկասում Վրաց հռչակաւոր «Գէլաթի» վանքում:

Այդ վանքը գտնւում է Քութայիսի մօտ Տղվիբուլի երկաթուղու գծի վերայ՝—Քութայիսից 20—24 վերստ հեռու և նոյն նշանակութիւն ունի Իմերէթիայի համար, ինչ որ Մցխէթի մայր եկեղեցին Քարթալինիայի համար: Վանքը գտնւում է անտառապատ մի սարի գագաթին մօտ, հրաշալի դիրք ունի, մաքուր օդ և լաւ ջուր: Այդտեղ են նստել Իմերէթիայի արքեպիսկոպոսներն ու առաջնորդները, այդտեղ են օծուել Իմերէթիայի թագաւորները և այդտեղ են գտնւում Իմերէթիայի նշանաւոր հնութիւնները: Աւազակութիւնը տեղի է ունեցել երեկոյեան ժամերգութեան ժամանակ, ինչպէս այդ տեղի ունեցաւ որանից մի քանի տարի առաջ Թիֆլիզի մօտակայ վրաց ս. Անտօնի վանքում: Լրագիրներն յայտնեցին, որ գողացուած է Իմերէթիայի թագաւորների թագը, Թամար թագուհու ականակուռ կօշիկը, կաթողիկոսների և Դաւիթ վերաշինող թագաւորի մատանիները—եկեղեցական ուրիշ նշանաւոր հնութիւնների և մօտ 300 ռուբլի դրամի հետ: Վերջը յայտնի եղաւ, որ թագն ու մատանիները գողացուած չեն և աւազակներին գտնելու համար խիստ միջոցների են դիմած, բայց մինչև օրս հետախուզութեանց հետևանքները դեռ յայտնի չեն: Ցանկալի է,

որ եկեղեցական հնութիւնները մեզանում մեծ զգուշութեամբ պահպանուէին և այդ բանին յատկացուէին յարմարաւոր և ապահով խորաններ, որպէս զի ապահով լինէին ամէն սրբութիւն մոռացած աւազակների ախորժակից. աւազակների, որոնք տարաբաղդաբար մեր և մեր ժամանակի ծնունդն են։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Արարատի ընթերցողներին արդէն յայտնի է, որ Ֆրանսիայում անցեալ տարուանից կառավարութիւնը խիստ միջոցների դիմեց միաբանական դպրոցների դէմ, շատ միաբանութիւններ, որոնք օրինական ձևով գոյութիւն չէին առել, ցրուեցան և անհամար թուով դպրոցներ փակուեցան, որոնց ուղղութիւնը վնասակար ճանաչուեց հասարակապետութեան շահերին։ Թէև այս հալածանքը սկիզբ առաւ դեռ հանգուցեալ Լևոն XIII Պապի կենդանութեան ժամանակ, բայց երբէք այն չափերի չը հասաւ և այնպիսի սուր կերպարանք չըստացաւ, ինչպէս այժմ։

Պապականութիւնը՝ բացի անսխալականութիւն հրատարակելուց, բացի պապերին Քրիստոսի փոխանորդ համարելուց երկրիս վերայ, միշտ ձգտել է անկախ և բարձր լինել աշխարհի իշխաններից և տիրել ու ստրկացնել նրանց պապական հեղինակութեան առաջ։

Կար ժամանակ, երբ պապերին յաջողուեց իրենց փառասիրութեան իրագործումը և նրանք աներկիւղ կերպով բանադրելով գերմանական, ֆրանսիական, իսպանական և այլ երկրների թագաւորներին և իշխաններին, հարկադրում էին շտապել Հռոմ, շաբաթներով ոտաբոբիկ կանգնել Վատիկանի դռներին և երկար ապաշխարանքից ու պապի հողաթափին համբուրելուց յետոյ միայն, վերստանալ իրենց իշխանութիւնը երկրիս վրայ Աստուծոյ անսխալական փոխանորդից և վերադառնալ իրենց երկիրները։

Գլխաւորապէս իշխելու տենչանքով էին յայտարարուած խաչակիրների արշաւանքները միջին դարերում, նոյն նպատակաւ սահմանուեց ինկուիզիցիան և նրա խիստ դրաքննութիւնը և Աւետարանի սպասաւորները միմիայն փառասիրութեան հա-

մար էին դարերի ընթացքում կռիւ մղում մարդկային մտքի վերածնութեան զինուորների դէմ՝ խարոյկների վրայ այրելով, բանտարկելով ու հերետիկոս յայտարարելով նրանց: Պապականութեան աշխարհակալական—իշխանաւորական այդպիսի ձգտումներին առաջին ամենամեծ հարուած հասցրեց Նապօլէօն I 18-րդ դարու վերջին և տասնեւիններորդի սկզբին, իսկ վերջին հարուածը տեղի ունեցաւ Իտալիայի ազատութիւնից յետոյ 19-րդ դարու առաջին կիսին, երբ պապերից խլուեց Հռոմը և նրանք իրենց Վատիկանի գերեալներ յայտարարեցին, մերժելով կառավարութեան կողմից պապական իշխանութեան համար որոշուած տարեկան միլիոնաւոր տուրքը: Այս հարուածը պապերի աշխարհային իշխանութեան դէմ էր ուղղուած: Այժմս Լուբէի նախագահութեան և Կոմբի մինիստրութեան ժամանակ պապականութիւնը հարուած է ստանում ունեցած բարոյական ազդեցութեան դէմ:

Հանգուցեալ Լեւոն XIII պապը չը հաշտուելով պապական երկրի իտալական թագաւորութեան ենթարկելու գործողութեան հետ, կարգադրում էր լաւ յարաբերութիւններ պահպանել կաթոլիկ երկիրների հետ և թոյլ չէր տալիս, որ այդ երկիրների պետերը այցելութիւններ տային Իտալիայի թագաւորներին Հռոմ քաղաքում և այդպիսով պապին անհաճոյ դրութեան գոյութիւնն ու օրինականութիւնը ճանաչէին: Հանգուցեալ պապը, թէև տեսնում էր Ֆրանսիայում կաթոլիկութեան դէմ մղուած հալածանքը չը հաւատացողների և մասոնների կողմից, բայց այնուամենայնիւ լաւ յարաբերութիւն էր պահպանում կառավարութեան հետ և Ֆրանսիայի կողմից հզօր աջակցութիւն գտնում կաթոլիկ եկեղեցու շահերի պաշտպանութեան խնդրում Հեռաւոր և Մերձաւոր Արեւելքում:

Պիոս X պապը սկզբներում աշխատում էր լաւ յարաբերութիւն պահպանել ֆրանսիական կառավարութեան հետ նոյն իսկ այն ժամանակ, երբ պետական հիմնարկութիւններից դուրս բերին փրկչական խաչը հէնց աւագ շաբաթուայ ընթացքում: Մինչդեռ այդ հանգամանքը ներկայ պապին առիթ չեղաւ բողոք բարձրացնելու այդպիսի վարմունքի դէմ, մի ուրիշ դէպք, որը աննպաստ էր նրա աշխարհատիրական ձգտումներին և օրինաւոր էր ճանաչում ու յայտարարում Իտալիայի թագաւորների տիրապետութիւնը Հռոմի վրայ, առիթ եղաւ շատ սուր և պապականութեան համար անախորժ դէպքերի: Այս տարի երբ ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Լուբէն այցելութեան եկաւ իտալական թագաւորին, Պապը

վերաւորուեց այդ հանգամանքից և իւր քարտուղարի միջոցաւ դժգոհութիւն յայտնեց ֆրանսիական կառավարութեան ներկայացուցչին: Ֆրանսիական կառավարութիւնն էլ պարտական չը մնաց այդպիսի քայլի դէմ. և անմիջապէս յետ կանչելով Վատիկանում նշանակած ֆրանսիական դեսպանին, Փարիզի կաթոլիկ եպիսկոպոսին (պապի ներկայացուցչին) անմիջապէս վերադարձրեց յանձնարարական բոլոր թղթերն և այդպիսով Վատիկանի և ֆրանսիական հասարակապետութեան յարաբերութիւնները խզուած յայտարարուեցին:

Պապը ֆրանսիայի պաշտպանութեան և հաշտութեան մասին յոյսը կտրած, այժմ պաշտպանութիւն է որոնում բողոքական Գերմանիայում և աշխատում է հաշտուել իտալական կառավարութեան հետ, մինչդեռ հէնց նրա պատճառով խռովուեց ֆրանսիական կառավարութեան հետ:

Ցաւալի երևոյթ է, որ մինչև այժմ էլ եկեղեցին չը հասկացաւ Աւետարանի գծած շաւիղը և փոխանակ սիրոյ քարոզ և ընդհանուր եղբայրութիւն հաստատող կապ լինելու, մի տեղ հանդէս է գալիս իշխանասիրական ձգտումներով և ուզում է տիրել, իսկ մի ուրիշ տեղ գործիք է դառնում հզօրների ձեռքին այս կամ այն քաղաքական անարդար նպատակներին և ազդեցութեանը ծառայելու, ինչպէս որ անում է նոյն կաթոլիկ եկեղեցին յօգուտ Գերմանական՝ ազդեցութեան մերձաւոր Արևելքում:

«Osservatore Romano» թերթում հաղորդում են Պապի աւագ քարտուղար Մերի—դէլ—վալի կարդինալի բացատրութիւնը Վատիկանի ֆրանսիական դեսպան Նիզարի հետ, որի հետևանքը եղաւ—ֆրանսիական կառավարութեան և Վատիկանի քաղաքական յարաբերութեանց ընդհատումը: Երբ Նիզարը դիմեց կարդինալին՝ հարցնելով. թէ արդեօք ուղիղ է ս. գահի կողմից կառավարութիւններին ուղարկած (նոտա) բողոքագրի բովանդակութիւնը լրագիրներում հրատարակածի հետ և արդեօք ճիշտ է այն պարբերութիւնը, «որ միայն խիստ յարգելի պատճառներով յետ չը կանչուեց պապական տեղապահը Փարիզից», Մերի—դէլ—վալը չը հրաժարուեց պատասխանել, այլ միայն խնդրեց, որ յիշեալ հարցերն իրեն գրաւոր տրուին՝ խոստանալով պատասխանել մէկ կամ նոյն իսկ կէս ժամ յետոյ: Բայց որովհետև դեսպանը անմիջական բանաւոր պատասխան էր խնդրում, ուստի յիշեալ բացատրութիւնը որոշ եզրակացու-

թեան չըհասցրեց և Նիգարը հետևեալ օրը յայտնեց, որ ինքը հրաման է ստացել Հռոմից հեռանալու և մինչև Դը—Նաւէնի գալը դեսպանատան գործերը կը վարի քարտուղար կոմս Գը Կուրսելը: Նկարագրելով գործի ընթացքը, պապական օրգանը նկատում է, որ պահանջել օտար տէրութիւններին ուղարկած (նօտայի) բողոքագրի բովանդակութիւնը միանգամայն ապօրինի է և հակասում է դիպլոմատիական բոլոր ընդունուած սովորութիւններին, որովհետև կոլէկտիւ բողոքագրի մէջ փոփոխութիւններ անելը ոչ մի օրէնքով արգելուած չէ և պապի տեղապահին վերաբերեալ պարբերութեան մէջ, որը ֆրանսիական կառավարութեան կողմից վիրաւորական համարուեց, լրագիրն ընդհակառակն նկատում է պապական աթոռի կողմից առանձին ուշադրութիւն դէպի Ֆրանսիան, որովհետև Վատիկանը Ֆրանսիայի դէմ այն միջոցի չը դիմեց, ինչի որ կը դիմէր ուրիշների վերաբերութեամբ:

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ե.

ԽԱՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կազմութեան նայելով՝ պէտք է տարբերել հիմնական խաղն իւր զարգացումից:

Հիմնական խաղերն են իսկապէս մի անգամից, մի բերմամբ յօրինուածները. զարգացած խաղերը ժամանակի ընթացքում առաջացած են հիմնականներից՝ իբրև տարրական մասերից:

Այս զարգացումը լինում է կցմամբ և աճմամբ:

Երկու հիմնական երկեակներ, որոնք իրարուց անկախ են և անջատ ևս երգւում են, կցուելով իրար՝ կազմում են մի քառեակ և միասին առնւում իբրև մի բազա-

դրեալ ամբողջ խաղ։ Օրինակ հետեւեալ քառեակը կըցմամբ կազմուած է.

Ծաղկէփանքու ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ.
Գնա՛, գնա՛, հետիդ եմ,
Կարմիր խնձոր գօտիդ եմ։

Կցման համար իբրեւ հիմք ծառայում է կամ երկու խաղի իմաստի իրար յարմարութիւնը, կամ բացի այդ՝ և մի բառ, որ երկու խաղի մէջ էլ կայ։ Առաջին երկեակի իմաստը, կամ նրա մէջ եղած մի բառը՝ երգչին յիշեցնում է մի ուրիշ անկախ երկեակ, որի իմաստը բռնում է առաջինին, և կամ որի մէջ նոյն բառը կայ, ինչ որ առաջինի մէջ, և նա երկրորդ երկեակն երգում է առաջինի հետ կցած իբրեւ մի խաղ. և այսպէս կցմամբ զարգացած խաղը մնում է յիշողութեան մէջ։

Այսպէս զարգացած խաղերը սակայն իմաստալից, սիրուն երգեր չեն, եթէ կցումը լինում է միայն մեքենայաբար, այսինքն լոկ բառի պատճառով, առանց ուշադրութիւն դարձնելու երկեակների ներքին իմաստին։ Քիչ չի պատահում նաեւ որ երկու խաղի կցումը մի միայն րոպէական քմահաճոյքից է առաջացած լինում։

Աճմամբ զարգացման ժամանակ մի հիմնական երկեակի կամ եռեակի վրայ, որ կարող է նաեւ մենակ, անջատ ասուել, աւելանում է մի կամ երկու տող էլ, և կազմւում է մի նոր համեմատաբար աւելի մեծ խաղ՝ եռեակ կամ քառեակ։ Աւելացած կամ աճած մի տողը բնաւ, իսկ երկու տողը սովորաբար մենակ չեն ասւում, գոնէ այն ձեւով որ կան զարգացած խաղի մէջ։ Այսպիսի զարգացումով է կազմուած, օրինակ, հետեւեալ քառեակը, որի առաջին երկու տողն իբրեւ անկախ երկեակ էլ բանում է.

Ծաղկավանքը ծաղկեր ա.
Ծամեր գլխիս թաղկեր ա.
Խաբար տարէք իմ նանիս,—
Սէրը ինձի յաղթիր ա։

Աճմամբ զարգացած խաղերը մեծ մասամբ աւելի իմաստալից են քան կցմամբ զարգացածները։

Խաղերի այս զարգացումը գտնում ենք ստանաւորի ամէն մի տեսակի համար. տեսնենք շատ գործածական չափերից մի քանիսը։

Եօթն-վանկանի հիմնական երկեակները դրեթէ բոլորն ունեին կցումով և աւելի՝ աճումով կազմուած քառեակներ. այնպէս որ շատ քիչ այդպիսի երկեակներ կան, որ քառեակների մէջ չմտնեն։ Եթէ կան էլ այդպիսիները, դրանց մի մասն ևս հաւաստեաւ կարելի է ասել, որ կրկնակներ են, կամ սկզբնապէս կրկնակներ են եղել, կամ թէ նոր յօրինուած երկեակներ են ու դեռ միջոց չեն ունեցել զարգանալու. կամ թէ քառեակները մեզ յայտնի չեն։ Անկախ երկեակների և նրանց քառեակների այս յարաբերութիւնն ի նկատի ունենալով՝ մեր քաղուած հազարաւոր խաղերի համար կարելի է 7 վանկանի քառեակի զարգացումը մինչև անգամ շուռ տուած կերպով բացատրել և ասել թէ այս տեսակի խաղի հիմնական ձևն է քառեակը, որի առաջին երկու տողը բաժանուելով իրենց ամբողջից, սկսել են յետագայում իբրև անկախ երկեակներ բանել։ Այս կերպով ևս անշուշտ առաջացած կլինին որոշ թուով երկեակներ. բայց խաղերի զարգացման ընդհանուր եղանակը վերևում բացատրածն է. այսինքն պարզից դէպի բարդը, երկեակներից եռեակներ և քառեակներ կազմուելը։ Այս չի խանգարում սակայն ընդունել, որ շատ եռեակներ և քառեակներ ևս հիմնական են. այսինքն մի անգամից իբրև մի ամբողջութիւն են յօրինուած։

Բերենք մի քանի օրինակներ խաղերի այս զարգացումը բացայայտ անելու համար։ Ազգագրական Հանդէսի VII-VIII գրքի մէջ (1901 թ.), եր. 439, բերուած են «սար, սար, սարերու գլուխն եմ, Լևոն Սամսոնի քուրն եմ» կրկնակի տակ ի միջի այլոց հետևեալ երկեակները.

1. Գնա՛, գնա՛, հետիդ եմ,
Կարմիր խնձոր ծոցիդ եմ,

2. Ժամու դռնէն դուրս էլայ,
Արեու պէս լուս էլայ։

3. Գնա՛, գնա՛, կայը տես,
Պաղ աղբիւրի սալը տես։

4. Սինամ սարեր մօտիկ ա,
Ջիւն ա եկեր, գոտիկ ա։

5. Լուսնակը ցոլաց, գնաց,
Դէմ տաւ ամպին մնաց։

Արդ այս միևնոյն երկեակների անժամբ զարգացած քառեակներ են հետևեալները, որ մենք ունենք ձեռի տակ.

1. Գնա՛, գնա, հետիդ եմ,
Կարմիր խնձոր՝ գոտիդ եմ.
Դու ինձ էստեղ չես թողնի,
Որտեղ երթաս՝ մօտիդ եմ։

2. Ժամի դռնէն դուս կը գաս,
Արեւի պէս լուս կըտաս.
Իմ խղճալը քեզ հետ ա,
Դու խղճալից դուս կը գաս։

3. Գնա՛, գնա՛, կալը տես,
Պաղ աղբիւրի սալը տե՛ս.
Իմ հէր քեզ աղջիկ չի տայ,—
Գնա՛, գլխիդ ճարը տես։

Վարիանտներ.

Գնա՛ գլխիդ ցալը տես,
Արի՛ սրտի հալը տե՛ս։

4. Սինամ սարեր մօտիկ ա,
Ջիւնը եկեր, գոտիկ ա.
Մեռնեմ իմ եարիս բոյին,
Տունս տանդ մօտիկ ա։

5. Լուսնակը ցոլաց, գնաց,
Դէմ տաւ ամպին մնաց.
Սրտով պայման չտուաւ,—
Սրտիս դաղ եղաւ մնաց:

Կցումով կազմուած 7-վանկանի քառեակներ համեմատաբար սակաւաթիւ են։ Այսպիսիները մի արտաքին նշան ունին. այն է, կամ բոլոր չորս տողն էլ նոյնայանգ են, կամ թէ յաջորդաբար զուգայանգ են, այսինքն առաջին երկու տողը մի յանգ ունին, վերջին երկուսը մի ուրիշ յանգ, մինչդեռ աճումով զարգացած քառեակների 3-րդ տողն անյանգ է մնում։ Այսպէս նոյնայանգ զարգացում ունի, օրինակ, վերևում դրած 4-րդ երկեակից հետևեալ քառեակը.

Սինամ սարերը մօտիկ,
Ջիւնը եկել է գօտիկ.
Աղջի դու ինչ խորոտիկ,
Արի մեր դուան մօտիկ։

Իսկ յաջորդաբար զուգայանգ զարգացում ունի վերևում դրած 1-ին երկեակից հետևեալ քառեակը.

Ծաղկէ վանքու ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ.
Գնա, գնա հետիդ եմ,
Կարմիր խնձոր՝ գօտիդ եմ։

Սրա վարիանտն է հետևեալը, որի չորրորդ տողը սակայն աղդեցութիւն է կրած վերևում դրած աճմամբ զարգացած 1-ին երգի վերջից.

Ես էս դեղի ձորէն եմ,
Խաս բախչի խնձորէն եմ.
Կարմիր խնձոր գօտիդ եմ,
Ուր որ երթաս հետիդ եմ։

Այս քառեակի առաջին երկեակը կցւում է և ուրիշ երկեակների հետ, որոնցից են. օրինակ.

Ծաղկէ վանքայ ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ.
Ուրիշ եար պիտի չառնեմ,
Հին եարի դարդով մեռնեմ։

Ես էս գեղի ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ,

Խնձոր եղել հասել եմ,
Բլբուլի հետ խօսել եմ։

Ես Կեորիսի ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ,
Խնձոր կծեմ, թօլ անեմ,
Միջի հարսը կօլ (կուլ) անեմ։

Կաղզուանի ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ.
Դիար դիար կորել եմ,
Նարոջմենէն ջորել եմ։

Տակաւ անգամ կը պատահի, որ կցումով կազմուած քառեակները մէջ ընդ մէջ զուգայանգ լինին, այսինքն 1-ին և 3-րդ տողերն իրար հետ յանգ կազմեն, իսկ 2-րդ և 4-րդ տողերն իրար հետ։ Յանգերի այս դասաւորութիւնը առաջ է գալիս միայն տողերի տեղափոխութիւնից. օրինակ.

Ես սարերում ձներակ,
Շաղաթաթախ արեգակ.
Արեգակին տէր աղբէր.
Տաքար մաղեմ՝ կեր, աղբէր։

Այս քառեակի երկրորդ երկեակի տողերը կցուելով. մի ուրիշ երկեակի հետ, մէջ ընդ մէջ են ընկել.

Արեգակին տէր աղբէր,
Ա՜յ շաղաթաթախ աղբէր,
Տաքար մաղեմ՝ կե՛ր, աղբէր.
Ջանս քեզ մատաղ, աղբէր։

Եօթն-վանկանի եռեակներ *ընդհանրապէս շատ քիչ կան, իսկ երկեակից զարգացած եռեակներ աւելի ևս սակաւ։ Մեր ձեռքի տակ ունեցածների մեծ մասը հիմնական եռեակներ են։ Կան և եռեակներ, որոնք քառեակներից են առաջացած՝ անյանգ 3-րդ տողի դուրս ընկնելով։*

Ե. Լալայեանի «Ջաւախքի բուրմունք» եր. 20. գըտնում ենք հետևեալ երկեակը՝ գրուած ուրիշ խաղի սկզբում.

Առաւօտուն թոնդիր մուխ,
Ճերմակ լոշիկ, գլխուն թուխ։

Սոյն խաղն իբրև եռեակ զարգացած գտնում ենք Ազգագրակ. Հանդէս. VII—VIII գիրք, եր. 444.

Առաւօտուն թոնիր մուխ,
Կախիր եաշմաղ, թորկիր պուխ,
Աժէր Մուշն ու Բուլանուխ։

Իսկ սրա վարիանտն է Լալայեանի «Ջաւախքի բուրմունքի» մէջ, եր. 22.

Առաւօտուն թոնդրին մուխ,
Աչուին բալակ, ունքուին թուխ,
Ձեմ ի տայ Մուշ Բուլանուխ։

Նոյն գրքի մէջ եր. 21 սրա վարիանտն է, միայն ութ վանկանի ոտանաւորով.

Դունէն անցայ, թնդիրն էր ծուխ,
Աչքեր բալակ, ունքերը թուխ.
Մեռնեմ քեզի սուրբ Բուլանուխ։

Մենք ունինք և հետևեալ վարիանտը.

Առաւօտուն թոնիրն էր մուխ,
Կլոր աչքեր, ընքեր թուխ.
Աժէր Մուշն ու Բուլանուխ։

Սրա վարիանտն է և Մխիթարեանի «Տաղեր ու խաղեր» եր. 243.

Թունդիր վառէ, էղեր է մուխ,
Կապէ փուշին, թորկեր է պուխ.
Ունքեր կամար, աչքերն է թուխ։

Սոյն այս խաղը գտնում ենք և իբր քառեակ զարգացած. Տէրէնց, «Վանայ սաղ», Բ. եր. 29.

Առաւօտուն թոնիր մուխ.
Աչքեր բալաք, ընքուեր թուխ.
Արի երթանք Մուշ Բուլանուխ,
Ցրուի մեր սրտի քէն ու ոխ։

Նոյնն իբրև քառեակ և Սրուանձտեան «Համով-Հոտով», եր. 320.

Սաման կելնէր բարակ ծուխ,
Եարիկ մ՚ունէնք Բուլանուխ.
Զարկեց մախճան, թալեց պուխ.
Երես կարմիր, աչքեր թուխ։

Նոյնն և Ազգագր. Հանդ. VII–VIII եր. 442.

Եար մ՚ունիմ Բուլանուխ,
Հագեր ճուպէն, թօրկեր պուխ.
Ծօպլակ պած, բարակ մատնիր,
Աչքեր բալաք, ընքներ թուխ։

Մենք ունինք և հետևեալ քառեակը.

Առաւօտուն թենիր մուխ,
Եաշմաղ զարկիր, թօրկիր պուխ.
Կլոր աչքեր, ընքեր թուխ։
Աժէր Մուշն ու Բուլանուխ:

Այս մի և նոյն խաղի մի երկեակ գտնում ենք և Սեդրակեան «Բնար Մշեցոց և Վանեցոց», եր. 31.

Աղջիկ, մի՛ գար, մեր տուն ծուխ ի,
Դիլբար, մի՛ գար, մեր տուն ծուխ ի,
Կարմիր երես, աչքեր թուխ ի։

Այստեղ խաղն ըստ երևութին միայն եռատող է. իրօք դա երկեակ է, որովհետև երկրորդ տողը «Դիլբար, մի՛ գար, մեր տուն ծուխ ի», մի առանձին տեսակի կրկնակ է, ինչպէս նոյնը գտնում ենք նոյն տեղում և ուրիշ խաղերի համար, ինչպէս են՝

Աղջիկ, մի՛ գար, մեր կալերով,
Դիլբար, մի՛ գար մեր կալերով,
Դիլբարի ձին էր նալերով։ Եւ այլն։

Այսպէս, տեսնում ենք երկեակից եռեակներ և քառեակներ են զարգանում բազմազան ձևերով։ Մենք բացատրութիւնների մէջ մտնելու փոխանակ՝ աւելի լաւ ենք համարում մի օրինակ էլ բերել թէ ինչպէս եռեակից մի

տող աւելանալով կազմւում են քառեակներ։

Լալայեանի «Ջաւախքի բուրմունք» եր. 22. կայ հետեւեալ եռեակը.

Առաւօտուն թոնդրին բոց,
Արճ էղնինք գիրկ ու ծոց,
Որ գայ խամրի դարդ ու խոց։

Այս եռեակն իբրեւ քառեակ, մի տող աւելացած, գտնում ենք Շէրէնցի «Վանայ սազ» Բ. եր. 29.

Առաւօտուն թոնիր բոց,
Արճ մտնենք իրար ծոց,
Պագ մը ես տամ, պագ մը դու,
Ցրուի մեր դարդ ու խոց։

Նոյնն ուրիշ ձեւով Ազգ. Հանդ. VII–VIII եր. 444.

Առաւօտուն թոնիր բոց,
Կախիր եաւմաղ, բորկիր պոչ,
Արճ էնենք գիրք ու ծոց,
Բոլքիմ խմրի դարդ ու խոց։

Ութ-վանկանի խաղերի զարգացման համար էլ բերենք մի երկու օրինակ։

Լալայեանի Ջաւ. Բուրմ. եր. 19. «Կայնէ, փիդան բոյիդ ղուրբան» կրկնակի տակ կայ.

Իլեր ես, կերթաս կը մարագ,
Թեւերդ էրկան, մէջքդ բարակ,
Կերածդ է միշտ մեղրով կարագ։

Նոյնը Սեդրակ. Բն. Մշ. և Վան. եր. 23. «Աղջիկ եար անենք» եղն. կրկնակի տակ.

Դու էլեր ես կերթաս մարագ,
Վիզդ երկէն, մէջքդ բարակ.
Ինչ որ նազնես՝ քե մուշբարագ։

Այս երկու եռեակի մէջ հաստատուն հիմնական մասն է առաջին երկու տողը. իսկ 3-րդ տողը երկուսի մէջ էլ նոր աւելացած ու տարբեր են։ Մեր ժողովածուի մէջ այս երկու աճած տողը միասին կան, որով նոյն խաղը քառեակ է դարձած.

Դու ելեր ես կերթաս մարագ,
Վիզդ երկէն, մէջքդ բարակ.
Կերածդ մեղըր ու կարագ,
Հագիդ հալաւ քեզ բումբարակ։

Սեդրակեան Բն. Մշ. և Վան. եր. 30. «Արի՛ եա՛ր, արի՛» երն. կրկնակի տակ գտնում ենք նոյն իբրև եռեակ, միայն վերջին երկեակի հետ առաջին երկեակից մի տող միացած.

Դու ելեր ես կերթաս մարագ,
Քու ուտելուն մեղր ու կարագ,
Հագնելուս քե բուն բարակ։

Նոյնը Սրուանձտ. «Մանանայ» եր. 292. իբրև վիճակի երգ.

Ելեր ես կերթաս ուխտ վարագ.
Քո ուտելիք սեր ու կարագ.
Ինչ հագեր ես քե մուբարէք։

Նոյնը Շէրենց «Վանայ Սազ» Ա. եր. 97. դարձեալ վիճակի երգ, միայն վերջի երկու տողը շուռ տուած.

Ելեր ես կերթաս վարագ,
Ինչ ես հագե՝ քե մումբարագ.
Քո կերածն է սեր ու կարագ։

Սեդրակ. Բն. Մշ. և Վան. եր. 31. գտնում ենք հետևեալ երկեակը իւր միջի կրկնակով.

Արի՛ երթանք հօրթկայ խոտիկ,
Դիլբար, երթանք հօրթկայ խոտիկ.
Տեսնենք վէր եարն ա խորոտիկ։

Նոյնը Մխանսարեան «Բնար Հայկական», եր. 177. գտնում ենք զարգացած իբրև քառեակ.

Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Դու կապել ես կարմիր գօտիկ.
Երթանք քաղենք կանաչ խոտիկ,
Տեսնենք վէր եարն ա խորոտիկ։

Նոյնն ուրիշ ձեւով զարգացած. Ազգ. Հանդ. VII–VIII գիրք. եր. 443.

Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Երթանք քաղենք հորթկան խոտիկ,
Բերենք դնենք մսրին մօտիկ,
Տեսնենք վէր եարն ա խորոտիկ։

Նոյնը դարձեալ ուրիշ ձեւով զարգացած Շէրենց Վան. Սաղ. Բ. եր. 43.

Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Երթանք քաղենք որթկան խոտիկ,
Իմ եար քանց քոն չատ խորոտիկ,
Եարոջս մեռնեմ՝ անուն Վարդիկ։

Պատահում է երբեմն, որ երգչի քմահաճոյքով մի կամ աւելի տող եւս աւելանում է քառեակի վրայ, որով երգը խաղի սովորական ձեւից դուրս է գալիս։ Օրինակ՝ Փնար Հայկական եր. 177 կայ հետեւեալը.

Մեր տան ետե քառասուն կարաս,
Քառասուն կարսի գինին էր խաս.
Ոսկէ գիգիմ՝ արծըթէ թաս.
Ամէն թասին պագիկ մը տաս։

Նոյնը մի տող աւելացած գտնում նոյն գրքի մէջ եր. 178.

Մեր դռան յետե տուն մի կարաս,
Ձեր դռան յետեւ տուն մի կարաս,
Ամեն կարսի գինին էր խաս,
Ոսկի գիւգիւմ՝ էրծաթէ թաս,
Ամեն թասին պագ մը կուտաս։

Այս մի եւ նոյն երգը գտնում ենք Ազգ. Հանդէս VII–VIII եր. 443. աւելի եւս ընդարձակուած.

Մեր դռան առաջ քառասուն կարաս,
Ձեր դռան առաջ քառասուն կարաս.
Քառասուն կարսի գինին է խաս.
Ամէկ կարսէն մէկ թաս ի տաս.

Ամէկ թառին մէկ պուդ ի տաս.
Թէ դու չի տաս, դու գօտենաս։

Մենք ունինք մի վարիանտ եւս, որի մէջ 3-րդ տողից յետոյ կայ «Ոսկի գլուգլում արծաթէ թաս», որ այստեղ պակասում է և մինչև անգամ մի 8-րդ տող վերջից. «գօտենաս ու որբևէրնաս»։

Ճիշտ այսպիսի աւելցուկ տողեր ունի և հետևեալ խաղը Ազգ. Հանդէս VII–VIII եր. 442.

Ծառի տակի սլաղ աղբիւր,
Արծաթէ թաս, ոսկի ջուր.
Ես կը վառիմ քո սիրուն.
Թաս մի կուզեմ երկուս տուր.
Թէ որ չի տաս՝ գօտենաս.
Գօտենաս որբևէրնաս։

Այս խաղի հիմնական երկեակը գտնում ենք Սրուանձտ. Համ. Հոտ. եր. 327.

Ծառի տակի պաղ աղբիւր,
Մէկ դու խմէ, մէկ ձի տուր։

Իսկ զարգացած ձևերից է մեր ժողովածուի մէջ.

Հով ծառի տակ պաղ աղբիւր.
Արծաթէ թաս, ոսկէ ջուր.
Մին ես խմեմ, մինը դու.
Անուշ կինանք ես ու դու։

Վերջին տողն ունի և հետևեալ ձևը. «Դատաստանին ջուհար տու»։

Բերենք մի քանի օրինակ և հինգ կամ տասն-վանկանի խաղերի զարգացումից.

Սրուանձտ. Համով-Հոտով. եր. 328 կայ.

Էս օր ինչ օր է, ուրբաթ ու պաս է.
Աղջիկ քո գլուխ արծաթէ թաս է.
Խորած վարդապետ կասէ՝ չհաս է։

Նոյնը Վանայ Սաղ. Ա. 39.

Էս օր ինչ օր ի, ուրբաթ ու պաս ի.
Աղջիկ, քո գլուխ արծաթէ թաս ի.
Տղա՛յ, քո գլուխ սրմալու թաս ի.
Խորած վարդապետ կասի չհասի։

Համով-Հոտով եր. 328 կայ.

Երկինքն էր ամպէր, կուգէր մարմար ձուն.
Կըհալէր. կաթէր վեր մալուլ մարդուն.
Աստուած աւերէր ղամազ մարդու տուն։

Նոյնը Խաղեր ու Տաղեր եր. 121.

Երկինքն ի ամպեր, կուգար մարմար ձուն.
Կուղար կը թափէր վեր մալուլ մարդուն.
Աստուած աւիրէր ղամազ մարդու տուն.
Ջերող որ իմ եար մէկօր գեր մեր տուն։

Նոյնը Վանայ Սազ Ա. 39.

Երկինքն էր ամպեր, կուղէր մարմար ձուն.
Կուգէր կը թափէր վեր մալուլ մարդուն.
Մէկ ե՞ս եմ մալուլ, քե աշխարհ բիրուն.
Իմ եարոջ սիրուն մնամ երերուն։

Սրուանձտ. Համով Հոտով, եր. 328. «Պարերգ» վերնագրի տակ գտնում ենք մի շարք իրարուց անկախ խաղեր, որոնցից մէկն է.

Երէկ հէվարին
Ուչխար վեր բերին,
Թըւանքով զարկին,
Բըրինդար արին։

Այս քառեակի վարիանտն իբրև 10 վանկանի երկեակ առնուած՝ գտնում ենք Վանայ Սազ. Ա. 37. մի ուրիշ նման երկեակի հետ միացած իբրև պանդխտի երգ.

Երէկ էվարին վեր Սասմայ քարին,
Թըւանքով զարկին բըրինդար արին,
Խաբրիկ մ' տարէք իմ նազլու եարին,
Թէ չէ կը դրեմ մէջ էն դաւթարին։

Եթէ այսպէս շարունակելու լինինք, խիստ շատ օրինակներ կարող ենք բերել, որոնց մէջ պարզ երևում

է թէ ինչպէս **երկեակները**, *որոնք խաղերի տարրական ձևն են, զարգանալով դառնում են համեմատաբար աւելի մեծ խաղեր, եռեակներ և քառեակներ։ Յաճախ ի հարկէ դժուար է որոշել թէ արդեօք որն է հիմնական երկեակը, և թէ արդեօք հիմնական երկեակից է եռեակ ու քառեակ զարգացած, թէ ընդհակառակն։ Բայց այս դժուար է միայն նիւթի պակասութեան պատճառով։ Եթէ կարէոր նիւթը ձեռքի տակ ունենայ մարդ և համբերութիւն ունենայ մանր մանր աշխատանք անելու, կարելի է է ասել թէ միշտ կորոշուին խաղերի հիմնական ձևերն իրենց զարգացումներից։*

Խնդիրն այստեղ ի հարկէ այն չէր, որ մենք որոշէինք այս կամ այն խաղի հիմնական ձևն իւր զարգացումից, այլ ցոյց տալ թէ ինչպէս պարզ խաղերից կազմւում են բարդ խաղեր։ Եւ եթէ մենք մի փոքր աւելի օրինակներ բերինք, այդ միայն նրա համար, որ մեր ընթերցողների մի մասի ծանօթութիւնը մեր ժողովրդական խաղերին՝ շատ աւելի չէ քան «Մուրճ» ամսագրի գաւառագիտուն մատենախօսին, որ՝ եթէ որ և է խաղի այս կամ այն ձևը իրեն յայտնի չէ, համարում է «սարքովի», «թխովի», «շինծու», «աղճատուած», կամ «ոչ ժողովրդական» և այլն։ Այդպիսիներին կարճ խօսքով բան հասկացնելը դժուար է։

Բայց մենք դառնանք մեր երգերի զարգացմանը։

(Կը շարունակուի)

Մ. Աբեղեան.

ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Վահրամ իշխանի վրայ մի կարմիր, որին քար է ձգած և վրան գրուած է.—Այս ամփոփին նշխարք Վահրամայ իշխանայ իշխանի Հայոց մեծաց, ի ցեղէ Պահլաւունի, որ նահատա-

կեցաւ ի Թուրքաց պատերազմի ի Մարմաշէնի հայոց Թվ. ՆՂԴ. Քարի հիւսիսային կողմը գրած է.—Ի տապան նորոգեցաք, իսկ վրան նկարած է մի խաչ.

Վահրամի մահուան մասին ժամանակագիր Արիստ. Լաստիվերտցին այսպէս է պատմում.

«Յոյներն Անին առնելով, տիրեցին Հայաստանին. այնուհետև սկսեցին հարկերը ծանրացնել, Հայոց մեծամեծ իշխաններին իրանց տեղերից հալածել և իրանց բարեկամ կաթողիկոսին էլ տեղից աքսորել. դրանով էլ չբաւականացած՝ ուզեցին Դուին քաղաքն էլ տիրել. բայց հակառակը դուրս եկաւ. որովհետև Դուինի պատերազմի մէջ յաղթուեցին: Դուինի Ապուսվար ամիրան քրիստոնեաների վրայ զայրացած՝ յոյների փոխանակ, հայերին սկսեց հալածել. և ստիպեց քրիստոնէական հաւատն ուրանալ. սակայն Վահրամ Պահլաւունին չհնազանդուեց ամիրային և որպէս եկեղեցու և հայրենիքի պաշտպան՝ Ապուսվարի դէմ պատերազմի դուրս եկաւ. Չնայելով որ Վահրամն յաղթեց. բայց ինքն էլ ընկաւ պատերազմի մէջ (1087 Թ.): Վահրամի մարմինը Մարմաշէնում թաղելու մասին, եկեղեցու հիւսիսային պատի արձանագիրը պատմելով Ղարիբ Մագիստրոսի մահը՝ ասում է.—Զմարմին նորա (Խաչիկի) բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ Կաթողիկէիս, մերձ առ նշխարս յանուն մերոյ Վահրամայ իշխանի»:

Եկեղեցու հիւսիսային և հարաւային պատերի վրայ եղած մեծ անապարգ արձանագիրն այստեղ կրկնելն աւելորդ եմ համարում, որովհետև դրանց բովանդակութիւնը ծանօթ է ընթերցողներին Աբէլ եպիսկոպոսի, Հ. Ալիշանի և վերջերս հրատարակուած Մելքիսեդէկ քահանայի աշխատութիւններից: Այդ արձանագրութիւնները վերաբերում են եկեղեցու շինութեան կամ վերանորոգուելու հանգամանքներին, որոնց մէջ պատմւում է, թէ ինչպէս Պահլաւունի հիմնադիրները կամ նորոգողները ոչինչ ջանք և աշխատանք չեն խնայել իրանց ձեռակերտը զարդարելու և նրան շէնացնելու համար նուիրել են գիւղեր, խանութներ, ջրաղացներ, այգիներ և հողեր:

Այդպիսի մեծաքանակ նուէրները տուել են պահլաւունիները ապահովելու «բազմադումար քահանայից» ապրուստը, որոնք պէտք է պատարագ մատուցանէին նուիրողների մերձաւորների յիշատակին: Մարմաշէնում առաջնորդներ են եղել Երեմիա և Սոսթենէսը: Հաւանական է, որ Մարմաշէնի առաջնորդութիւնը շատ չէ տևել. նա էլ Հայաստանի միւս վանքերի հետ ենթարկուել է մոնղոլների աւարառութիւններին և հե-

տրղհետէ քայքայուել, ամայացել է:

Արդէն յիշեցինք, որ եկեղեցու երկու կողմում կան ուրիշ փոքր եկեղեցիներ. նրանցից հիւսիսայինը մէկ սաժէն միայն հեռու է, իսկ հարաւայինը մօտ 10-ը սաժէն: Սրանց ձեւը նման է մեծին. հիւսիսայինը կիսաւերծան է և ոչ մի արձանագրութիւն չունի. իսկ հարաւայինը բաւական նոր է, դրսի երեսի քարերը վերևից սաժէնաչափ թափուած: Այս եկեղեցու անունը կոչւում է ս. Պետրոս: Այդ անունը իմանում ենք մեծ եկեղեցու հարաւային պատի վրայ եղած Մարիամ Թագուհու արձանագրութեան մէջ:

Ս. Պետրոս եկեղեցու երկարութիւնը՝ սեղանի առաջից մինչև դուռը 7 արշին է, իսկ լայնութիւնը՝ 8 արշին. սեղանի աջ և ձախ կողմերում կան քառակուսի խորաններ երկու արշին լայնութեամբ. նոյնպիսի խորաններ կան արևմտեան դրան մօտ. այս եկեղեցին ունի խաչկալ և ուրիշ սպասներ, կարմիր շալէ կտորից մի լաւ վարագոյր, նուիրուած 1885 թ. մարտի 2-ին,—յիշատակ Սալոմէ Յակովբեան Չիթողցեանի:

6.

Կարնից գաղթած ժամանակ, Պօղոս վարդապետ Ջանլաթեանը Հասան—Ղալայից իւր հետ բերեց «Եօթն-վկայց» ս. Աստուածածնի պատկերը և ժամանակաւորապէս դրեց Մարմաշէնի վանքում: Պատկերին ամեն կողմից ուխտաւորներ էին գալիս և բաւական արդիւնք թողնում: Սրանով օգտուած՝ վարդապետը սկսեց վանքի քանդուածները նորոգել: Բայց Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսը նրան ս. Պատկերի հետ տեղափոխեց Հառիճ: Այդ օրից սկսած Հառիճը կենդանացաւ: 1850 թուին Ալէքսանդրապօլի մի քանի բարեպաշտ անձինք ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան հաւանութեամբ մի հոգաբարձութիւն կազմեցին, որին մշտական նախագահ և ղեկավար եղաւ Տէր Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց: Հոգաբարձութիւնը նախ և առաջ նորոգեց ս. տաճարների քայքայեալ մասերը, ապա մաքրել տուեց փլատակները և ի վերջոյ 1856 թուին շինեց մի քանի սենեակներ, որոնց մէջ բացեց ուսումնարան գիւղացի մանուկների ուսման համար:

Այդ բարի օրինակին հետևեցին մի քանի ուրիշ Ալէքսանդրապօլցիներ և 1859 թուին խնդրամատոյց եղան Մատթէոս կաթուղիկոսին, որ հոգաբարձութիւն հաստատէ Ղանլիճու վանքերի վրայ, նախագահ նշանակելով Մովսէս քահանայ Երե-

մեանցին: Քսան հոգի էին այս նոր ընկերութեան անդամները՝ որոնք ամսական պարտաւորւում էին մի-մի րուբլի վճարել յօգուտ գործի: Բացի անդամավճարներից, հոգաբարձութիւնը պէտք է ստանար մեծ վանքի մէջ եղած «Կարմիր Աւետարանի» արդիւնքի կէսը, որը տալիս էր մօտաւորապէս 40—50 րուբլի: Ընկերութիւնն իւր գոյութեան ընթացքում ս. Պետրոսի եկեղեցին իւր ձեռքն առաւ, թեթև կարկատաններ արեց, խաչկալ շինել տուեց, եկեղեցական անօթեղէններ ձեռք բերեց՝ շինել տուեց մի փոքրիկ ուսումնարան երկու սենեակից և մէկ բակից բաղկացած: Ուսումնարանի շինութեան վրայ հոգաբարձութիւնը ծախսեց մօտաւորապէս 150—200 րուբլի:

Սակայն այս ընկերութիւնը երկար ժամանակ չկարողացաւ գոյութիւնը պահպանել. նախ որ իրանք անդամները չքաւոր մարդիկ էին, որոնց համար ամսավճարը ծանր էր և երկրորդ՝ որ ընկերութիւնը քաղաքի մէջ երկրորդը լինելով, որ իրան էր քաշում ուխտաւորների մի մասը, այնպէս որ Հաւլճու արդիւնքները զգալի կերպով սկսի պակասէին, ուստի խրախոյս չգտաւ տեղի Հոգևոր իշխանութիւնից և երկրորդ՝ ինքը՝ հայր նախագահը ձեռնհաս մարդ չէր: Հինգ տարի միայն դպրոցում դասերը շարունակուեցին: Այդ ժամանակ դպրոցում սովորում էին 25—30 աշակերտ: Չկարողանալով կանոնաւոր ուսուցիչ վարձել, բաւականանում էին խալֆաներով՝ որոնց վճարում էին տարեկան 120 րուբլի: Ընկերութիւնը կաղի կաղ առաջ գնալով, հետզհետէ լուծուեց: 1879 թուին այս ընկերութիւնը կրկին նորոգուեց. նորերին միացան հեռացածներից մի քանիսը: Նորոգուած ընկերութիւնը առ ժամանակ շարունակեց հնի գործունէութիւնը, մինչև վրահասաւ 1884 թուի դպրոցների փակումը, որոնց հետ փակուեց նաև Դանլիճու դպրոցը: Այնուհետև ընկերութիւնն էլ քայքայուեց, վերստին չնորոգուելու պայմանով:

Ընկերութեան վերջնականապէս լուծուելով՝ չվերջացաւ նախագահի պաշտօնը: Հայր նախագահը իւրացրեց ս. Պետրոս եկեղեցու վանահօր պաշտօնը, որ տևեց մինչև 1900 թիւը: Ամեն կիւրակի տէր վանահայրը, բանալին գրպանում, ստիպուած էր ձիով գիւղ գնալ, ուխտաւորներին այցելութեան: Նա սիրով երբեմն էլ հայրաբար բարկանալով ուխտաւորների վրայ, բաց էր անում եկեղեցու դուռը, «Տէր Սահակի աւետարանն» էր կարդում նրանց վրայ և հաւաքելով նրանց արդիւնքները, դառնում էր տուն: Յիշեալ թուին Հոգ. Կառավարութիւնը վերջնականապէս առաւ տէր հօր ձեռքից եկեղեցու բանալին,

միևնոյն ժամանակ պահանջելով նրանից 1000 րուբլու բաց մնացած հաշիւը: Իսկ գպրոցական շէնքը քայքայման դրութեան հասած, մնում է ամայի: Ոչ ոք չի մտածում նորոգելու և յարմարացնելու քաղաքից գնացող բազմաթիւ ուխտաւորների համար:

Այժմ «Կարմիր Աւետարանի» ամբողջ արդիւնքը մնում է գիւղի եկեղեցուն: Ես հետաքրքրուեցի իմանալու թէ որքան արդիւնք է ստացւում Աւետարանից: Ինձ հաւատացրին, թէ հազիւ 50 րուբլի կը լինի: Սրա հակառակ գործին տեղեակ անձինք պնդում են, որ Աւետարանի արդիւնքը 400 րուբլու չափ կը լինի, չհաշուելով շուշպաները՝ փթերով խունկն ու մոմը: Գիւղացիք Աւետարանի արդիւնքները ապօրինի կերպով գործ են դնում հասարակական ծախսերի վրայ:—Նրանցով ամարանոցի հող են վերցնում, նախրչուն վարձ տալիս և լն: Արդիւնքից աւելի օգտւում են հաշուետուներն ու երեցփոխը, նրանք փողի կարիք ունենալիս, վերցնում են իբր փոխառութիւն: Այստեսակ փոխառութիւններ արել էին գիւղացիք, միայն անցեալ տարի քաղաքագլուխ պ. Գեղամ Տէր Պետրոսեանի օժանդակութեամբ և գիւղացիների պարտքերը ժողովելով՝ եկեղեցու վրայ ծախսեցին մօտաւորապէս 400 րուբլի:

Ձեռագրեր.

Եկեղեցում կան հետևեալ ձեռագիր աւետարանները.— 1) Թղթեայ, երկէջեան, բոլորագիր մեծադիր աւետարան: Սա գրուած է ՌՀԲ (1623 թ.) կարմիր կաշեկազմ ունենալու համար կոչւում է «Կարմիր Աւետարան»: Կազմը նորոգուած է ՌՃԼ. թուին (1684), Բջնի գիւղում: Յիշւում է նաև Քանաքեռի և Աստուածածնի եկեղեցու անունը: Գրչութեան արուեստը նշանաւոր չէ: Այս աւետարանին են ուխտ գալիս քաղաքից ու գիւղերից: Աւետարանը երկար ժամանակ սեպհականութիւն էր Գալուստ անունով մի գիւղացու: Նրա տունը մինչև օրս էլ օթևան է համարւում, որտեղ ուխտ են դնում: Այժմ աւետարանը գտնւում է եկեղեցում և պահւում է առանձին տուփի մէջ:

2) Արծաթէ շրջանակով և ապակէ ակներով մեծադիր կաշեկազմ աւետարան: Սկզբի երեսներում նկարուած են ս. Գրքից և աւետարանի պատկերներ, օրինակ. աշխարհի ստեղծումը, նախածնողները դրախտում, նրանց մեղանչելը, դրախտից արտաքսուելը. Աբրահամի Իսահակին զոհելը և յն. Յիսուսի ծնուն-

դը, մկրտութիւնը, Տաճար տարուիլը. Մոգերի երկրպագութիւնը, Երուսաղէմ մտնելը, Չարչարանքը, Թաղումը. Յարութիւնը եւն. Պատկերների մէջ իշխում են դեղին, կարմիր և կանաչ գոյները, թէ դրչութիւնը և թէ նկարները ցոյց են տալիս ճաշակի և հմտութեան բացակայութիւն, յիշատակարան չունի:

3) Փոքրադիր աւետարան. Սա գրուած է անհամեմատ մաքուր և գեղեցիկ: Գեղեցիկ են նոյնպէս պատկերները: Գրուած է ՌՃԼԶ թուին (1687). Գրողն է Տէր Մխիթար անունով մէկը. Այս գեղեցիկ աւետարանը յիշատակ է տուել Ղանլիճու եկեղեցուն Բայազէտցի Աւետիս Մելքոնեանը:

4) Մագաղաթեայ աւետարան, միջակ դիրքով, գրուած ՌԾԱ թուին (1602). յիշատակարանի մէջ ասւում է.—Ի հայրապետութեան Սարգսի և Յովհաննիսի Աղուբբէկի որդւոյ Հառան բէկի—անճաշակ, անարուեստ գործ է:

5) Մեծադիր թղթէ ճաշոց. կաշեկազմ. մաքուր և լաւ դրչի արդիւնք. գրուած 1736 թ. գրողն է Կիրակոս անունով մէկը. ստացողն է Սահակը, իր Գիւլում, Մահտեսի Կիրեղ եղբայրների յիշատակին. վերջից թուղթ է ընկած. յիշատակարանը թերի է. ամա . . . . երկիրն . . . . նան . . . . երես անկեալ էին:

6) Վերին Ղանլիճայում կայ մի Յայսմաւուրք Թաշնադիր և ծաղկանկար. սկզբից մի քանի թուղթ պակասում է. դեղնել է և խոնաւութիւնից շատ տեղ չի կարելի կարդալ. վերջանում է Յովասափի և Բարլաամու պատմութիւնով, որ բռնում է երկէջեան 25 երես: Ստացողն է Գորեցի Ամիրբարի որդի Մահտեսի Ալղբարի որդին՝ յիշատակ իւր կողակից Ալումի Սուլթանին:

Բեւեռագիր արձանագրութիւնը.

Պատմական և բանասիրական տեսակէտից աւելի նշանակութիւն ունի Ղանլիճու հնագոյն մի յիշատակարան: Խօսքս բեւեռագիր արձանագրութեան մասին է, որ գտնւում է Ղանլիճու գիւղին Բաղալեան ժայռի վրայ: Արձանագրութիւնը հինգ տողից է բաղկացած և այնպէս լաւ է մնացել, որ կարծես երեկ լինի փորուած: Բեւեռագէտների կարծիքով այս արձանագրութիւնը պատկանում է Ուրարտեան Արգիշտի թագաւորին: Նրա մէջ Արգիշտին պատմում է Էրիախի երկրի և Իրտինիունի քաղաքի նուաճումը: Հաւանական է, ասում են բեւեռագէտները, որ Էրիախի երկիրը գտնուէր դաշտի վրայ, իսկ Իրտինիունի

քաղաքը այժմեան Ղանլիճա տեղը, որտեղ բլրի վրայ կան հին շէնքերի մնացորդներ։ Այս կէտը ռազմական տեսակէտից շատ նշանաւոր էր՝ ինչպէս որ այժմս է: Այստեղից երկու ճանապարհ է բացւում. մէկը տանում է դէպի Բարձր Հայոց լեռները՝ այժմեան Կարսի նահանգը, իսկ միւսը, Արփաչայի ձորով անցնում է դէպի Փոքր—Կովկաս, դէպի Կուր գետի հովիտը, այժմեան Ալախքալակի և Ախալցխայի վրայով: Թէև այս ուղին շատ դժուարագնաց է, բայց բնական ճանապարհ է, որ տանում է դէպի Հիւսիսային Կովկաս:

Բնական է, որ Արգիշտու նման աշխարհակալ թագաւորի համար Ալէքսանդրապօլի հիւսիսային դռները շատ կը հետաքրքրէին նրան։ Արգիշտին տիրելով պատերազմական այս նշանաւոր կէտին, իւր ձեռքում կունենար Փոքր Կովկասի բոլոր անցքերը: Այս տեղից ապա կերպով նա կարող էր առաջ շարժել իւր զօրքը ինչպէս դէպի Աղստևի հովիտը, այնպէս էլ Արփա-չայի հովիտը: Բայց արդեօ՞ք օգտուեց նա այս դռներով, որոնք պարզապէս նրա ձեռքն էին, արդեօ՞ք նա իւր զէնքի հետ քաղաքակրթութիւնն էլ մտցրեց հեռաւոր հիւսիսում, Մեծ-Կովկասի բարձրութիւններից այն կողմը՝ յայտնի չէ. նոյնպէս չի կարելի ասել, թէ նա այդ փորձերը չարեց: Գուցէ ապագայ հետախուզութիւնները հաստատեն, որ նա հեռու է գնացել:

Ն. Ք. Նիկողոսեան.

Ալէքսանդրապօլ:

Աշխատութիւնս կազմելիս օգտուել եմ հետեւեալ աղբիւրներից

1) Շիրակ Հ. Ալիշանի։ 2) Շիրակայ հնութիւններ.—Աբէլ Եպիսկոպոսի։ 3) Հայոց վանքերը.—Կ. Կոստանեանի։ 4) Ուրարտեան արձանագրութիւնք.—Նիկոլսկու։ 5) Արիստակէս Լաստիվերտցի.—Պատմ. Հայոց։ 6) Եկեղեցական պատմութիւն.—Յուսիկ վարդ. Մովսիսեան։ 7) Հայոց պատմութիւն.—Ս. Պալասանեան։ 8, Համառօտ տեղագրութիւն մեծին Շիրակայ.—Մելքիսեդէկ քահանայ Գէորգեանի։ 9) Պատմութիւն Հայոց.—Ասողիկ։ 10) Հոգ. կառավարութեան արխիւից։

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Որովհետև ոչ մի երկիր հնում այնքան նշանաւոր դեր չի խաղացել որքան Յունաստանը, ուստի աւելորդ չենք համարում նախ քան մեր ճանապարհորդական նկարագրութեան անցնելը, յառաջաբանի փոխարէն մի քանի խօսք ասել մեր ընթերցողներին յունաց պատմութեան ծագման մասին, մանաւանդ երբ մեր այցելած աւերակներն էլ մասնաւորապէս կապ ունին այդ պատմութեան հետ։

Ինչպէս բոլոր ազգերի, այնպէս և յունաց հնադարեան պատմութիւնը ներկայացնում է մի դաշտանկար, (ландшафт) որի մօտի բարձրութիւնից նայողի աչքին անտեսանելի են դառնում դաշտանկարի մանր իրերը, չ'կորցնելով իհարկէ ընդհանուր պատկերը. որոշակի ասել թէ այս ինչ ժամանակից է սկսւում յունաց պատմութիւնը կարելի չէ. այդ մասին լռում են նոյն իսկ յոյն հնադարեան պատմագիրները, իրենց ազգի ծագումը դիւցազուններից սերուած համարելով. ով գիտէ գուցէ հնադարեան այդ մատենագիրների նպատակից դուրս է եղել իրենց ժողովրդի ճշգրիտ պատմութիւնը աւանդելը և այդ պատմուածքների հետ դիւցազունների մասնակցութիւնը միայն այն նպատակով է եղած, որ իրենց դրուածքները ընթերցողներին աւելի հետաքրքիր դառնան. մոռանալ պէտք չէ սակայն, որ յոյնը թէև չունի իւր ծագման ճշգրիտ պատմութիւնը, բայց ձիգ դարեր-հողի տակ ծածկած պահելով իւր անցեալ փառքի աւերակ յիշատակները, դրամները, արձանագրութիւնները, արձանները և առհասարակ հնութեան այս տեսակի մնացորդները, այսօր ամբողջ լուսաւոր աշխարհի առաջ ոչ միայն պարծանքով կարող է խօսել, այլ և իւր աշխարհը, իւր նախնեաց մշուշով ծածկուած կեանքը, պատմութիւնը պարզել, լուսաբանելը հնարաւոր է դարձրել։ Ի վաղուց անտի յոյնը հասկացել է, որ հնութեան այդ մնացորդները բոլորն էլ արժէքաւոր են,

որովհետև նոքա ըստ մեծի մասին կապ ունին ինչպէս ընդհանուր քաղաքակրթութեան, այնպէս և ազգային պատմութեան, ժողովրդի կացութեան, հաւատքի հետ. Հին դրամների միջոցով օր. կարելի է մօտաւոր գաղափար կազմել ժողովրդի տնտեսական կեանքի մասին. երբեմն էլ այդ դրամների վրայի կրօնական նկարները կարող են ծառայութիւն մատուցանել կրօնի ուսումնասիրութեան համար։ Արձանագրութիւններն ու արձաններն*) էլ յունաց մշուշապատ պատմութիւնը պարզաբանելու խնդրում թէև գլխաւոր աղբիւր չեն կարող ծառայել, բայց փոքր ծառայութիւն չեն անի երբ պարզաբանեն ժողովրդի հաւատալիքը, սովորութիւնները, հին յունաց տնտեսական յառաջադիմութիւնը և ընդհանրապէս հնարաւորութիւն տան գաղափար կազմելու յունաց ներքին կեանքի և յոյն մտքի ստեղծագործող արուեստի մասին։

Ահա հէնց այդ յիշատակներն են, որ միջոց են տալիս գիտնականներին կարծելու, որ յունաց հնագարեան պատմութիւնը ծածկող մշուշը ցրուել է սկսում, երբ հանդէս են գալիս տառերը, գրականութիւնը և դրա հետ էլ դուրս են գալիս այդ մշուշից մարդիկ։

Հաւանական է համարւում, որ սոցա տառերի գիւտը եղած լինի IX-րդ կամ VIII-րդ դարում Ք. Ա.. VII-րդ դարուց յիշատակներ կան մնացած. ամէնահին արձանագրութիւնը համարւում է VII-րդ դարունը փորագրուած մի ամանի վրայ, որը պահւում է Աթէնքում. իսկ VI-րդ դարուց արձանագրութիւններ շատ կան արդէն։

Աթէնքում արքոնտների (իշխան) անունները յիշատակւում են մօտաւորապէս VII-րդ դարու սկզբում (682 թ.)**). այդ նոյն դարում սկսում են գրել վճիռներ, օրէնքներ. հաւանական է համարւում, որ այս դարուց

---

*) Որոնցով մի ժամանակ հարուստ է եղել Յունաստանը. իսկ այսօր միայն պատճէններն են պահւում. իսկականները գտնւում են Իտալ. Գերմ. Ֆրա. Անգ. Կ. Պօլսում և այլ տեղեր:

**) Gelzer.

մնացած լինին ինչպէս ընդհանրապէս արձանագրութիւններ, այնպէս և գերեզմանաքարերի վրայ ննջեցեալների անուններ գրելու սովորութիւնը. ոչ մի տեղ գրաւոր աղբիւրներ չկան դոցա մշուշով ծածկուած պատմութիւնը պարզող. հաւանականօրէն այդ ժամանակ գրով օգտուողների թիւը շատ քիչ էր. չկար ընթերցող հասարակութիւն. միայն անհատներն էին օգտւում... բայց որովհետև բանաստեղծութիւնը մինչև վերջն էլ չապրեց գիւցազունների աշխարհում և քանի մնաց այնքան աւելի մօտեցաւ կեանքի առօրեայ երևոյթներին—օրինակ. Սողոնը պատմեց իր օրէնսդրութեան մասին, Տերտուղիանոսը մեսսենական պատերազմների, Հերոդոտը Պարսկական պատերազմների, (480-479) Թուկիդիդեսը պելեպոնեսեան ճակատամարտի մասին որպէս ականատես, (429) Քսենոֆոնը իր պատմութիւնը հասցրեց մինչև 362 թուականները և այն—ահա այդ պատճառով էլ Յունաստանի հնութիւնները, պատմութիւնը ծածկող մշուշը աստիճանաբար ցրուել է սկսում և պատմական երևոյթներն ու դէմքերը կամաց կամաց երևում են այդ առասպելախառն պատմութեան միջից։

Եթէ հարցնեն թէ ինչ պէտք է մեզ յունաց աշխարհի պատմութեան ուսումնասիրութիւնը և այլն—կասեմ որ այդ անհրաժեշտ է նոյն իսկ, որովհետև յոյնի անցեալ պատմութիւնը յաւիտենականապէս հետաքրքիր է բոլոր ազգութիւնների, մարդկային ցեղի պատմութեան համար. որովհետև այն, ինչի համար մենք ու մեր ժամանակի մարդիկ աշխատում ենք և չենք կարողանում լիուլի ձեռք բերել, այն է կռւում ենք արդարութեան, ճշմարտութեան, ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան... համար և այլն, այս ամէնի համար շատ վաղուց կռուել է յոյնը և ցոյց տուել արար աշխարհին ոչ թէ կեղծ, այլ ճշմարիտ զարգացման այն ճանապարհը, դէպի ուր մարդկային ճշմարիտ քաղաքակրթութիւնը պիտի գնայ։ Վերջապէս այդ պատմութիւնը ուսումնասիրել պէտք է, որովհետև մեր այժմեան ժամանակի քաղաքակրթութիւնն էլ ենթադրւում է որ հիմնուած է յունական քաղաքակր-

թութեան վրայ. մենք ամէնքս էլ, բոլոր պետութիւններն էլ իրենց գիտութեամբ, արուեստներով, իդէալներով, քաղաքական և մտաւոր ազատութեամբ պարտական ենք Յունաստանին։ Յունաց պատմութիւնը մանաւորապէս հետաքրքիր է և մեզ Հայերիս համար, որովհետև մեր խաւար միտքը պարզող առաջին լոյսը այնտեղից ճառագայթեց...։

Թողնելով յոյն կեանքի և նրա յիշատակների հետ կապուած մանրամասն պատմութիւնը մասնագէտ պատմաբաններին, ես միայն իմ այցելած տեղերի ու տեսած հնութեանց վայրերի նկարագրութիւնը կը տամ, այդ ժողովրդի և երկրի մասին մի քանի խօսք ասելուց յետոյ*).

Ի սկզբանէ անտի որտեղ էր ընտրել իւր համար ապրելու տեղ այդ հնդիկ-գերմանական ցեղը, յայտնի չէ. բայց դոցա (յոյների, պարսիկների, գերմ. կելտերի և այլն). զանազանակերպ լեզուների համեմատութիւնից երևում է, որ նոքա խաշնարած կամ թափառական ժողովուրդ են եղել. իսկ այս տեսակի կեանքը շատ բնական է, որ չէր կարող իւր լեռներով-անտառներով սահմանափակուած մնալ. ինչպէս մարդկանց այնպէս և անասնոց բնական աճեցողութիւնը խաշնարածութեամբ զբաղուող ժողովրդին ստիպել է դուրս գալ և ցրուել աջ ու ձախ աւելի ընդարձակ տարածութիւններ բռնելու. այս բնական ճանապարհովն ահա հնդիկ գերմանական ժողովուրդը առանձին խըմբակներով ցրուելով զանազան կողմեր, կամայ ակամայ պիտի ընդհատէր իւր ներքին կապը միւսներից լեզուի և սովորութիւնների մէջ ահագին փոփոխութիւններ ունենալով հանդերձ. հետևանքն այն եղաւ, որ իւր ժամանակին մի ամ-

*) Յունաց պատմութեան ու կեանքին մօտիկ և մանրամասն ծանօթանալու ցանկութիւն ունեցողները կարող են օգտուել ի միջի այլոց հետևեալ աղբիւրներից՝ Фюстель и Куланж—древней общины, изслѣдованія о культѣ, правѣ и учреж. Грицiи. Э. Курціус; Греческая исторія; Герцберг ист. Греціи. Пельман крот, очерк. Греч. ист; Белох—исторія Греціи; Гиро—частная и ибщ. греков· с. франц. опис. частн с. греков. их. быта. кравов. обая. Гуревич—ист. Греціи.

բողջութիւն կազմող ժողովուրդը բաժան բաժան եղաւ և կազմեց առանձին ցեղեր ու ազգութիւններ. որովհետև ազգային ինքնուրոյնութիւնը ըստ մեծի մասին պահպանւում է լեզուով*), յոյն ազգի գոյութիւնն էլ ճանաչուեց այն օրից, երբ նրա լեզուն վերջնականապէս զատուեցաւ հնդիկ-գերմանական լեզուից. հէնց այդ օրուանից էլ սկսած յունաց պատմութիւնը իւր յիշատակներով հանդերձ պարտական է իւր լեզուին։

Այն երկիրը ուր յոյներն առաջին անգամ տեղաւորուեցան և բաժանուեցին ու մշակեցին իրենց ազգային ամբողջութիւնը կամ ինքնուրոյնութիւնը պահպանող օրէնքը, կարգերը և այլն, Թեսալիա կոչուած հովիտն է համարւում. որտեղից նոքա ժամանակի ընթացքում ցրուելով դէպի հարաւ, բռնել են Եգէեան և Հոնիական ծովերի միջավայրը. մի երկիր որ համարեա թէ ամբողջապէս ծածկուած է բարձրաբերձ լեռներով, որոնք և յունաց դիցաբանութեան պատմութեան մէջ դարձել են չաստուածների բնակարան. (Օլիմպիոս, Պառնաս, Պինտոս և այլն). այս երկիրը զարդարող լեռները յաճախ միանում են միմեանց հետ ձորերով և նեղ հովիտներով. երկրագործութեան համար միանգամայն անպէտք երկիր լինելով, տեղացիք ըստ մեծի մասին ստիպուած են հացը դրսից բերել։ Լեռներով և ծովերով հարուստ այս երկիրը իւր բնութեան գեղեցկութեամբ գուցէ նմանը չունի. ըստ մեծի մասին բուսականութիւնից զուրկ լեռները, ներքեւում երևացող կապոյտ ծովը, հարաւային արեգակի փայլ ի մի խառնուելով մի այլ տեսակ հրաշալիք են ներկայացնում։ Ամէնայն հաւանականութեամբ յոյներն իրենց այս հայրենիքում շատ երկար ժամանակ մնացին կիսակիրթ և վայրենի դրութեան մէջ. բայց ժամանակի ընթացքում աճելով ու բազմանալով սկսեցին միմեանց մօտիկ բնակութիւններ հաստատել, ընկերական կեանքի

*) Ազգայնութեան մասին ճշգրիտ գաղափար տալիս է Հերոդոտը:

վարժուել, հողային խրատանքներ ձեռք բերել, սեպհականութեան խրատունք սահմանել, ընտանիք, ցեղ և ապա ամբողջ գիւղեր ու մանր իշխանութիւններ կազմակերպել, պահպանելով իրենց մէջ մի ընդհանուր ներքին կապ. իսկ մօտաւորապէս 9-րդ դարում այս ցրուած իշխանութիւններին էլ մի վերջնական կազմակերպութիւն են տանում։ Մտաւոր կարողութեամբ ի բնէ օժտուած այս ժողովուրդը հաւանականօրէն 9-րդ դարուց յետոյ կրկնապատկում է իւր մտաւոր յառաջադիմութիւնը, որի արդիւնքներին երկրպագելու է գնում այսօր իսկ ամբողջ գիտնական աշխարհը միանգամայն հիանալով յոյն մտքի ստեղծագործութեամբ։

Յաւելով պէտք է ասել սակայն, որ յոյնի բնաւորութեան մէջ շատ վաղ ժամանակներից մնացել է մի վատ յատկութիւն. այդ նրա խաբեբայութիւնն է. առանց չափազանցութեան այս պակասութեան մէջ յոյները շատ հեռու են գնացել նոյն իսկ պարսիկներից. արդէն դոցա դիցաբանութեան մէջ գովասանքով է խօսւում Հերմէսի անկրաւացի և աւազակային յաղթութեանց մասին. նոյն իսկ բազմափորձ Ոդիսևսը դարձեալ չի կարող ազնւութեան տիպար համարուել. Հերոդոտը պատմում է ժամանակի յոյնի դատաւորների կաշառակերութեան մասին, Սոլոնը՝ Աթէնքի պետական մարդկանց անազնւութեան մասին և այլն. դժբախտաբար այդ ախտը յոյնի մէջ շարունակուել է նոյն իսկ երբ սկսել է իւր քաղաքակրթութեան գագաթնակէտին հասնել. այս շրջանում էլ դատաւորներից մեծագոյն մասը մեղադրւում էին գողութեան, կաշառակերութեան, խաբեբայութեան մէջ։ Բայց մի բան, որ ցայսօր էլ յոյնի մէջ մնացել է և որ ըստ ամէնայնի օրինակելի է, այդ այն է, որ յոյները չնայելով լեռներով բաժանուած են եղել միմեանցից և ունեցել են իրարից անկախ ու բաժան բաժան մանր իշխանութիւններ, թագաւորութիւններ, տարբեր բարբառներ, սակայն նոքա շատ հին ժամանակներից իրենց հնադարեան պատմութեան մէջ իսկ իրենց ազգային միութեան տեսակէ-

տից օրինակ են հանդիսացել շրջապատող ազգերին։ Հերոդոտը ամէնայն իրաւամբ կարող է բարձրաձայն կոչել թէ յոյների պէս միաբան ազգ չկայ աշխարհիս երեսին. նրանց զոհարանները, տաճարները, բնաւորութիւնները միատեսակ են…։ Յոյները ունեցել են և քաղաքական տարաձայնութիւններ, բայց երբեք չեն մոռացել իրենց ազգային միութեան անհրաժեշտութիւնը. և ահա այսօր շնորհիւ այդ արժանիքի, թէև արտաքին թշնամիները յոյնի համար շատ բան չեն թողել անցեալից, յոյնը սակայն դեռ չի կորցրել և չի կորցնի իւր ազգային ինքնուրոյն կեանքը, եթէ միայն սիրէ իւր հայրենիքը ճշմարիտ սիրով և հաւատարիմ մնայ նրան։

Ուսանողական ճանապարհորդութիւն Կ. Պօլսի, Զմիւռնեայի վրայով դէպի Յունաստան.

Մոսկուայի կայսերական համալսարանի պատմական լեզուագիտական ընկերութիւնը, իշխան Տրուբեցկոյի նախագահութեամբ, 1903 թ. ամառն ուսանողների մասնակցութեամբ ձեռնարկեց մի ճանապարհորդութիւն Պօլսի և Զմիւռնեայի վրայով դէպի Յունաստան, որը պիտի ունենար ոչ միայն ընդհանուր կրթական, այլ և գիտական բնաւորութիւն. յուլիսի 29-ին ճանապարհորդ ուսանողների խումբը, որոնց թիւն Օդեսսայում մօտ 140-ի հասաւ, պրոֆեսորների և մի քանի բժիշկների ուղեկցութեամբ հրաժեշտ պիտի տար Մոսկուային, որոնց թւումն էր և տողերիս գրողը։ Ուսանողների խումբը բաղկացած էր բժիշկներից, պատմաբաններից, բնագէտներից, իրաւաբաններից, լեզուագէտներից աւելի կամ պակաս առաւելութեամբ. թէև այսքան տարբեր, բայց ամէնքի նպատակը մի լինելով՝ ուսանողների ամբողջ խումբն այստեղ ներկայացնում էր որպէս մի ընդհանուր միութիւն. և կարելի է պարծենալով ասել, որ այս երիտասարդ սերունդը իրեն արժանի պատւով մինչև վերջն էլ պահպանեց այդ ամբող-

ջութիւնը, ընդհանուր ոգեւորութիւնն ու համերաշխութիւնը։ Սովորականից դուրս այդ օրը Կուրսկի կայարանում մի առանձին կենդանութիւն էր տիրում. բացի ուսանողներից կամ ճանապարհորդներից խմբուել էր այստեղ ահագին բազմութիւն, բարեկամներ, ընկերներ, մայր, քոյր և այլն, ամէնքն էլ իրենց ծանօթներին կամ զաւակներին բարի երթ մաղթելու. չորս վագոն յատկացրած էր բացառապէս էքսկուրսանտներին, մէկը երկրորդ կարգի, պրոֆեսորների և հիւանդների համար, իսկ միւս երեքը՝ երրորդ կարգի, ուսանողների համար։ Դեռ Մոսկուայից չէր հեռացել մեր շոգեկառքը, որ ուսանողներն իսկոյն խմբերի բաժանուեցան. (ամէն մի խումբը մօտ 10–12 հոգուց բաղկացած). իւրաքանչիւր խումբ իւր համար մի խմբապետ (староста) ընտրեց, որի պարտականութիւնն ու իրաւունքն էր պաշար մատակարարել իւր խմբին. պէտք եղած դէպքում միայն այս խմբապետները պիտի ներկայ լինէին այսպէս կոչուած տնտեսական խորհրդի նիստերին և վճռէին ու կարգադրէին ընդհանուրին վերաբերեալ այս կամ այն խնդիրը. նոյն իսկ պրոֆեսորների խորհրդակցութեամբ ծրագիրներ պիտի մշակէին մեր անելիք ճանապարհորդութիւնների համար. որովհետև ուսանողների բազմութիւնը դժուարութիւն կարող էր պատճառել խմբովին մի բան դիտելու, Օդեսսայում յարմար դատուեցաւ երեք մասի բաժանել ամբողջ խումբը առանձին առանձին պրոֆեսորների առաջնորդութեամբ. ուսուցչապետ Մալմբերգը պիտի բացատրէր հնութիւնների կամ արձանների գեղարուեստական մասը. իսկ Լեպպերն ու Նիկիտսկին՝ պատմական հնագիտական նշանակութիւնը պիտի պարզէին։ Շնորհիւ այս տեսակի նախապատրաստական միջոցների կարելի է ասել, որ ճանապարհորդութեան ընթացքում ժամանակը ըստ ամենայնի նպատակայարմար գործադրուեցաւ. բացի վերոյիշեալ ուսուցչապետներից մասնակցում էին էքսկուրսիային նախագահ Տրուբեցկոյ, Լօպատին, Ագնիով, Դաւիդով։ Ցուտով երրորդ կարգի վագոններից մէկում տեղաւորուեցաւ Թէ-

յատունը, երբ հսկայական հեշտաեռներով, ածուխի տոպրակներով, հացով լի քաղլակներով, շաքարի, թէյի և այլ իրերի արկղներով։ Միւս վագոնում բացուեցաւ դեղատուն, ուր և տեղաւորուած էին ի միջի այլոց բժիշկները. իսկ երրորդ վագոնը՝ ընդհանրապէս յայտարարութիւնների և տեղեկատու բաժանմունք (справочное отдѣленіе) պոստային մարկաներ, բաց նամակներ վաճառելու մաս կոչուեցաւ։ Այսպէս որոշ կազմակերպութեամբ մենք բարեաւի աղաղակներով օդը թնդացնելով թողեցինք Մոսկուան, որ մի քանի րոպէից յետոյ անյայտացաւ մեր տեսողութիւնից։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Շատ բառեր կան, որ չունին ճիշտ սահման, և խառնում են մէկը միւսին, սակայն մի և նոյն ժամանակ անհրաժեշտ են մտքեր հաղորդելու համար. այսպէս են դաստիարակութիւն (воспитаніе), կրթութիւն (образованіе) և մինչև իսկ ուսուցում (обученіе) բառերը։

Մանկավարժները երբեմն չեն ընդունում կրթութեան և դաստիարակութեան տարբերութիւնը և մի և նոյն ժամանակ առանց կրթութիւն, դաստիարակութիւն և ուսուցում կամ դասաւանդութիւն (преподованіе) բառերը գործ ածելու անկարող են իրենց մտքերն արտայայտել։ Անհրաժեշտաբար պէտք է որ այս բառերին համապատասխանող առանձին գաղափարներ լինին։ Գուցէ պատճառներ կան, որ բնազդաբար չենք կամենում ճիշտ և բուն իմաստով գործ ածել այս գաղափարները, սակայն գոյութիւն ունին այս գաղափարները և իրաւունք ունին առանձին առանձին գոյութիւն ունենալու։ Գերմանիա-

յում Erzinhung (դաստիարակութիւն) և Unterriht (ուսուցում) գաղափարները որոշ ստորաբաժանում ունին։ Ընդունուած է, որ դասաւանդութիւնը մտնում է դաստիարակութեան մէջ. որ դասաւանդութիւնը դաստիարակութեան գլխաւոր միջոցներից մէկն է. որ ամեն մի դասաւանդութիւն դաստիարակչական տարր ունի իր մէջ, ferziehliges Element: Իսկ կրթութիւն գաղափարը, Riloungը, կամ դաստիարակութեանն են խառնում կամ դասաւանդութեանը։ Գերմանացիների տուած սահմանը, որ ամենից ընդհանուրն է, հետևեալն է. դաստիարակութիւնն ամենալաւ մարդիկ կրթելու միջոցն է, որ պէտք է համաձայն լինի մարդկային կատարելութեան՝ որոշ գաղափարից մշակուած իդէալին։ Դասաւանդութիւնը, որ բարոյական զարգացում է պարունակում. թէև նպատակին հասնելու միակ միջոցը չէ, սակայն ամենագլխաւորներից մէկն է, որոնց թւում բացի դասաւանդութիւնից գոյութիւն ունի դաստիարակուողին որոշ՝ դաստիարակութեան նպատակի համար շահաւէտ պայմանների մէջ դնելը, այն է՝ կարգապահութիւնն (дисциплина) ու բռնութիւնը (Zucht)։

Մարդու հոգին, ասում են գերմանացիք, պէտք է մարզուի մարմնի պէս։ Der Geist muss gezöchtigt:

Ինչպէս ասուեցաւ, կրթութիւնը Գերմանիայում հասարակութեան մէջ և երբեմն մինչև իսկ մանկավարժական գրականութեան մէջ կամ դասաւանդութեանն ու դաստիարակութեանն են խառնում կամ հասարակական երևոյթ է ճանաչում, որի հետ մանկավարժութիւնը գործ չունի։ Ֆրանսերէնում նոյն իսկ չգիտեմ մի բառ, որ համապատասխանէ «կրթութիւն» գաղափարին. èducation, instruction, civilisation բոլորովին ուրիշ գաղափարներ են։ Նմանապէս և անգլիերէնում չկայ կրթութիւն գաղափարին համապատասխանող բառ։

Գերմանական գործնական մանկավարժները (педагогъ-практикъ) երբեմն մինչև իսկ բնաւ չեն ընդունում դաստիարակութեան և կրթութեան ստորաբաժանումը. թէ մեկը և թէ միւսը նոցա հասկացողութեան մէջ միանում,

մի ամբողջութիւն, մի անբաժանելի բան է դառնում։ Զրուցելով նշանաւոր Դիստերուեգի հետ խօսքը բերի կրթութեան, դաստիարակութեան և դասաւանդութեան խնդրին։ Դիստերուեգը կծու հեգնութեամբ խօսեց այն մարդկանց մասին, որոնք սորաբաժանում են այս գաղափարները,— նորա հասկացողութեամբ թէ մէկը և թէ միւսը միանում են։ Եւ մի և նոյն ժամանակ խօսում էինք դաստիարակութեան, կրթութեան և դասաւանդութեան մասին և լաւ հասկանում իրար։ Հէնց ինքն ասաց, որ կրթութեան մէջ կայ դաստիարակչական տարր, որ պարունակւում է իւրաքանչիւր դասաւանդութեան մէջ։

Ի՞նչ են նշանակում այս բառերը, ինչպէս են հասկացւում և ինչպէս պէտք է հասկացուին։

Ձեզ կրկնել այն վէճերն ու խօսակցութիւնները, որ ունեցել եմ մանկավարժների հետ այս առարկայի մասին, և ոչ էլ կըքաղեմ գրքերից այն հակասական կարծիքները, որ գոյութիւն ունին գրականութեան մէջ նոյն առարկայի մասին,—այդ չափազանց երկար կը լինէր, և իւրաքանչիւր ոք կարդալով մանկավարժական առաջին յօդուածը՝ կարող է ստուգել խօսքերիս ճշմարտութիւնը,— այլ այստեղ կ՚աշխատեմ բացատրել այս գաղափարների ծագումը, տարբերութիւններն ու հասկացողութեան անորոշութեան պատճառները։

Մանկավարժների հասկացողութեամբ դաստիարակութեան մէջ մտնում է դասաւանդութիւնը։

Մանկավարժութիւն կոչուած գիտութիւնը զբաղւում է միայն դաստիարակութեամբ և նայում է կրթուող մարդուն իբրև մի էակի, որ կատարելապէս ենթարկւում է դաստիարակողին։ Կրթուողը միայն նորա օգնութեամբ է ստանում կրթիչ կամ դաստիարակիչ տպաւորութիւններ, լինին սոքա գրքեր, զրոյցներ և յիշողութեան պահանջներ, գեղարուեստական կամ մարմնական վարժութիւններ։ Թոյլ է տրւում, որ ամբողջ արտաքին աշխարհն այնքան ազդէ աշակերտին, որքան որ դաստիարակողը յարմար կըդատէ։ Դաստիարակողն աշխարհի

ազդեցութիւնից իւր սանին անթափանցելի պատնէշով հեռու պահել է աշխատում և միայն իւր գիտական դպրոցական — դաստիարակչական ճաշակից բաց թողնում այն, ինչ որ օգտակար է համարում։ Չեմ խօսում այն բանի մասին, թէ ինչ էին անում կամ ինչ են անում այսպէս կոչուած յետադէմ մարդիկ. ես ջուր չեմ ծեծում, այլ խօսում եմ, թէ ինչպէս են հասկանում դաստիարակութիւնը և ինչպէս են դաստիարակում ամենալաւ կոչուած առաջնակարգ դաստիարակները։ Ամեն տեղ կեանքի ազդեցութիւնը մանկավարժի հոգացողութիւնից հեռացուած է, ամեն տեղ դպրոցը գրքի այն իմաստութեան չինական պարսպով է պատած, որի միջից կեանքի կրթիչ ազդեցութիւնն այնքան է միայն բաց թողնւում, որքան որ հաճելի է դաստիարակողներին։ Կեանքի ազդեցութիւնը չէ ընդունւում։ Այսպէս է նայում մանկավարժութիւն կոչուած գիտութիւնը, որովհետև իրաւունք է համարում գիտենալու այն, ինչ որ պէտք է ամենալաւ մարդ կրթելու, և հնարաւոր է գտնում սանից հեռացնել ամեն մի հակադաստիարակչական (внѣвоспитателный) ազդեցութիւն. այսպէս է վարւում և դաստիարակութեան պրակտիկան։

Այսպիսի հայեացքի շնորհիւ բնականաբար կշփոթուէին դաստիարակութիւնն ու կրթութիւնը, որովհետև ընդունւում է, որ եթէ չլինէր դաստիարակութիւն, չէր լինիլ և կրթութիւն։ Սակայն վերջին ժամանակներս, երբ սկսեցին ազատ կերպով զգալ կրթութեան ազատութեան պահանջը, լաւագոյն մանկավարժներն այն համոզման եկան, որ դասաւանդութիւնը դաստիարակութեան միակ միջոցն է, և այդ ստիպողական և պարտաւորեցուցիչ դասաւանդութիւնը, որի պատճառով և շփոթում էին երեք գաղափարներն էլ, այն է՝ դաստիարակութիւն, կրթութիւն և ուսուցում։

Տեսական մանկավարժի (педагогъ—теоретикъ) հակացողութեամբ դաստիարակութիւնը մի մարդու միւս մարդու վրայ ունեցած ներգործութիւն է և պարունա-

կում է՝ երեք գործողութիւն 1) դաստիարակողի բարոյական կամ բունի ազդեցութիւնը — կեանքի եղանակ ու պատիժներ, 2) ուսուցանելը, դասաւանդելը և 3) այն ազդեցութիւններով առաջնորդելը, որ կեանքը թողել է դաստիարակուողի վրայ։ Մեր համոզմամբ սխալն ու դաղափարների շփոթութիւնն այն բանից է առաջանում, որ մանկավարժութիւնն իր առարկան դաստիարակութիւնն է համարում և ոչ թէ կրթութիւնը և հնարաւոր չէ գտնում, որ դաստիարակողը կարողանայ նախատեսել, համեմատել և որոշել կեանքի բոլոր ազդեցութիւնները։ Իւրաքանչիւր մանկավարժ համաձայն է այն բանին, որ կեանքն իր ազդեցութիւնը թողնում է նախ քան դպրոց մտնելը և դպրոցից յետոյ, նաև դպրոցում եղած ժամանակ, չնայելով որ շարունակ աշխատում են կեանքը հեռացնել։ Այս ազդեցութիւնն այնքան զօրեղ է, որ մեծ մասամբ ոչնչացնում է դպրոցական դաստիարակութեան ամբողջ ազդեցութիւնը. սակայն այս բանը մանկավարժը մանկավարժութեան արուեստի և գիտութեան զարգացման թերութիւն է նկատում լոկ և յամենայն դէպս իր նպատակը մարդկանց որոշ եղանակով դաստիարակելն է համարում և ոչ թէ կրթելը, այսինքն այն ճանապարհների ուսումնասիրութիւնը, որոնց միջոցով կրթւում են մարդիկ, և այն, ինչ որ նպաստում է այս ազատ կրթութեանը։ Համաձայն եմ այն բանին, որ Unterrichtը, ուսուցումը (ученіе), դասաւանդութիւնը (преподаваніе) դաստիարակութեան, Erziehung-ի, մասն է, սակայն կրթութեան մէջ մտնում է թէ մէկը և թէ միւսը։

Դաստիարակութիւնը մանկավարժութեան առարկան չէ, այլ այն երևոյթներից մէկը, որին մանկավարժութիւնը չէ կարող ուշադրութիւն չդարձնել, իսկ մանկավարժութեան առարկան կարող է և պէտք է լինի միայն կրթութիւնը։ Մեր համոզմամբ կրթութիւնն ընդարձակ մտքով առած այն բոլոր ազդեցութիւնների համագումարն է, որոնք զարգացնում են մարդուս, տալիս են նորան աւելի լայն աշխարհայեցողութիւն, տալիս են նորան

նոր տեղեկութիւններ։ Մանկական խաղերն ու չարչարանքները, ծնողների պատիժներն ու գրքերը, աշխատանքներն ու բռնի և ազատ ուսուցումը, արուեստներն ու գիտութիւնները, կեանքը—բոլորն էլ կրթում են։

Կրթութիւն ասելով ընդհանրապէս կամ այն բոլոր ազդեցութիւնների հետևանքն է հասկացւում, որ թողնում է կեանքը մարդուս վրայ («մարդու կրթութեան» իմաստով գործ ենք ածում կրթուած մարդ) կամ նոյն այն ազդեցութիւնը, որ թողնում են մարդուս վրայ կեանքի բոլոր պայմանները (դերմանացու, մուժիկի, ազնուականի կրթութեան իմաստով գործ ենք ածում հետևեալը, մարդը ստացել է լաւ կամ վատ կրթութիւն և այլն)։ Մենք միայն այս վերջնի հետ գործ ունենք։ Դաստիարակութիւնն այն ազդեցութիւնն է, որ մի մարդ ունենում է միւսի վրայ այն նպատակով, որ ստիպէ դաստիարակուողին իւրացնելու որոշ անհատական բարոյական սովորութիւններ (нравственная привычка) (ասում ենք՝ նորան կեղծաւոր, աւազակ կամ բարի մարդ են դաստիարակել։ Սպարտացիները դաստիարակում էին սրտոտ մարդիկ, ֆրանսիացիները դաստիարակում են միակողմանի և ինքնագոհ մարդիկ)։ Դասաւանդութիւնն այն է, որ մի մարդ միւսին տեղեկութիւններ է տալիս (կարելի է դաս տալ ճատրակ (շախմատ) խաղալ, պատմութիւն, կօշկակարութիւն։ Ուսուցումը, դասաւանդութեան մի տարբեր կողմը այն ազդեցութիւնն է, որ մի մարդ ունենում է միւսի վրայ այն նպատակով, որ ստիպէ աշակերտին իւրացնելու որոշ ֆիզիքական անհատական սովորութիւններ (սովորեցնել երգել, հիւսնութիւն անել, պարել, թիավարել, անգիր արտասանել)։ Ուսուցումն ու դասաւանդութիւնը կրթելու միջոցներն են, երբ ազատ են. դաստիարակութեան միջոցներ՝ երբ սովորեցնելը բռնի է, իսկ դասաւանդութիւնը սահմանափակ, այսինքն աւանդւում են միայն այն առարկաները, որ դաստիարակողը կարևոր է համարում։ Ճշմարտութիւնը պարզ է և բնազդաբար յայտնւում է իւրաքանչիւրին։ Ինչքան էլ աշխատելու

լինինք անչափելին միացնել ձուլել, անբաժանելին ստորաբաժանել և գաղափարները համապատասխանել տալ գոյութիւն ունեցող իրերին,—ճշմարտութիւնն ակներև կըմնայ։

Դաստիարակութիւնն այն ստիպողական ու բռնի ազդեցութիւնն է, որ մի անձնաւորութիւն ունենում է միւսի վրայ այն նպատակով, որ կրթէ այնպիսի մարդ, որ մեզ լաւ է թւում. իսկ կրթութիւնը մարդկանց այն ազատ յարաբերութիւնն է, որի հիմունքն է մէկի տեղեկութիւններ ձեռք բերելու պահանջը, իսկ միւսի պահանջն է արդէն նորա ձեռք բերածը հաղորդելը։ Դասաւանդութիւնը, Unterrihtը, միջոց է ինչպէս կրթութեան, այնպէս և դաստիարակութեան։ Դաստիարակութեան և կրթութեան տարբերութիւնը միայն բռնութիւնն է, որ դաստիարակութիւնն իւր իրաւունքն է համարում։ Դաստիարակութիւնը բռնի կրթութիւնն է։ Կրթութիւնն ազատ է։

Դաստիարակութիւն, ֆրանսերէն èducation. անգլիերէն education, գերմաներէն Erziehung բառերն այնպիսի գաղափարներ են, որոնք գոյութիւն ունին Եւրոպայում, իսկ կրթութիւնն (образованie) այնպիսի հասկացողութիւն է, որ միայն Ռուսաստանում գոյութիւն ունի և մասամբ Գերմանիայում,. որտեղ գոյութիւն ունի գրեթէ համապատասխան բառ՝ Bildung։ Իսկ Ֆրանսիայում և Անգլիայում այս գաղափարն ու բառը ամենևին չկան։ Civilisationը լուսաւորութիւնն (просвѣщенie) է, instructionը եւրոպական այնպիսի հասկացողութիւն է, որ ռուսերէն չէ թարգմանւում և նշանակում է դպրոցական գիտական տեղեկութիւնների հարստութիւն կամ այս տեղեկութիւնները հաղորդելը, բայց ոչ կրթութիւն, որ պարունակում է և՛ գիտական ծանօթութիւններ, և՛ արուեստներ և՛ ֆիզիքական զարգացում։

Ժ. Ը.

Լ. Ն. Տոլստոյ։

(Շարունակելի)

Կաթի թթուութիւնը եւ նորա հետազօտելն ու խարդախելը *).

Կաթի խարդախելը. *Սովորաբար կաթը խարդախում են երեք կերպ. կամ մէջը ջուր են խառնում, կամ սերը քաշում, վերցնում են, թէպէտ երբեմն երկու գործողութիւնն էլ միաժամանակ է տեղի ունենում և կամ կողմնակի նիւթեր են խառնում: Իւղագործութեան և պանրագործութեան մէջ մարդս գործ է ունենում միայն առաջին երկուսի հետ: Որովհետև կաթը շատ տեսակ նիւթերից է բաղկացած, այդ պատճառով հեշտութեամբ չի կարելի որոշ կերպով իմանալ նորա խարդախած լինելը:*

Կաթի մէջ ջուր լինել կամ չլինելը որոշելու համար մի շատ հասարակ և միևնոյն ժամանակ յարմար միջոց կայ: Վեր են առնում մի մաս (քաշ) կաթ և երկու մաս 90^{0} *սպիրտ. այդ երկուսը լցնում են մի տեսակ ապակեայ ամանների* (пробирка) *մէջ, որ ծախում են դեղատներում և դեղատան պահեստներում և* 5-8 *րոպէ շարունակ հարում են այդ խառնուրդը: Յետոյ այդ խառնուրդը դատարկում են մի ապակեայ ափսէի մէջ և դիտում. եթէ կաթի մէջ խառնուրդ չի եղել, սպիրտի ներգործութիւնից կաթի բաղադրիչ մասերից մէկը՝ պանրածինը կսկսի մակարդուել և կաթի ու սպիրտի խառնուելուց* 40—50 *րոպէ անցնելուց յետոյ կդոյանան մանրիկ քուլաներ. բայց եթէ կաթի մէջ ջուր լինի, այդպիսի քուլաների կազմուելը ուշանում է և որքան շատ ջուր խառնուած լինի, այնքան աւելի ուշ երևան կգան քուլաները, այնպէս, որ եթէ կաթի հետ կէսը ջուր է խառնած, քուլաները կարող են երևալ միայն փորձի ենթակայ կաթի և սպիրտի խառնուելուց կէս ժամ յետոյ:*

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ջուր աւելացնելով, նոյնպէս և սերը քաշելով պակասում են կաթի մէջ եղած ճարպը և պինդ նիւթերը, այդ պատճառով հեշտ կարելի է իմանալ, թէ արդեօք կաթը խարդախած է, թէ ոչ, եթէ միայն կարողանանք որոշել առհասարակ կաթի մէջ եղած յիշեալ նիւթերի քանակութիւնը: Բայց շատ անգամ այս միջոցը նպատա-

---

*) Տես Արարատ Ապրիլ 1904:

կէն չէ համում, որովհետև զանազան չխարդախած, անարատ կաթերը իրենց մէջ միատեսակ անփոփոխ քանակութեամբ պինդ նիւթեր և ճարպ չեն պարունակում:

Այս տեսակէտից կաթը հետազօտելու համար մեծ նշանակութիւն ունի նրա տեսակարար կշիռ որոշելը. Նախ որ ամենից աւելի տեղի ունեցող խարդախութիւնը՝ կաթի հետ ջուր խառնելը, փոփոխում է նրա տեսակարար կշիռը այնքան զգալի կերպով, որ շատ անգամ իսկոյն և եթ աչքի է ընկնում և կարիք չի լինում խարդախութիւնը որոշելու համար հետազօտել կաթի պինդ նիւթերը և ճարպը և երկրորդ, որ տեսակարար կշիռը իմանալը և միաժամանակ կաթի մէջ եղած պինդ նիւթերի և ճարպի քանակութիւն որոշելը հնարաւորութիւն է տալիս իմանալու կաթի բաղադրութիւնը և նրա յատկութիւնը:

Անխառն, երես չքաշած կաթի տեսակարար կշիռն երբէք չէ կարող 1,029-ից պակաս և 1,039-ից աւելի լինել. միջին հաշուով կարող ենք ընդունել 1,031 գրամ: Այս նշանակում է, որ եթէ մի լիտր մաքուր 4° տաքութիւն ունեցող ջուրը (աւելի ճիշտն սառած թորած ջուրը) կշռում է 1000 գրամ, նոյն ծաւալ ունեցող անքաշ, անարատ կաթը կկշռէ 1031 գրամ: Այսպիսով ուրեմն կաթը ջրից ծանր է և հէնց այդ է պատճառը, որ եթէ ջրի մէջ մի կաթիլ կաթ ձգենք, կիջնի տակը:

Եթէ վեր առնենք 1,031 տեսակարար կշիռ ունեցող մաքուր, չխարդախած կաթ և աւելացնենք վրան 10% ջուր, կտեսնենք, որ տեսակարար կշիռը պակասում է և իջնում մինչև 1,0273: Եթէ մի տեսակ կաթի տեսակար կշիռը 1,031 է, այն ժամանակ մի լիտրը[1] կքաշէ 1,031 գրամ և եթէ դրա վրայ աւելացնենք 10% ջուր[2], որ քաշում է 100 գրամ, ամբողջ խառնուրդը (1100 խոր. սանտ.) կքաշէ 1131 գրամ: Եւ որովհետև 1,131 գրամ ծանրութիւնը բաժանած ծաւալի վրայ (1100 խոր. սանտ.) ստացւում է կաթի տեսակարար կշիռը, այդ պատճառով վերջինը արտայայտւում է 1,0282 թուանշանով: Այսպիսի պակաս տեսակարար կշիռ ունեցող կաթը բացառութիւն է կազմում. պէտք է կասկածելի համարել և հետազօտութեան ենթարկել: Եթէ կաթի մէջ 25% ջուր է խառնած, շնորհիւ այդ հանգամանքի տեսակարար կշիռը պակասում է մինչև 1,0248. հէնց այս թիւն արդէն ցոյց է տալիս, որ կաթի հետ ջուր է խառնած: Բայց եթէ կաթի տեսակարար կշիռը

1) Մի լիտրը=1000 խոր. սանտ.
2) 10% ջուրը=100 խոր. սանտ.

հէնց սկզբից հաւասար է 1,033-ի փոխանակ 1,031-ի, այդ դէպքում $10^0/_0$ ջուր աւելացնելով կաթի վրայ, նրա տեսակարար կշիռը հաւասար կլինի 1,030-ի, իսկ $25^0/_0$ աւելացնելիս՝ 1,024։ Միայն վերջին դէպքում գուցէ կարելի լինի նկատել, թէ կաթի հետ ջուր է խառնած. առաջին դէպքում, երբ տեսակարար կշիռը 1,030-ի է հաւասար, առանց հետազօտութեան դժուար է այդ բանն իմանալ։ Առհասարակ 1,025-ից պակաս տեսակարար կշիռ ունեցող կաթի համար համարձակ կարելի է ասել, որ խարդախած է։

Դուրս բերելով կաթի միջից նրա ամենաթեթև բաղադրիչ մասը՝ սերը կամ աւելի ճիշտն ասած ճարպը, մենք այդպիսով բարձրացրած կլինինք կաթի տեսակարար կշիռը։ 1,031 տեսակարար կշիռ ունեցող կաթի մի լտրի մէջ 34 գրամ ճարպ կլինի, որ հաւասար է $3,4^0/_0$. այդ 34 գրամը 0,93 տեսակարար կշիռ ունեցած դէպքում 36,6 խոր. սանտ. ծաւալ կունենայ։ Մի լիտր կամ 1000 խոր. սանտ. կաթը, որ կշռում է 1,031 գր., պարունակում է իւր մէջ 36, 6 խոր. սանտ. ճարպ, որ քաշում է 34 գրամ. ճարպից զուրկ կաթը կունենայ 963,4 խոր. սանտ. ծաւալ և 997 գրամ ծանրութիւն, որով և ճարպից զրկուած կաթը կունենայ 1,0348 տեսակարար կշիռ։ Եթէ կաթից սերը մաս-մաս քաշելով նրանից $1^0/_0$ ճարպ վերցնենք, այն ժամանակ 34 գր. ճարպ պարունակող մի լիտր (1,000 խոր. սանտ.) կաթից կմնայ 24 գրամ ճարպ պարունակող 950 խոր. սանտ. կաթ։ 24 գրամ ճարպը 25, 8 խոր. սանտ. ծաւալ է ունենում, այնպէս որ ճարպազուրկ կաթին մնում է 924, 2 խոր. սանտ. ծաւալ՝ 956, 4 գրան ծանրութեամբ (հաշուելով վերջինիս տեսակարար կշիռը 1,0348)։ Այդպիսով վերոյիշեալ կերպով սերը վերցնելուց յետոյ մնացած 950 խոր. սանտ. կշռում է 24+956,4=980,4 գր., որով տեսակարար կշիռը հաւասար կլինի 1,0320։

Սերը քաշելուց կաթի տեսակարար կշիռը համեմատաբար շատ չէ փոխւում, քիչ բարձրանում է. բայց եթէ վրան ջուր աւելացնենք, տեսակարար կշիռը կրկին կպակասի։ $1^0/_0$ վերցրած ճարպի փոխարէն եթէ $4^0/_0$ ջուր աւելացնենք, կարելի է մօտաւորապէս վերականգնել կաթի սկզբնական տեսակարար կշիռը։

Կաթի տեսակարար կշիռը որոշելու համար գործ է ածւում կաթնախտաչափ կամ կաթնաչափ (лактоденсиметръ) կոչուած գործիքը։ Աւելի գործածական է Կեվեննի կաթնախտաչափը։ Այդ գործիքն ամբողջապէս 22 սանտ. երկարութիւն

ունի և բաղկացած է գլանաձև մի ձողից, որի ներքևի մասում գտնւում է մի ծանր գունտ, իսկ վերին ծայրում 6 միլ․ լայնութեամբ ապակեայ մի նեղ խողովակ, որի վրայ նշանակուած են բաժանմունքներ, աստիճաններ։ Տեսակարար կշիռ-ցոյց տուող աստիճանները սկսում են վերևի ծայրից, ուր նշանակուած է 14, որի շարունակութիւնը վերջանում է ներքևում այնտեղ, ուր նշանակուած է 42, որ համապատասխանում է 1,042 աստիճան տեսակարար կշռի։ Աստիճանները մէկ մէկուց 2 միլ․ հեռու են գտնւում, այնպէս որ առանց դժուարութեան կարելի է միջները կէս աստիճաններ ևս նշանակել։ Կողքերին նշանակուած են նաև ուրիշ թուանշաններ, որոնցով որոշւում է թէ խառնուած է ջրով 1/10, 2/10, 3/10 և այլն։

Այս գործիքը պէտք է գործածել հետևեալ կերպով․ հարկաւոր է վերցնել առաջուց լաւ խառնած կաթից և լցնել մի երկայնաձև սրուակի մէջ այնքան, մինչև որ կաթը ամանի կողքերից վայր թափուի, որպէս զի փրփուր չգոյանայ, որովհետև փրփուրը խանգարում է աստիճանների որոշելը, որից յետոյ հանգարտ կերպով կաթնախտաչափը պէտք է պտտուող շարժումներով ընկղմել կաթի մէջ մօտաւորապէս մինչև 30 աստիճանը․ մի կամ երկու րոպէ անցնելուց յետոյ ինկատուի գործիքի երկայնութեան վրայ կաթի մակերևոյթին համապատասխան եղող աստիճանը։ Աւելի ճիշտ կերպով տեսակարար կշիռը որոշելու համար պէտք է աչքի առաջ ունենալ այն հանգամանքը, որ կաթը կաթնախտաչափի պատերին կպչելով, նորա մակերևոյթը քիչ աւելի բարձր կլինի կանգնած, այդ պատճառով էլ տեսակարար կշիռը քիչ աւելի ցած է երևում մեր աչքին, քան իսկապէս է։ Եթէ կաթնախտաչափը ընկղմած կաթի մէջ 32 աստիճան ցոյց տայ, նշանակում է որ կաթի տեսակարար կշիռը 1,032-է։

Կթելուց անմիջապէս յետոյ կաթի տեսակարար կշիռը 1/2-1 աստիճան աւելի ցած է, քան մի քանի ժամ մնացածինը։

Կաթնախտաչափով կաթը փորձելիս շատ կարևոր է ճիշտ կերպով որոշել կաթի բարեխառնութեան աստիճանը․ տաքութիւնից նա լայնանում է, կաթնախտաչափը աւելի է խորասուզւում և այդ պատճառով էլ աւելի ցած տեսակարար կշիռ է ունենում, քան սառնութեան մէջ եղածը, երբ սովորաբար կաթը սեղմւում, կուչ է գալիս և կաթնախտաչափը աւելի քիչ է խորասուզւում և աւելի բարձր տեսակարար կշիռ է ցոյց տալիս։ Որպէս զի կաթնախտաչափով կատարած այլ և այլ փորձերը կարելի լինի համեմատել իրար հետ, հարկաւոր է որոշել

մի ընդհանուր կանոնաւոր բարեխառնութիւն կաթի համար․ այդպիսի բարեխառնութիւն պէտք է համարել 15⁰ Ռ., որ շատ անգամ հաւասար է լինում արտաքին օդի բարեխառնութեան և այսպիսի ժամանակ կաթնախտաչափի ցոյց տուած աստիճանը համարւում է կաթի ճիշտ տեսակարար կշիռը։ Բայց եթէ արտաքին օդի տաքութիւնը 15⁰ չլինի, այն ժամանակ կաթնախտաչափի ցոյց տուած աստիճանը պէտք է ուղղել յետագայ երկու ուղղիչ աղիւսակներով, որոնցից մէկը անխառն, երես չքաշած կաթի համար է, իսկ միւսը երես քաշածի։

ԿԱԹՆԱԽՏԱՉԱՓԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ.

Երեսը չքաշած կաթ.

	10^0	11^0	12^0	13^0	14^0	15^0	16^0	17^0	18^0	19^0	20^0
21	20.3	20.4	20.5	20 6	20.8	21.	21.2	21.4	21.6	21.8	22
22	21.3	21.4	21.5	21.6	21.8	22.	22.2	22.4	22.6	22.8	23
23	22.3	22.4	22.5	22.6	22.8	23.	23.2	23.4	23.6	23.8	24
24	23.3	23.4	23.5	23.6	23.8	24.	24.2	24.4	24.6	24.8	25
25	24.2	24.3	24.5	24.6	24.8	25.	25.2	25.4	25.6	25.8	26
26	25.2	25.3	25.5	25.6	25.8	26.	26.2	26.4	26.6	26.9	27.1
27	26.2	26.3	26.5	26.6	26.8	27.	27.2	27.4	27.6	27.9	28.2
28	27.1	27.2	27.4	27.6	27.8	28.	28.2	28.4	28.6	28.9	29.2
29	28.1	28.2	28.4	28.6	28.8	29.	29.2	29.4	29.6	29.9	30.2
30	29	29.2	29.4	29.6	29.8	30.	30.2	30.4	30.6	30.9	31.2
31	30	30.2	30.4	30.6	30.8	31.	31.2	31.4	31.7	32.	32.3
32	31	31.2	31.4	31.6	31.8	32.	32.2	32.4	32.7	33.	33.3
33	32	32.2	32.4	32.6	32.8	33.	33.2	33.4	33.7	34.	34.3
34	32.9	33.1	33.3	33.5	33.8	34.	34.2	34.4	34.7	35.	35.3
35	33.8		34.2	34.4	34.7	35.	35.2	35.4	35.7	36.	36.3

Երեսը քաշած կաթ.

	10^0	11^0	12^0	13^0	14^0	15^0	16^0	17^0	18^0	19^0	20^0
25	24.3	24.4	24.5	24.6	24.8	25	25.1	25.2	25.4	25.5	25.8
26	25.3	25.4	25.5	25.6	25.8	26	26.1	26.3	26.5	26.7	26.9

27	26. 3	26. 4	26. 5	26. 6	26. 8	27	27. 1	27. 3	27. 5	27. 7	27. 9
28	27. 3	27. 4	27. 5	27. 6	27. 8	28	28. 1	28. 3	28. 5	28. 7	28. 9
29	28. 3	28. 4	28. 5	28. 6	28. 8	29	29. 1	29. 3	29. 5	29. 7	29. 9
30	29. 3	29. 4	29. 5	29. 6	29. 8	30	30. 1	30. 3	30. 5	30. 7	30. 9
31	30. 3	30. 4	30. 5	30. 6	30. 8	31	31. 2	31. 4	31. 6	31. 8	32
32	31. 3	31. 4	31. 5	31. 6	31. 8	32	32. 2	32. 4	32. 6	32. 8	33
33	32. 3	32. 4	32. 5	32. 6	32. 8	33	33. 2	33. 4	33. 6	33. 8	34
34	33. 3	33. 4	33. 5	33. 6	33. 8	34	34. 2	34. 4	34. 6	34. 8	35
35	34. 2	34. 3	34. 4	34. 6	34. 8	35	35. 2	35. 4	35. 6	35. 8	36
36	35. 2	35. 3	35. 4	35. 6	35. 8	36	36. 2	36. 4	36. 6	36. 9	37. 1
37	36. 2	36. 3	36. 4	36. 6	36. 8	37	37. 2	37. 4	37. 6	37. 9	38. 1
38	37. 2	37. 3	37. 4	37. 6	37. 8	38	38. 2	38. 4	38. 6	38. 9	39. 2
39	38. 2	38. 3	38. 4	38. 6	38. 8	39	39. 2	39. 4	39. 6	39. 9	40. 2
40	39. 1	39. 2	39. 4	39. 6	39. 8	40	40. 2	40. 4	40. 6	40. 9	41. 2

Այս աղիւսակներից շատ հեշտ կերպով կարելի է օգտուել: Առաջին ուղղահայեաց շարքում դասաւորուած են կաթի խտութեան աստիճանները, իսկ հորիզոնական ուղղութեամբ դասաւորուած են զանազան տեսակ կաթերի տաքութեան աստիճանները ցոյց տուող թուանշանները: Կաթի ճիշտ խտութեան աստիճանը կամ տեսակարար կշիռը գտնելու համար պէտք է նախ գտնել կաթի խտութեան մօտաւոր աստիճանը և ապա տաքութեան աստիճանը. այդ երկուսի ուղղութեամբ առաջ գնալով կպատահի մի թիւ, որ ճիշտ կերպով որոշում է խտութեան աստիճանը: Այսպէս օրինակ, ենթադրենք թէ երես չքաշած կաթի տեսակարար կշիռն է 1029 *և կամ աւելի համառօտ ասած* 29 *աստիճան, իսկ բարեխառնութիւնը* 20^0. *այն ժամանակ իսկական տեսակարար կշիռը* 15^0 *ջերմութեան մէջ հաւասար կլինի* 1,0302 *կամ* 30,2 *աստիճանի: Եթէ փորձելու ենթակայ կաթը, ընդհակառակը, միայն* 10^0 *տաքութիւն ունի, իսկ կաթնախտաչափը ցոյց է տուել* 31 *աստիճան, այն ժամանակ տեսակարար կշիռը հաւասար կլինի* 1,030 *կամ* 30 *աստիճանի: Երես քաշած կաթի հետ պէտք է վարուել այսպէս. իւրաքանչիւր* 5^0 *մէջ տեսակարար կշիռի բարեխառնութեան տարբերութիւնը հաւասար է* 0,001 *կամ կաթնախտաչափի մէկ աստիճանին. այլ կերպ ասած իւրաքանչիւր* 5^0 *աւելին բարձրացնում է կաթի տեսակարար կշիռը մի աստիճանով և ընդհակառակը: Եթէ առանձին ճշտութիւն չէ պահանջւում, կարելի է և առանց այս աղիւսակների գործ տեսնել: Աղիւսակները կազմած են մինչև* 20^0 *բարեխառնութեան համար և կաթնախտաչափով երես չքաշած կաթի տեսակարար կշիռը ցոյց տալու համար մինչև* 35, *երես քաշածի*

համար մինչև 40 աստիճանը. առհասարակ տեսակարար կշիռը պէտք է որոշել կանոնաւոր բարեխառնութեան, այն է 15⁰-ի մէջ և ոչ երբէք 20⁰-ից բարձր և 10⁰ պակաս ջերմութեան մէջ, հակառակ դէպքում դժուար կլինի ճիշտ որոշելը։

Երբեմն կաթնախտաչափերը անհոգ կերպով են շինուած լինում, այդ պատճառով էլ էժան են լինում: Այդպիսի կաթնախտաչափերին չէ կարելի վստահել. պէտք է ստուգել որ և է հմուտ մասնագէտի ձեռքով։

Սովորաբար կաթնախտաչափի ցոյց տուած աստիճանը միայն բաւական չէ հեշտ կերպով ստուգելու համար, թէ արդեօք կաթի հետ ջուր խառնած է, թէ ոչ. երբեմն այս խարդախութիւնը ծածկելու համար նորա հետ սեր են խառնում. քննողը միայն այն ժամանակ ճիշտ հետևանքների կհասնի, երբ կամենայ կասկածաւոր համարուած կաթը փորձով համեմատել նոյն տեղից ստացուած անխառն, երես չքաշած կաթի հետ, կամ համեմատելով կասկածելի համարուած կաթի տեսակարար կշիռը երես քաշած կաթի հետ։ Եթէ միայն սերն է վերցրած, երկու տեսակ կաթի տեսակարար կշիռների տարբերութիւնն աննշան կլինի, բայց եթէ սերը վերցնելուց յետոյ կաթի վրայ ջուր աւելացրած լինի, ինչպէս վերևը տեսանք, կասկածելի կաթի տեսակարար կշիռը սովորական չափի մէջ կլինի. Նոյն կաթի տեսակարար կշիռը, սերը կրկին վերցնելուց յետոյ, կգտնուի երես քաշած կաթի տեսակարար կշիռը ցոյց տուող աստիճանից ցած։

Կարևոր է ի նկատի ունենալ, որ կաթի աւելի կամ պակաս տեսակարար կշիռ ունենալուց չէ կախուած նորա մէջ եղած այս կամ այն նիւթի (ճարպի, պանրածինի) աւելի կամ պակաս հարստութիւնը, որովհետև կարող է պատահել որ պակաս տեսակարար կշիռ ունեցող կաթը հարուստ լինի ճարպով և պանրածինով և ընդհակառակը, բարձր տեսակարար կշիռ ունեցող կաթը իւր մէջ համեմատաբար աւելի պակաս քանակութեամբ պարունակէ յիշեալ նիւթերից: Այսպէս օրինակ, շատ ճարպ, նոյն իսկ պանրածին պարունակող կաթը պակաս տեսակարար կշիռ կունենայ, որովհետև ճարպը ջրից թեթև լինելով պակասեցնում է կաթի տեսակարար կշիռը:

Առհասարակ կաթը քննելիս պէտք է ուշադրութիւն դարձնել ոչ միայն նորա տեսակարար կշռի, այլ և արտաքինի, գոյնի, հոտի և համի վրայ:

Ի՞նչպէս պէտք է իմանալ, թէ կաթի հետ այլ եւ այլ նիւթեր են խառնած. *Կաթի հետ երբեմն խառնում են ալրաջուր, կրախմալ*

և այլն։ Այս խառնուրդները որոշելու համար պէտք է վարուել այսպէս. հարկաւոր է վեր առնել արաղի մի փոքրիկ բաժակով տաք կաթ, նորա մէջ 5—6 կաթիլ քացախ լցնել. կաթը կոկոն մակարդուել զգուշութեամբ թէյի գդալով կաթը խառնելուց յետոյ ամբողջ լաւ լաւ դարձածը պէտք է հաւաքել ու դուրս ձգել։ Փոքրիկ բաժակի մէջ կմնայ շիճուկը, որը և փորձի պէտք է ենթարկել։ Շիճուկի վրայ պէտք է աւելացնել մի կաթիլ մա-նիշկի (тинктура іода) լուծուածք և եթէ կաթի հետ կրախմալ չէ խառնած, շիճուկը դեղին գոյն կստանայ (յեօդի գոյն), իսկ եթէ նման նիւթերի խառնուրդ կայ, այն ժամանակ հեղուկը ներ-կւում է կապոյտ գոյնով։ Այս փորձը ուղղակի կաթի հետ կա-տարելը անյարմար է, որովհետև կաթի սպիտակ գոյնը երբեմն ծածկում, խանգարում է ներկուելը, գոյների առաջ գալը. այս պատճառով աւելի լաւ կլինի ամէն անգամ կաթը առաջուց քացախով մակարդել։

Հում եւ եփած կաթի տարբերութիւնը. Այս նպատակով Ար-նոլդը առաջարկում է գաղղիական փայտի գունաւոր լուծուածք (бакаутовая тинктура), որի քանակութիւնը չպէտք է իբրև օրի-նակ վերցրած կաթի $10^0/_0$-ից պակաս լինի։ Այդ լուծուածքի աւելացնելովը հում կաթը ներկւում է կապոյտ գոյնով. ներ-կուելը արագ է կատարւում. 20—30 վայրկեան անցնելուց յե-տոյ եփած կաթը ներկւում է մութ-դեղնաւուն (грязновато-желтый) գոյնով։ Այդ հակաազդեցութեան շնորհիւ կարելի է որոշել նաև եփած և հում կաթի իրար հետ խառնուած լինելը, որովհետև եփած կաթը շուտով չի ներկւում, մօտաւորապէս մի ժամ է հարկաւորւում։ Եթէ եփած կաթի հետ $15^0/_0$ հում կաթ խառնուի, 30—50 րոպէում տեղի կունենայ ներկուելը, $25^0/_0$ հում կաթ խառնելով՝ 11—15 րոպէում տեղի կունենայ այդ, $^1/_3$ հում կաթի և $^2/_3$ եփած կաթի խառնուրդը կներկուի 6—10 րոպէում։ Վերջապէս հաւասարաչափ քանակու-թեամբ ինչպէս հում, նոյնպէս և եփած կաթի խառնուրդը հա-կաազդեցութիւն է ունենում (կապտաւուն գոյն է ստանում) 1—2 րոպէից յետոյ։

Կաթից սեր զատելը.

Կաթից սեր զատելու ընդհանուր պայմանները. Կաթը մի քանի ժամ շարունակ մնալով հանգարտ վիճակի մէջ, նորա ճարպային մասնիկները՝ գնտակիկները իրենց թեթևութեան պատճառով

բարձրանում են վերև և սկսում լողալ նորա երեսին ու կազմում ճարպային մի թանձր շերտ, որ կոչւում է սեր: *Կաթի միջի ճարպային գնտակիկները կատարելապէս բաժանւում են կաթից և երեսին սեր կազմում միայն այն ժամանակ, երբ նրանք բոլորովին ազատ կերպով կարողանում են շարժուել կաթի մէջ: Բայց գնտակիկները վերև բարձրանալիս ճանապարհին կրկնակի արգելքների են հանդիպում. առաջին արգելքն է նրանց կպչող և կաթի միւս բաղադրիչ մասերից կազմուած (աւելի տեսակարար կշիռ ունեցող) թաղանթը. երկրորդը՝ փքուած պանրածինն է, որ խտացնելով կաթը, դանդաղեցնում է գնտակիկների երես բարձրանալը և նոյն իսկ շատ անգամ բոլորովին արգելք է դառնում: Կաթի երես բարձրանում են նախ խոշոր ճարպային գընտակիկները և ապա մանրերը, և որչափ մանր լինեն գնտակիկները, այնքան աւելի ընդդիմութեան կհանդիպեն կաթի երես բարձրանալիս: Այսպիսով մանրիկ գնտակիկների մի մասը մնում է կաթի մէջ այս ու այն կողմ ցրիւ եկած: Սրանից կարելի է հետևցնել, որ երես քաշած կաթի մէջ եղած գնտակիկները համարեա առանց բացառութեան պատկանում են մանրիկների կարգին:*

Մեզանում՝ Կովկասում շատ տեղեր կթած կաթը լցնում են ամանների մէջ և զով տեղ թողնում, մինչև որ սերն ինքնիրեն բարձրանայ կաթի երես. յետոյ այդ սերը հաւաքում են և խնոցու մէջ հարելով՝ պատրաստում կարագ: Այս եղանակով կարագ ստանալն ունի իւր թերութիւնները, որովհետև ճարպային գնտակիկների մի մասը մնում է կաթի մէջ:

Հանգիստ վիճակի մէջ գտնուող կաթի ճարպային գնտակիկների ազատ շարժուելու, և երես բարձրանալու վրայ աղդում են հետևեալ հանգամանքները:

1. **Կաթի յատկութիւնը եւ նրանում եղած ճարպը.** *Որովհետև ամէն տեսակ կաթի մէջ պանրածինը միակերպ փքուած-տարածուած չէ լինում և որովհետև դրանից առաջացած կաթի թանձրութիւնը արգելք է դառնում ճարպային գնտակիկների ազատ շարժողութեանը, դորա համար էլ տարբեր տեսակ կաթերի մէջ կաթնային գնտակիկների երես բարձրանալը միակերպ չէ կատարւում նոյն իսկ այն դէպքում, երբ միւս պայմանները (բարեխառնութիւնը, ճարպի քանակը և այլն) նոյնն են:*

Որքան թանձր լինի կաթը, այնքան աւելի արգելքների կպատահեն գնտակիկները վերև բարձրանալիս և ընդհակառակը: Հանդարտ վիճակի մէջ թողած ոչ թանձր կաթի ոչ միայն ճարպային մասնիկներն են արագ կերպով վերև բարձրանում, այլ և

սերի մէջ ընկնում են այն մանր կաթնային գնտակիկները, որոնք թանձր, մածուցիկ կաթի մէջ անկարող են լինում վերև բարձրանալ և այս պատճառով էլ սերն աւելի կատարելապէս է բաժանւում և ճարպի քանակութիւնն աւելի մեծ է լինում։

2. **Կաթի տաքութիւնը.** Կաթի երեսը սեր կապելու վրայ մեծ ազդեցութիւն է ունենում նաև կաթի տաքութիւնը։ Եթէ մենք աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ տաքութեան պակասելովը կաթն աւելի թանձրանում է և մանաւանդ որ ճարպային գնտակիկները, որքան կաթը թանձր լինի, այնքան աւելի դանդաղ են շարժւում, բոլորովին հասկանալի կլինի մեզ համար, որ ճարպը այնքան աւելի հեշտ կբաժանուի կաթից, որքան բարձր է կաթի տաքութեան աստիճանը, մանաւանդ որ գնտակիկները տաքութիւնից լայնանալով՝ աւելի հեշտութեամբ վերև կբարձրանան։ Այս կանոնը վերաբերում է ինչպէս հին եղանակներով, նոյնպէս և նորագոյն կենդրոնախոյս սեպարատոր մեքենաներով սեր զատելուն։ Յայտնի է նաև, որ տաք կաթն այնչափ կպչուն չի լինում, ինչպէս սառը կաթը, որով ճարպային գնտակիկները քիչ ընդդիմութիւն կրելով, շուտով բարձրանում են կաթի երես և իրենց հետ տանում միաժամանակ պանրածին և այլ նիւթեր, որոնցից կազմւում է սերը։ Տաքութիւնն ազդում է ինչպէս սերի, նոյնպէս և երես քաշած կաթի մէջ մնացած ճարպի քանակութեան վրայ։ Այդ ազդեցութիւնն արտայայտւում է նրանով, որ միւս համանման պայմաններում որոշ ժամանակուայ ընթացքում սերի մէջ այնքան աւելի ճարպ կհաւաքուի, որքան աւելի բարձր լինի տաքութիւնը սերը զատելիս։

3. **Ժամանակի ազդեցութիւնը.** Թէպէտ ընդհանրապէս սերի մէջ այնքան աւելի ճարպ կլինի, որքան աւելի երկար ժամանակ նա փռուած կմնայ, սակայն սկզբում սովորաբար աւելի շատ ճարպ է բարձրանում կաթի երես, քան յետոյ և որքան առաջ գնայ, այնքան աւելի և աւելի կսկսէ պակասել բարձրացող ճարպային գնտակիկների թիւը։ Որպէս զի կաթի միջի ամբողջ սերը երես բարձրանայ, շատ ժամանակ կհարկաւորուի, բայց որովհետև այդքան երկար ժամանակ կաթը փռուած պահելն անհնարին է փչանալու պատճառով, ուստի և անհնարին է կաթի միջից ամբողջ սերը զատելը։ Նկատուած է, որ ցած տաքութեան մէջ կազմուած սերի թանձր շերտի մէջ աւելի քիչ ճարպ կգտնուի, քան նոյնքան ժամանակում բարձր տաքութեամբ կազմած բարակ շերտի մէջ. և առհասարակ տաքութեան բար-

ձրանալուն թէպէտ սակաւ քանակութեամբ, բայց ճարպով աւելի հարուստ սեր կստացուի:

Ճարպը բարձրանում է սերի մէջ.

Սկզբի 8 ժամից յետոյ	43,5$^0/_0$	1 ժ.=5,44$^0/_0$
Հետևեալ 8 » »	11,5 »	1 ժ.=1,44$^0/_0$
» 12 » »	11,4 »	1 » =0,96$^0/_0$
» 12 » »	6,7 »	1 » =0,56 »

40 ժամուայ ընթացքում 73,1$^0/_0$, 1 ժամ=1,83$^0/_0$ մօտ.

Սորա պատճառն այն է, որ խոշոր գնտակիկներն աւելի արագ են բարձրանում, մինչդեռ մանրիկներն աւելի դանդաղ, իսկ ամենամանրները բոլորովին չեն ընկնում կաթի երես՝ սերի մէջ:

4. **Կաթի բարձրութիւնն եւ ամանների ձեւն** ես ազդեցութիւն են ունենում ճարպային գնտակիկների երես բարձրանալու վրայ և որքան կարճ լինի այն ժամանակամիջոցը, որի ընթացքում գնտակիկները հասնում են կաթի երես, այնքան աւելի սեր կբռնէ կաթի երեսը: Սրանից հետևում է, որ սեր բռնելու համար աւելի նպատակայարմար են լայն և տափակ, քան խոր ամանները:

Ամանների ինչ նիւթից (մետաղից, փայտից, կաւից և այլն) պատրաստելն ինքն ըստ ինքեան ոչ մի նշանակութիւն չունի սերակազմութեան վրայ: Բնական եղանակով, այսինքն կաթն երկար ժամանակ հանդարտ թողնելով, սեր զատելու համար յարմար է ճանաչուած 10—15^0 տաքութիւնը, միայն կաթը մինչև 12 ժամ պէտք է թողնել տափարակ ամանների մէջ: Այդ ամանները կարող են լինել փայտեայ, մետաղեայ, կաւեայ: Ամենայարմարաւորը են ճանաչուած թիթեղեայ, ապա արծնապատած ամանները. սրանցով կաթը շուտ է սառչում և եթէ կաթի շերտը հաստ չէ, շատ շուտով երեսը կատարելապէս սեր կբռնէ: Այսպիսի ամաններ մաքրելու համար պէտք է լուանալ տաք ջրով և սապոնով, բայց ոչ երբէք աւազով: Փայտեայ ամանները դժուարութեամբ են մաքրւում, իսկ պղնձեայ ամանները նախ պէտք է լաւ կլայեկել և ապա գործ ածել: Կաթի վրայ ջուր կամ աղ աւելացնելը դժուարացնում է նորա երեսին սեր բռնելու գործը: Կաթի եփելն ևս, ինչպէս փորձերը ցոյց են տուել, բնական եղանակով սերակազմութեանը արգելք է դառնում:

(Շարունակելի).

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ»

Վաճառւում է Տփխիսում Կեդրոնական և Գուտտեմբերգ գրավաճառանոցներում, և Երևանում Կ. Գաստամեանցի խանութում. —

Առաջին հատորը 50 *կ.*

Երկրորդ հատորը 1 *ր.*

Գումարով գնողներին զիջում կը լինի տասին՝ երկու, իսկ հարիւրին՝ քսան և հինգ. առանց ճանապարհածախսի։

Դիմել հեղինակին ի Ս. Էջմիածին.

Епископу Бардугимевосу Геворгіанъ.

Архимандритъ Месропъ Теръ-Мовсесянъ, Исторія Перевода Библіи на армянскій языкъ, С. Петербургъ 1902 г. 3 р.

„ “ Раскопки развалинъ церкви св. Григорія близъ Эчміадзина, С. Петербургъ 1903 г. 1 р. 50 коп.

Դիմել հեղինակին ի Ս. Էջմիածին.

1903 թ. Ս. Էջմիածնի տպարանում լոյս են տեսել եւ վաճառւում են.

	Ռ.	Կ.
1. Բանաստեղծութիւններ — Շիլլերի . . .	—	50
2. Ժամագիրք միջակ (կազմած) . . .	2	—
3. Ժամագիրք գրպանի (կազմած) . . .	1	50
4. Մեղուաբուծութիւն Գ. Ղազարեան . .	—	50
5. Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Մկրտչեան . .	—	50
6. Աղէքսանդր մեծ թարգ. Վրթանէս քհ. Մովսիսեան	—	50
7. Հայկականք Գ. Տ. Մկրտչեան	—	50
8. Աստուծուն թէ՞ Մամոնային. թարգ. Մամբրէ վարդ.	—	3
9. Բանաստեղծութիւններ և Կիրակոսի հարսանիքը. գրաշ. Ներսէս Տ. Աւետիքեան	—	50
10. Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի . . .	—	40
11. Մարդուս շա՞տ հող է հարկաւոր թարգ. Վրթանէս քհ. Մարգարեան	—	5
12. Հազար ու մի խաղ. Կոմիտաս վ. և Մ. Աբեղեան	—	10
13. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ. Մամբրէ վարդ.	—	10
14. Էջմիածնի ծոցի օրացոյց 1904 թուականի .	—	15
15. Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան . .	2	—
16. Գելցեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների թարգ. Մեսրոպ վարդապետ	1	—
17. Խոսրովիկ Թարգմանիչ և երկասիրութիւնք, Գարեգին վարդ. Յովսէփեան	1	20

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1904

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է { Ռուսաստանում 4 ռ.
Արտասահմանում 5 ռ.

Խնդրում ենք Արժ. Գործակալներին յայտնել՝ այն բաժանորդների ճիշտ հասցէները՝ հոգեւորական թէ աշխարհական, որոնք կարող են իրենք անմիջապէս կամ մի ուրիշի անունով ծրարներ ստանալ փոստից։ Բոլոր այդպիսիներին «Արարատ»-ը կուղարկուի առանձին ծրարներով եւ առհասարակ նորա ցրումը կանոնաւորելու համար ամեն հոգ կտարուի։

Հասցէն՝ Св. Эчміадзинъ, Типографическому Комитету

Արտասահմանի համար՝ Rédaction de la Revue „Ararat".
Etchmiadzine (Caucase)